



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ulipuf  
702



20





ԱԿՐԵԲ  
702

2009

28 JUN 2005

ԴԵԿԱ-ՀԱՆՈՅ

ար.

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

# ԶՈՀԵՐ

գործ Գրանց Հօֆֆմանի  
թարգմ. գերմաներէնից

203

ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԼԱԼԱՅԵԱՆՑ



Մակագիր.  
Բարեկամ հաւատարիմ հովանաւու-  
րութիւն է հզօր. իսկ որ գտանէ  
զնա՞ գտանէ զգանձ (Սիր. 6, 14):

ՏԱՐՍ ՊԵՏԱԿԵՐՈՎ :

Ա. ԳԵԶԵՐԻ ԲՈՒՐԳԻ:  
Հոհենֆելցենի եւ ընկ. տպարանում պ. Մ. Միանսարեանցի  
տառերով տպած:

1876.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 16 Декабря 1875 г.



702-2009

433/  
41

№ 697

Въ типографії Гогенфельденъ и Ко. (Вас. Остр., 3 л., № 44).

## ԳԼՈՒԽ ԸՆԴԵՐԱԿԱՆ ՆԱԽ:

### ՊԱՏԵՐԱՋՄԱԿԱՆ ՆԱԽ:

Ճի՞ն Անդլիայի հարաւային ափում գտնվումէր, կամ, լաւ ևս ասենք, գտնվումէ այժմ ևս, մի զեղցիկ և մեծ ամրոց, որի ամռը աշտարակները և բոլոր ճարտարապետութիւնը առաջին հայեացքում ցոյց էին տալիս, որ նա արգէն ասպետների ժամանակն էր շինուած: “Կա կառուցած էր մի մեղմութեամբ բարձրացող, ցածր բլրի վերայ, որ մի կողմից ողողվումէր ծովի կապոյտ ալիքներով, իսկ միւս կողմից խոնարհվումէր զէպ ՚ի մի լայն, պտղաբեր հովիտ, որ ամէն գարնան ժամանակ պատած էր լինում խիտ և ճոխաբոյս խոտերի մի հրաշալի գորգով: Ո՞իւս կողմի բլրուները զարդարուած էին բարձրաբուն ծառերի անտառներով, իսկ դոցանից հեռի նոյն հովտի մէջ գասաւորուած էին

Գոքրիկ, բայց շատ քաղցրատեսիլ տեղեր, որոնց կարմիր կատարները ամենասիրուն կերպով արտափայլումէին շրջապատող մրգաբեր այդիների կանաչ տերեների միջով:

Մի պարզ, կարկածահոս աղբիւր արծաթափայլ օձի պէս բազմապատիկ գալարներով ոլորվումէր միանդամայն առաջ և սիրուն դաշտի միջով. և նորա ոստոստուն ալիքների մէջ ցոլանումէին երբեմն մարդի, խոտերը և ծաղիկները, երբեմն երերուն հասկերը որոնք պատումէին ընդարձակ տարածութիւններ, մանաւանդ գիւղերի աւելի մօտ շրջակայքում, երբեմն ծառաստանների մոյդ-կանաչ կատարները, որոնք կարծես թէ զրոյց էին անում ալիքների հետ, երբ մի զովարար հողմի շունչ սուլելով փչումէր նոցա փառաւոր տերեւազգեստի միջով: Այս բլրի լայն գագաթից, որ կրումէր իւր վերայ յիշեւու ամրոցը, կարելի էր մի հայեացքով բոլոր դաշտը ընդգրկել տեսութեամբ, և երբ մարդու աչքը բլրապատ տափարակի մելմ և քաղցր փառահեղութիւնից յագեցած լինէր, այնուհետեւ պէտք էր միայն նայել դէպ'ի հարաւ, որ մարդ գտնէր նոր վայելչութիւն և նոր զուարձութիւն, դիտելով ընդարձակ, անհուն ծովը. որի կոհակահոյլ ջրերը հեռաւոր հորիզոնում միանումէին կապոյտ երկնակամարի հետ: Գըր լայնատարած մակերեսոյթը իւր անդուլ և անդադար տարուբերուող և փոփոխական ալիքներով իւր նաւերով, որոնք առագաստները պարզած

հսկայական կարապների նման սահումէին նորա վերայ, իւր փայլողութեամբ և արեգակի ճառագայթների ցոլացմամբ, իւր ահաւոր, բայց վսեմական գեղեցկութեամբ, երբ փոթորիկը նորա խորքը դէպ'ի վեր էր փորում, և նորա մանչիւնը խառնվումէր ալեկոծութեան որոտման հետ, ներկայացնումէր միյաւիտեան նոր և թարմ պատկեր, որի վերայ իւրաքանչիւր զգայուն մարդու աչքը զարմանքով և ուրախութեամբ միայն կարող էր դադարել:

Վմրոցը ևս միանգամայն զարմանալի և գեղեցիկ կերպով համեմատվումէր իւր շրջակայքին. մեծ, քառակուսի քարերից շինած ամուր աշտարակները, լայն, պսակաւոր պարիսպները, բարձր և հպարտ կանգնած շինութիւնների բազմաթիւ պատուհանները, որոնց շրջանակներից ցոլանումէին արեգակի ճառագայթները, տալիս էին նորան մի տիրապետողի պատկեր, որ հզոր և կարող կերպով վայր էր նայում երկրի և սորա բնակիչների վերայ և հպարտ լոռութեամբ, կարծես, ասումէր. «Այեցէք, ես այն եմ, որին ամենքդ պարտ էք հպատակել դուք, որ ստիպուած էք ձեր աչքերը դէպ'ի ինձ վեր բարձրացնել:» Եթէ մարդ նայէր նորա վերայ ծովի կողմից, նա առաջին հայեացքում նմանումէր մի ահագին ծովային նաւի, որ յանկարծ ալիքների միջից դէպ'ի ցամաքն էր փոխադրուած: Այստեղ բարձրանումէր մի բարձր և նեղ աշտարակ օդի մէջ գուրս ցցուած կայմի նման, և նորա պսակի վերայ

փողփողումէր մի ահագին դրօշ, որ առագաստի պէս  
ուռչումէր, երբ հողմի շունչը փշումէր նորա ծանր  
ծալերի միջով։ Այդ աշտարակը շրջապատած էր պա-  
րիսպներով, որոնք այնքան նման էին մի մեծ զին-  
ւորական նաւի կողքի որմերին, որքան մի ձուն  
միւսին։ « Այրա տէրը իւր լոք ցանկութեամբ ներ-  
կել էր տուել նորան մոյք գոյնով և յօրինել էր  
նորա վերայ թնդանօթների պատուհաններ, որոնց  
միջից նոքա սպառնալի կերպով դուրս էին ցցել իւ-  
րեանց մետաղեայ խողովակները։ » Ամանութիւնը ա-  
ւելի սաստկացնելու համար աշտարակի պսակից  
ձգվումէին դէպ ՚ի պարիսպները պարաններ, որոնց  
վերայ փոքր ինչյաջողակութեամբ և սրտի համար-  
ձակութեամբ կարելի էր բոլորովին հանգիստ և  
անվտանգ բարձրանալ և՝ վայր իջնել. այդ պարան-  
ները յատկապէս օգեղէն սանդուղներ էին, յօրինած  
հաստ ու պինդ չուանների վանդակներով, որոնց  
վերայ ձեռքը մի ապահով ունելիք էր դժուում,  
երբ գլուխը սկսումէր անդունդի վերայ պտտել:  
Կարձ ասենք, ամրոցի բոլոր տեսքը այնպիսի էր,  
որ մարդ, նորա վերայ նայելով, ակամայ այս մտքի  
մէջ էր ընկնում։ « Վարդեօք չէ բնակվում այստեղ  
մի ծեր ծովագնաց, որ աշխատել է իւր սիրելի սո-  
վորութիւնները ծովից դէպ ՚ի ցամաք փոխադրել։ »  
Ովոր այդպիսի հարց առաջարկէր իւրեան, նա ան-  
տարակոյս կարող էր առանց մտածելու « Վայո » պա-  
տասխաննել, պատճառ այդ ամրոցում, յիրաւի, բնակ-

վումէր մի ծեր ծովագնաց, և նա է իսկապէս այն  
մարդը, որի հետ մենք այժմ կամենումենք աւելի  
մօտ ծանօթանալ:

« Երունի կոմմոգորը — այդ աստիճանն ու-  
նէր ամրոցի ընակիչը անդիմական նաւատորմիդի վե-  
րայ — այսպէս, ծերունի կոմմոգորը՝ պարոն Գէ-  
որդ Անելբուրնէն, իւր մանկութեան օրերում որոշ-  
ուած էր ծովագնաց լինելու, որովհետեւ նայոյ չու-  
նէր ապագայում ժառանգելու իւր հօր բարօնութեան  
պատուանունը և առատ գանձը, մինչ նորա աւագ  
եղբայրը թւումէր « Ախախնամութիւնից սահման-  
ուած այդ բարիքը վայելելու։ Երիտասարդ Գէ  
որդը յարմար դիպուած գտաւ հանդէս դուրս գա-  
լու, բարձրացաւ միշմանի աստիճանից մինչև լյո-  
ւենանտի աստիճան, յետոյ դարձաւ մի զինւորա-  
կան նաւի առաջնորդ և, ՚ի վերջոյ, երբ միքանի  
ֆրանսիական նաւերի յատակը ծակած և մի այլ նաւ  
սաստիկ կոլում ձեռք էր բերած, թագաւորից կոմ-  
մոդուութեան պատիւ ստացաւ։ Իւր անխելի քաջու-  
թեամբ նա ծովագետութեան ևս կը հասնէր, բայց  
բաղդը վեր ՚ի վայր շփոթեց նորա գաղափարնե-  
րը, և մի ծովամարտի մէջ, ուր նա ըստ սովորու-  
թեան շատ մօտեցաւ թշնամուն, մի թնդանօթի  
գնդակ խից և տարաւ նորա ձախ ոտքը, Անուշե-  
տեւ վերջացաւ նորա փառաւոր հանդէսը ծովի կա-  
նաչ ալիքների վերայ, և նա պէտք է մտածէր  
ցամաք հողի վերայ մի փոքրիկ տեղ գտնել, ուր

Նա քաղցր հանգստութեան և առանձնութեան մէջ կարողանար անցեալը մտաբերել և իւր յիշատակների մասին երազել:

«Ձովվմա՛ս,» ասաց նա մի օր իւր ծերունի ղեկավարին, որ նորա բոլոր ծովագնացութեան ասպարիզում նորա հաւատարիմ բարեկամը և ուղեկիցն էր եղած, «ՕԵրունի՛ Ձովվմաս, այժմ մենք՝ ի վերջոյ պէտք է բաժանուենք միմեանցից:»

«Ես մի անհրաժեշտ կարիք չեմ տեսնում, տէ՛ր,» պատասխանեց ծեր ծովագնացը յարդանքով բայց փոքր ինչ ընտանութեամբ, որի համար իրաւոնք էր տուել նորան երկարատե կենակցութիւնը իւր հրամանատարի հետ:

«Ի՞այց դու պարզ տեսնու՞մես, Ձովվմաս, որ այժմ ես մի անպիտան նաւի աւերակ եմ, և այլ ևս չեմ կարող թագաւորին ծառայել:» ասաց կոմմոդորը:

«Ես մտադիր եմ թողնել արքունի պաշտօնը:» Ե՛՛, ես ևս նոյն դիտաւորութիւնն ունեմ,» ասաց Ձովվմասը: «Արձակման թուղթս գրպանումն է:»

«Ի՞այց ինչո՞ւ ես դու այդ կամենում, — քո անդամները գեռ ևս առողջ են,» ասաց կոմմոդորը:

«Ոչինչ,» պատասխանեց ծերունին: «Ես այլ ևս չեմ ունենալու ձերդ հրամանքը նաւի վերայ, ուրեմն . . . .»

«Ուրեմն, դու ևս մտածումես հեռանա՞լ:»  
«Ենտարակոյս:»

«Ի՞այց ի՞նչ ես կամենում անել ցամաքի վերայ:»

«Չեր հրամանքիդ մօտ մնալ:»

«Ի՞այց, ծեր ծովամուկն, գու ինձ պէտք չես,» ասաց կոմմոդորը խստութեամբ, թէւ իւր սրտի խորքում ուրախանումէր, որ ծերունին այնպիսի մտերիմ բարեկամութիւն էր ցոյց տալիս նորան: «Դու հասկանու՞մս, որ ինձ պէտք է չափաւորիել իմ ծախքը, Ձովվմաս: Յամաքի վերայ չը կան աւարառութիւն և սորա նման բաներ, ուստի և ես իմ կեցութեան առագաստը պէտք է ամփոփեմ, որ պարտքի և ապրուստի հոգսի ծովաժայոի վերայ ջարդ ու փշուր չը լինեմ: Հասկանու՞մս այդ, ծերունի Ձովվմաս:»

«Ես զալիս եմ ձերդ հրամանքի հետ, այդ վճռած է, և այդ ես հասկանումեմ,» պատասխանեց ծերունին: «Չեր հրամանքից ինձ ոչինչ հարկաւոր չէ, բայցի ձեր պատուէրից: Ես նորան սովորած եմ և կը կորչեմ, եթէ առանց նորան վարուեմ: Մնացորդի համար ես ինքս կը հոգամ:»

Վայ վայրկեանում կոմմոդորը ստացաւ մի սկզբով նամակ, որ և շտապով բացեց և արագ կարգաց: Յատց նա մտածելով ձեռը վայր թողեց և, գլուխի շարժելով նայեց ծեր Ձովվմասին:

«Ի՞նչ կայ. ձերդ հրամանքը,» հարցրեց սա: «Տիսուր տեղեկութիւն, Ձովվմաս: Խղբայրս մեռել է մի քանի օր առաջ: Ձէս պէտ տասնուհինդ

տարի է չեմ տեսել նորան, բայց դարձեալ սիրտս  
ցաւումէ:

«Եւա ձեր կրտսե՞ր եղբայրն էր, ձերդ հրաման-  
քը:»

«Ոչ իմ միակ աւագ եղբայրս էր:»

«Ուրեմն, գուք էք ժառանգը:»

«Ի հարկէ, ժառանգ մի գեղեցիկ բարօնական  
կալուածքի տասն հազար ֆունտ ստերլինգ տարե-  
կան եկամուտով: Իսայց ի՞նչ հարկաւոր է այդ ինձ  
նման ծեր ծովագնացին: Ես կը ցանկայի ամէն բան  
Ալֆրեդին ընծայել, միայն թէ ձախ ոտս ունե-  
նայի:»

«Ճեռի է, հեռի, ձերդ հրամանքը,» միսիթարու-  
մէր ծերունի ծառվմասը: «Ե՞րբ պէտք է նաւենք  
դէպ 'ի — ի՞նչպէս է ձեր ամրոցի անունը:»

«Այս րոպէիս, ծառվմաս: Արամայի՛ր առանձին  
սուրհանդակ պատրաստել և ճանապարհ ընկնենք:  
Գործակալը գրումէ ինձ, որ իմ ներկայութիւնը  
շատ հարկաւոր է:»

Օերունի ծառվմասը բարձրացրեց ձեռքը գէպ  
'ի ճակատը 'ի նշան յարդանքի և հնազանդութեան,  
շուր եկաւ զինուորական կարգով և գնաց իւր տի-  
րոջ հրամանները կատարելու: Տասն րոպէից յետոյ  
չորս ձի լժած մի կառք վազումէր սար ու ձորի  
վերայով, և միւս առաւօտը տէրը և ծառայն գտան-  
վումէին իօննիկաստլէ ամրոցում, որ մենք վերև  
մի քանի խօսքով նկարագրեցինք: Ես ասացի տէ-

ը և ծառայն, որովհետեւ ինքն ըստ ինքեան հաս-  
կացվումէ, որ այժմ, երբ կոմմոգորը մի հարուստ  
մարդէր դարձել ծեր ծառվմասը աւելի միտք չ'ու-  
նէր նորան թողնելու: Կործը վերջացաւ լոռութեամբ,  
և ծերունի ծառվմասը վերակացու էր իօննիկաստլէ  
ամրոցում, ինչպէս զեկավար էր եղած կոմմոգորեան  
արթուն նաւի՝ Անեգուղայի, վերայ:

Պ. Վէորդ Անելլուրնէն երկար ժամանակ չէր  
կարողանում ցամաքային կեանքին սովորել՝ ի վեր-  
ջոյ, նա ամուսնացաւ մի բարի կնօջ հետ, որ մի  
որդեակ պարգևեց նորան, սակայն երեք տարուց  
յետոյ մեռնելով, դարձեալ միայն թողեց նորան:  
Կոմմոգորի տիրութիւնը այնքան մեծ էր դորա վե-  
րայ, որքան առաջ սրտի սէրը. նա անձնատուր ե-  
ղաւ այնպիսի մելամաղձութեան, որ ծեր ծառվմա-  
սին ահ ու գողի մէջ էր ձգում: Պ. Վէորդը չէր  
ուտում, չէր խմում, չէր ծիծաղում, չէր քնում, մի  
խօսքով, այնպիսի մարդ էր դարձել, որ ոչնչի վե-  
րայ չէր մտածում, ոչինչ չէր երեակայում, բա-  
ցի այն մեծ կորստից, որ այնպէս չարաչար կեր-  
պով կտրատել էր նորա սիրտը: Ան օր ծեր ծառվ-  
մասը, փոքրիկ ջօնի ձեռքից բռնած, մտաւ իւր  
տիրօջ սենեակը, որ նորա մտնելու վերայ աչքն  
անդամ չը բարձրացրեց գետնից, արձանացաւ նո-  
րա առաջը և ասաց խստութեամբ. «Ծնոյլ տուէք  
ինձ, կոմմոգոր, մի խօսք ասել ձերդ հրամանքին:»  
Պ. Վէորդը բարձրացրեց իւր գունաթափ երեսը,

անթարիծ նայեց մի քանի վայրկեան ծեր թառվասի վերայ և դարձեալ վայր թողեց գլուխը, առանց մի խօսք պատասխանելու: Փոքրիկ ջննը, որ առաջ միշտ հօր սիրելին էր, արտասուք թափեց և աշնպէս վախեցաւ, որ թագ կացաւ թառվասի յետել և սկսաւ բարձրածայն լաց լինել:

«Ո՞տ եկ, մանուկ,» ասաց սա: «Ո՞ի՛ վախեցիր հօրիցդ: «Եա քեզ ոչինչ չի անիլ քանի որ ծեր թառվասը հետդ է: Բանիր նորա ձեռքը և թափ տուր — պի՛նդ — այդպէս — շատ լաւ է:»

Դարձեալ բարձրացրեց կոմմոգորը իւր գլուխը, և նորա աշքը ընկաւ մանկան վերայ, որ տրտասուքը աչքին երկիւղով նայումէր հօր գունաթափ, տխուր երեսին: Ո՞ի նուազ ժպիտ խաղաց սորա շրթունքի վերայ, նա արդէն պատրաստվումէր դարձեալ խորասոյզ լինել իւր տիրութեան մէջ, երբ ծեր թառվասը իւր աղնիւ, թէև փոքր ինչ կոշտ ձեռվ մէջ ընկաւ:

«Ըմօթ է այդ, ձերդ հրամանքը,» աղաղակեց նա խտութեամբ: «Ճշմարիտ, ամօթ է»

«Եինս, թառվաս:»

«Ե՛հ, ի՞նչ է ձեր կինը,» ձայնը բարձրացրեց թառվասը: «Ինչ որ սիրելի Աստուածը առել է, նորա վերայ էլ մարդ չը պէտք է հոգայ ու տըլիրի: Կայեցէք ձեր ջննի վերայ, ձ. հ.: Խեղճ մանուկը ողբումէ, որովհետեւ նորա հայրը դարձել է մի խստասիրտ հայր, որ ամենելին չէ հոգում նո-

բա մասին: Այդ ամօթ է, ասումեմ, Ճշմարիտ, ամօթ է:»

Կոմմոգորը տհաճութեամբ շարժեց գլուխը: «Թո՞ղ ինձ հանգիստ, թառվմաս,» ասաց նա նուազ ձայնով, «իմ կինս . . .»

«Չեր կինը ձեզ այս գեղեցիկ մանուկն ընծայեց,» կրկին ընդհատեց ծերուսին իւր տիրօջ խօսքը, և մահուան անկողնի մէջ նա ձեզ ասաց, ես լաւ լսեցի այդ: «Գեորգ, մի՛ թող այս մանուկը, իմ սիրելի, քաղցր մանուկը,» և ձ. հ. երդուեց, երբեւ աչքի բիբ պահպանել նորան, իսկ այժմ դուք այնպէս էք վարվում նորա հետ, որ խեղճ մանուկը անմիջապէս սգւորի պէս ողբումէ ուհեծկլսում: Ո՞եծ ամօթ է, ասումեմ, որ ձ. հ. այդպէս շուտով մոռանումէ իւր բարեգութ, սիրելի կնօջը տուած խոստումը:»

«Ե՛իս, հայրեկ, սիրելի հայրիկ, »սկսաւ այժմ խնդրել փոքրիկ ջննը, «քաղցր նայիր ինձ վերայ: Ես միշտ հնաղանդ եմ եղել այնպէս չէ, թառվաս: Խնչու այժմ դու բարկացած ես ինձ վերայ, հայրիկ: Ա աղուց արդէն դու մի քաղցր երես չես ցոյց տուել ենձ: Ե՛իս, ա՛խ:»

Անուկը դարձեալ արտասուք թափեց, և ծեր թառվասը ասաց բարկութեամբ: «Լ սումու տեսնումէք այդ, ձ. հ.: Այդ մեծ ամօթէ: Ե՛կ, փոքրիկ ջնն: Այժմ ես կը լինեմ քո հայրը, որովհետեւ քո հարազատ հայրը ժամանակ չ'ունէ քո

մասին հոգալու, կամքեղ մի քաղցր խօսք ասելու:  
Ե՞կ, ջ օն:

Ի՞այց կոմմոդորը այժմ; կարծես, յանկարծ զար-  
թեց իւր խորասայդ եղած դրութիւնից: «Լա՛ց, ծե-  
րունի քրթմնջող» ձայն տուեց նա թառվմասին, որ  
լացող մանուկը գրկած քայլումէր դէպ ՚ի գուռը:  
«Լա՛ց, թառվմաս: Խ՞նչ էիր ասում դու իմ սիրե-  
լի, երջանկացած կնօջ վերջին խօսքերի մասին:»

«Ես ասումէի, որ նա ձ. Հ. արտասուբով խընդ-  
րեց հոգալ ենեղձ, անտէրունջ, որբ մանկան մա-  
սին: Ի՞այց, արդդա՛րև. դուք այլ ևս սիրո չ'ունէք  
ձեր հարազատ միակ որդու համար:»

Ի՞արի կոմմոդորը տիրութեամբ շարժեց գլու-  
խը, մի սիրալիր հայեացք ձգեց իւր մանկան վե-  
րայ, որ պարզեց դէպ ՚ի նա իւր բաղկիկները. սեղ-  
մեց նորան իւր կրծքին և լաց եղաւ: «Օ՛քրունի  
թառվմասի սիրու խոր շարժուեցաւ այս տեսարա-  
նից, և թէպետ նորա մոյտ թշի վերայ արտասուբ  
թափուեցաւ, բայց նա ուրախանումէր իւր սրտի  
խորքում: «Փա՛ռք Աստուծոյ, ուրիշ բաներ ևս  
գալիս են նորա աչքին: Այժմ ես կ'աշխատեմ՝ նո-  
րան ուղիղ ճանապարհի վերայ բերել:»

Արդա՛րև, ծերունի թառվմասի խիստ, բայց բա-  
րեմիտ ձեռնարկութիւնը կարողացաւ կոտրել այն  
կարծր սառուցի կեղելը, որով տրտմութիւնը և վիշ-  
տը պատել էին բարի կոմմոդորի սիրու: Արտա-  
սուքը, որ նորա աչքից սահոււմէր և գլորվում՝

բա կրծքին պինդ սեղմուած մանկան գլխին, թե-  
թեացրեց նորա ցաւալից, ձնշուած սիրու, իսկ յի-  
շողութիւնը իւր ամուսնուհւոյ վերջին խնդրի մա-  
սին, որ ծեր թառվմասը այնպէս յարմար ժամանակ  
նորա միտն էր ձգել ոյժ և սիրո տուեց նորան իւր  
ցաւի միջից գուրս գալու և վերադառնալու այս աշ-  
խարհը, որ նա իւր մտածմունքներով վաղուց ար-  
դէն թողել էր, որովհետեւ նա այլ ևս ոչինչ չը  
մտածում, եթէ ոչ իւրեանից բաժանուած, այն  
կեանքում յաւէժացած ամուսնուհւոյ վերայ:

«Ջ օն, իմ սիրելի փոքրիկ ջ օն,» հեկեկումէր  
նա, «Ների՛ր ինձ իմ տրտմութեան համար, որ,  
այո՛, բնական է: Այսուհետեւ դու այլ ևս չը  
պէտք է գանգատուես, թէ ես քեզ չեմ սիրում:»

Անուկը իւր կողմից պատասխանեց հօր փաղա-  
քշանքին և ծեր թառվմասը չը խնայում բառեր  
աղնիւ և բարեմիտ ձեռվ. կրկին ուղղելու այն ծան-  
րապէս ճնշուած հօրը: Կոմմոդորը կրկին մասնա-  
կից եղաւ կեանքին նա շատ խաղում ու զրոյց  
էր անում փոքրիկ ջ օնի հետ, միայն այն ժա-  
մանակ, երբ նա այցելութիւն էր գնում իւր  
վախճանուած կնօջ գերեզմանին (որ և շատ յա-  
ձախ էր պատահում), գարձեալ ընկնումէր իւր ա-  
ռաջուայ տրտմութեան և վհատութեան մէջ: Ի՞այց  
ծեր թառվմասը կարողացաւ նորա հիւանդու հոգե-  
կան գրութեան այս վերջին մացորդը ևս փարա-  
տել: Ա, ա, յորդորումէր կոմմոդորին պարապել տա-

նումէր նորան աղքատների և հիւանդների խըր-  
ձիթները բարեգործութիւններ անելու, որոնց հա-  
մար այս բարեսիրտ և մարդասէր մարդը միշտ պատ-  
րաստ էր, և ուրախանումէր, երբ վարձատրուած  
մարդոց շնորհակալութիւնը զուարձութեան ժպիտ  
էր յարուցանում իւր տիրօջ տիսուր և դժգոյն դէմ-  
քի վերայ: Իացի սորանից նա հնարումէր այս կամ  
այն անակնակալ ուրախութիւնը, որ նորա կարծիքով  
զուարձութիւն կը պատճառէր իւր տիրօջը: Վաս-  
պէս, օրինակի համար, նա շինել տուեց սենեակ-  
ների մի ամբողջ կարգ, բոլորովին նման Արքու-  
զայի նաւասնեակներին, որի հրամանատարը եղած  
էր երբեմն պ.Գէորգը: Որովհետեւ թառվմասը չէր  
խնայում դրամ, որ, այո՛, մեծ առատութեամբ  
պատրաստ ունէր նա իւր ձեռքում, ուստի և նո-  
րան յաջողեցաւ կոմմոդորին մեծապէս ուրախացնել:

«Վայ լաւ ես արել, ծերունի թառվմաս,» ասաց  
նա հաճութեամբ, երբ նորա փաղեմի զեկավարը  
տարաւ նորան նաւասնեակները: «Տե՛ս, մենք այս-  
տեղ կարող ենք ջնին պատմել մեր նախնի ճա-  
նապարհորդութիւնների և արկածների մասին:»

«Ես ժամին նա փոխադրուեցաւ նորակառոյց  
սենեակները, և, բնական է, որ նորա նախնին ծո-  
վային կեանքի յիշատակութիւնը մի նոր երիտա-  
սարդութիւն ներշնչեց նորան: Ծերունի թառվմա-  
սը հաճութեամբ տրորումէր իւր ձեռները, և ջնին  
այլ ևս չէր դանդատվում, թէ իւր հայրը տիսուր

ու մռայլ է: Ճամանակը ևս իւրն էր անում կոմ-  
մոդորի ցաւը մեղմելու համար, և օրեր ու տարիք  
անցնելուց յետոյ կրկին տիրեց ուրախութիւնը  
Բանիկաստլէ ն ա ւ ի վերայ, ինչպէս կոմմոդո-  
րը անուանումէր իւր բնակարանը սրտի ուրախ ժա-  
մանակը: Ծինութեան ներսը փոքր առ փոքր բա-  
ժանուեցաւ և կարգաւորուեցաւ այնպէս, ինչպէս  
120 թնդանօթ ունեցող մի նաւի ներսակողմը և ոչ  
ոք այնքան եռանդով չէր անում այս կարգադրու-  
թիւնները, որքան կոմմոդորը: «Ներքինին հետե-  
ցաւ արտաքինը, այնպէս որ ամրոցը, հետ զիետէ,  
մանաւանդ ծովի կողմից, այնպիսի տեսք ստացաւ,  
որ բոլորովին նման էր մի ծովային նաւի:

Վինչայս, մինչայն, փոքրիկ ջնը աճելով գառ-  
նումէր աշխոյժ պատանի և հայրը պէտք է մտածէր  
ուսումնարան ուղարկել նորան կամ իւր ամրոցում  
կրթել տալ:

«Վանուկը շուտով եօթը տարեկան կը դառնայ,»  
ասաց նա ծեր թառվմասին, «բայց նա չէ կարողա-  
նում այբը բենից զանազանել: Դու լաւ դիտես,  
թառվմաս, որ մենք իբրև նաւաստի չը պէտք է մե-  
ծացնենք նորան:»

«Զ. հ. ուղիղ է ասում,» պատասխանեց ծերու-  
նին: «Վ աղը ես կ'սկսեմ նորան ուսում տալ:»

«Եյ, գու, յիմար զբեց,» աղաղակեց կոմմոդորը  
ժպտալով, «ի՞նչ ես կամենում գու նորան ուսուցա-  
նել:»

«Ե՞՛հ, ձ. հ.» պատասխանեց ծերունին բոլորովին կոշտութեամբ և գրե՛թէ փոքր ինչ վիրաւորուած, «Ես կարծում մեմ, մի մարդ, որ այնքան տարի զե-կալվարութեան պաշտօն է վարել Մեդուզայի վե-րայ, կարող կը լինի ՞ օնի պէս մի պատանու ու-սուցանել նաւավարութեան արհեստի առաջին սկզբունքը»:

Կոմմոդորը աւելի ծիծաղեց: «Խօսքը դորա վե-րայ չէ, դու, ծեր ծովակատու,» բացականչեց նա: «՞ օնը պէտք է կարդալ, գրել ուսանի, լատինե-րէն, յունարէն և այդպիսի ուսուցմական բաներ: Խսկ դոցա վերայ մենք երկուսս էլ ոչինչ տեղեկութիւն չունենք:»

Օեր թուղմասը նայեց իւր հրամանատարի վե-րայ հեծնական զարմացմամբ և սաստիկ շարժեց գլուխը: «Ի՞նչ» աղաղակեց նա, «ձ. հ. չէ՝ կամե-նում արգեօք ցամաքի մուկն շնել պատանուն: Դորանեց ոչինչ չի դուրս գալ: Ես ձեզ մի խօսք ևս ունեմ ասելու: Ես նորան մեծացրել եմ, կրել եմ բազուկներիս վերայ երբ նա դեռ փոքր էր, և դիտեմ, որ նա կամենում ժամանակով ծովագնաց լինել, ինչպէս իւր հայրը և սորա ամենալաւ բա-րեկամը: Ուրեմն, անհրաժեշտ է, որ նա առաջ հիմնովին ուսանէ ծովային գործերը, իսկ եթէ կը ցանկանայ այնուհետեւ մի այլ բան ևս ուսանել, միշտ բաւական ժամանակ կ'ունենայ դորա համար:»

«Մինը անել, և միւսը չը թողնել,» վճռեց կոմ-

մոդորը: «Ես քո կամքին եմ թողնում մանուկը այն ժամանակ, երբ նա աղատ կը լինի միւս պարապ-մունքից. իսկ մնացեալ բաներից, դու տեսնում ես, թուղմաս, որ նա պէտք է փոքր ինչ աւելի հաս-կանայ, քան թէ պարանը խարսիկից զանազանել: Ուրեմն, լու՛ո կաց: Առաջիկայ շաբաթը մենք մի ուսեալ խեցգետին կը բերենք նաւը, և դորանով բանը կը վերջանայ»:

Ծերունի թուղմասը քրթմնջելով հեռացաւ և գնաց իւր սրտակից ՞ օնի մօտ, որին առաջուց, որքան կարողացաւ, յորդորեց, որ գրքերին շատ չը պարապի: Եյն ինչ ուսուցչը եկաւ, և ՞ օնը պարտ էր նաև և առաջ այդ ու բենի վերայ նստել, ո-րովհետև նորա հայրը ծեր թուղմասից աւելի լսու էր հասկանում, թէ ինչ էր օգտակար իւր որդուն: ՞ օնը ուսանումէր իւր չափաւոր դասերը, իսկ մնա-ցած ժամանակը նա միշտ գտնվումէր ծեր թուղմա-սի մօտ, որի դասերը աւելի հաճելի էին նորան, քան թէ իւր ուսուցչի կրթութեան ժամերը: Օեր թուղմասը տաշումէր կացնով մի գեղեցիկ պատե-րազմական նաւի տիպար, ցոյց էր տալիս մանկանը նաւի առանձին մասերը, բացատրումէր նոցա նշա-նակութիւնը, և շուտով այնքան յառաջ տարաւ նո-րան, որ նաւի լեզուն նոյնքան հասկանալի էր նո-րան, որքան իւր հօրը և ուսուցչին, անտարակոյս նա աւելի լաւ էր հասկանում այդ, քան թէ լա-տիներէն լեզուի հոլովունքը և խոնարհունքը,



որոնցով նորա ուսուցիչը տանջումէր նորան: Առմ-  
մոդորը գոհ էր մնում, եթէ ջ օնը գոնեա փոքր  
ինչ ուսանումէր, բայց ուսուցչի սկզբում ցոյց տուած  
եռանդը սառեց, երբ նա տեսաւ, որ ծեր թռովմա-  
սը աւելի մեծ ազդեցութիւն ունէր մանկան վերայ,  
քան թէ ինքը երբ և իցէ կարող էր յուսալ այս-  
պէս, ջ օնը տասներկու տարեկան դարձաւ առանց  
մի յառաջադիմութիւն անելու ուսման և գիտու-  
թեան մէջ:

Այս այն ժամանակն էր, երբ ծեր թռովմասը  
շատ անգամ գաղտնի խօսակցութիւններ էր ունե-  
նում իւր տերօջ հետ, որոնց բովանդակութիւնից  
ջ օնը ոչ մի բառ չէր հասկանում, որքան և հարց-  
նումէր դորա մասին: «Օքը թռովմասը նորա բոլոր  
հետաքրքրական հարց ու փորձի և ինդիրների ժա-  
մանակ միշտ միայն գլուխն էր շարժում, խորաման-  
կութեամբ ժպտում է կարձ պատասխանում: «ամ-  
բերութիւն միայն, գու ամէն բան կիմանաս, ջ օն:  
Օրինաւոր ծովագնացը չը պէտք է այդքան հե-  
տաքրքիր լինի»:

Այս տեսէց գրե՛թէ կէս տարի: Երբ ձմեռը ե-  
կաւ, երբեմն կոմմոդորը, երբեմն ծեր թռովմասը  
փոքրիկ ճանապարհորդութիւններ էին անում, ո-  
րոնց խորհուրդը նոյնպէս անյայտ էր մնում ման-  
կանը. ջ օնը թւումէր մատնուած և վաճառուած:  
Եթէ նա հարցնումէր հօրը՝ «Ո՞ր ես գնում»,  
սա պատասխանումէր. «արցրու՛ ծեր թռովմասին»:

Երբ նա գնումէր ծեր թռովմասի ջանն ընկնելու,  
սա պատասխանումէր. «Նօրդ հարցրու»: Իայց մի  
և նոյն ժամանակ կոմմոդորը և թռովմասը հոգւով  
շափ ուրախ էին, և ջ օնը տեսնումէր նոցա Ժը-  
տալիս և իւր վերայ մի հայեացք ձգելիս, որ պարզ  
հասկացնումէր նորան, թէ մէջ տեղը մի բան կայ,  
որ նորան է վերաբերում, բայց աւելի ոչինչ չէր  
բացատրում նորան; և այդ բնականաբար վերին աս-  
տիճանի գրգռումէր նորա հետաքրքրութիւնը: Երբ  
«Ծննդեան տօնը եկաւ, ջ օնին հայրը պարգևեց  
մի Ճոխ միշմանի նշանազգեստ, և այժմսա կարծու-  
մէր, թէ արգէն բացել է գաղտնիքը»:

«Նա՛, հայրիկ», ասաց նա, «ես այժմ գիտեմ  
այդ: Ես պէտք է ծովը գնամ: Դու ինձ դորա  
համար ես պարգևել նշանազգեստը»:

«Այդ չէ», պատասխանեց պատկառելի կոմմոդո-  
րը ժպտալով: «Տասներկու տարեկան միշմանը  
լսուած բան չէ: Դու գեռ շատ մատաղ ես, ջ օն:  
Յետոյ կը տեսնենք այդ»:

Գաղտնի առանձնախօսութիւնները գարձեալ շա-  
րունակվումէին, ճանապարհորդութիւնները նոյն-  
պէս, կոմմոդորը և թռովմասը միշտ ուրախ էին,  
իսկ ջ օնը գրե՛թէ կորչումէր հարցասիրութեան  
մէջ: Իայց նա ոչինչ չէր կարողանում հասկանալ  
որքան և աշխատումէր հօրից կամ ծեր թռովմասից  
մի կերպով խորամանկութեամբ գուրս քաշել գաղտ-  
նեքը: Նայրը ասումէր. «արցրու՛ ծեր թռովմա-

սին», իսկ թուլմասը ասում էր. «Ամբերութիւն, ժամանակը վարդեր կը բերէ»:

Այդպէս անցաւ ձմեռը, և եկաւ գարունը իւր ծաղիկներով և պայծառ արեգակնային լուսով: Մայսին մինին ջօնի ծննդեան օրն էր: Մի շաբաթ առաջ թուլմասը բոլորովին չէր երևում Շօննիկաստլէ ամրոցում, և 'ի զուր էր ջօնը հարցնում՝ «Ուր է նա»: Ոչ ոք չէր կամենում, կամ կարողանում նորան պատասխան տալ: Ա երջապէս, ջօնի ծննդեան օրը վաղ վաղ եկաւ թուլմասը, բարեմաղթեց մանկանը շատ երջանկութիւն և առողջութիւն, և հրամայեց նորան իսկոյն հօր մօտ գնալ որ խօսք ունէր նորան ասելու:

«Կախ և առաջ ասա' ինձ, դու ու՞ր էիր գնացել ամբողջ շաբաթը», ասաց ջօնը:

«Դու այդ կը տեսնես», պատասխանեց ծերունին և ժամաց աւելի խորամանկութեամբ, քան թէ երբ և իցէ, և ներքին ուրախութիւնից այնպէս արորումէր ձեռները, որ կարծես մորթը պէտք է պոկէր: «Ծտապի՛ր, ջօն, դու գիտես, որ հայրդ չէ սիրում սպասել, իսկ այսօր դու չը պէտք է անհամբերութեան մէջ ձգես նորան, եթէ չես կամենում նորան մի մեծ ուրախութիւնից զրկել»:

Ջօնը վեր թռաւ անկողնից և իսկոյն ձեռք տուց հանդերձին:

«Կա՛ց, այդ չէ», հրամայեց թուլմասը: «Կաշաղգեսը, ջօն»:

«Բայց ինչո՞ւ, ծեր ծովագնաց»: «Այս պատճառով: Այդ հեռացրու՛ իսկոյն — մի, երկու, երեք, արագ ջօն»:

Ինչ պէտք էր անել մանուկը հագաւ նշանագիստը և գնաց գլուխը շարժելով ծեր թուլմասի յետևից, որ տարաւ նորան ուղղակի հօր նաւասենեակը: ՕԵր կոմմոդորի աչքերը փայլեցան ուրախութիւնից, երբ նա գերկն առաւ իւր ծաղկափիթ մանուկը և, բարեմաղթելով նորան երջանկութիւն, իւր ջերմ համբոյրը գրոշմեց նորա թարմ, կարմիր շրմունքի վերայ: «Ամէն բան պատրաստ է ուղերութելու», հարցրեց նա յետոյ ծեր թուլմասին: «Ամէն բան պատրաստ է», պատասխանեց սա:

«Այժմ յառաջ», ասաց կոմմոդորը: «Կողքիցս չեռանաւս», ջօն: Այսօր դու պէտք է իմանաս այն, ինչ որ վաղուց ցանկանումէիր իմանալ»:

Ջօնը լի էր ակնկալութեամբ: «Կորա սիրտը բարախումէլ, թէ և ինքը չը գիտէր, թէ ինչու, և երբ դուրս եկան՝ այնքան մեծ էր նորա անհամբերութիւնը, որ նա խիեց իւր ձիու կողքին իմանեներով, այնպէս որ սա նետի պէս սլացաւ: «Կա՛ց», աղաղակեց հայրը նորա յետևից, «այդ տեղից չէ անցնում Ճանապարհը: Այս կողմը, ջօն, կողքիցը մի՛ հեռացիր»:

Ջօնը յետ եկաւ և զարմանքով նկատեց, որ իւր հայրը ուղերուեցաւ գէպ 'ի ծովի ափը, ուր ոչ մի յարդարած Ճանապարհ չէր գնում:

«Ի՞այց ի՞նչ պէտք է անենք այնտեղ», հարցրեց  
նա զարմացած:

«Նամբերութիւն, բոլորը կ'իմանաս», պատաս-  
խանեց հայրը. իսկ ծեր թառվամասը այնպէս լի էր  
ներքին ուրախութեամբ, որ բարձրաձայն ծիծա-  
ղումէր և ամենազարմանալի կերպով ծումումէր ե-  
րեսը:

Չերը արագ վազեցին այդ ուղղութեամբ: «Եռ-  
քա գնումէին այն բլրի երկայնութեամբ, որ ծած-  
կումէր ծովի տեսքը: Յետոյ կոմմոդորը ճկուե-  
ցաւ գէպ 'ի ձախ, արշաւեց այն թփերի միջով, ո-  
րոնք ճգլումէին ծովեղրի երկայնութեամբ, և գո-  
ցա սահմանում ձին պահեց:

«Գօն», ասաց նա, «այն, ինչ որ դու իսկոյն կը  
տեսնես, քո ծննդեան օրուայ պարգևն է: Ուստի  
փակի՛ր աչքերդ, սիրելի որդեակ, և այժմ — յա-  
ռա՞ջ»:

Երկու քայլ ևս արեց ձին, և ահա՝ գտնվումէին  
նոքա թփերի առաջը: Կենդանու ոտների տակը խա-  
ղումէր ծովը իւր ափի գայլախազերի հետ և կար-  
ծես հանդարտ ծափահարումէին վճիտ ալիքները:  
Գօնը պահեց իւր ձին, մի հայեացք ձգեց ծովի  
վերայ և արձակեց հիացման աղաղակ:

«Նայրի՛կ, թառվամ'ս, մթէ կարելի է այդ»,  
բացականչեց նա հրճուանքով և, ձիու սանձը վայր  
ձգելով, արագ վայր թռաւ թամբից ծովեղրի վե-  
րայ, — «Ո՛չ, ո՛չ, ես այդ չեմ կարող հաւատալ:

Այդ ճշմարի՞տ է, հայրիկ, յիրաւի, ճշմարի՞տ է»:  
«Ճշմարիտ է, բոլորովին ճշմարիտ», պատաս-  
խանեց կոմմոդորը և ժպտալով գլուխը շարժեց,  
այն ինչ ծեր թառվամասը աղաղակեց. «Լեցցէ՛, կեց-  
ցէ՛ նոր նաւապետը»:

Մի բարձրաձայն «կեցցէ՛» ևս հնչուեցաւ ծովի  
կողմից — նորան հետեւեց թնդանօթի մի որոտա-  
ծայն ճայթիւն, յետոյ միւսը — փոքրիկ, կապոյտ  
ամպերը բարձրանումէին վերև. Գօնը հրճուան-  
քով բացականչեց. «Նայրի՛կ, պատերազմական  
նաւ, կանոնաւոր, իսկական թնդանօթներով»:

Գօնը ծիծալումէր ուրախութիւնից, գրկումէր  
հօրը, թռչելով սորա ձիու վերայ, ուրախութեան  
ձայներ էր արձակում, հրճումէր, ցնցումէր ծեր  
թառվամասի ձեռքը, մի խօսքով, յիմարացածի պէս  
էր սրտի ուրախութիւնից: «Ծեր թառվամասը նա-  
յումէր փայլարձակ աչքերով կոմմոդորի վերայ և  
ասումէր. «Եսժմ, ձ. հ., տեսնումէք, որ ծեր թառվ-  
ամասը ուղիղ էր ասում: Կեցցէ՛, — Գօնը իւր հօր  
արժանի զաւակն է — ծովագնաց գլխից մինչեւ ո-  
տը, և ես, ես՝ ծեր թառվամաս եմ նորան պատ-  
րաստել դորա համար»:

Եւնա կատարեալ իրաւունք ունէր այդ պատիւը  
իւրեան սեփականելու, որովհետեւ, յիրաւի, նա էր  
յատկապէս իւր պատմութիւններով և դասերովհետ-  
զհետէ ներշնչել մանկանը սէր գէպ 'ի ծովային  
կեանքը:

Ճապտալով վայր իջան կոմմոգորը և ծեր Յառլ-  
մասը ձիերից: Մի փոքրիկ նաւակ նաւեց վայր  
թողնուեցաւ ծովը, և երկու մատաղահաս, գեղե-  
ցիկ և մաքուր հագնուած նաւաստիք ներս թռան  
նորա մէջ դէպ՝ ի ցամաքը նաւելու և խրեանց մա-  
նուկ նաւապետին նաւը փոխադրելու: Մի ոստիւ-  
նով ՞ օնը նաւակի մէջ թռաւ, նորան հետեւեցին  
աւելի զգուշութեամբ կոմմոգորը և ծեր Յառլմա-  
սը, և յաջողութեամբ հասան նաւի տախտակամա-  
ծին, որտեղ կոմմոգորը ներկայացրեց նաւապետին  
նաւի վերայ եղած մարդոցը՝ տամն գեղեցիկ, մա-  
աղահաս ծովագնացների: ՞ օնը միքանի ինուք ա-  
սեց այդ նաւաստիքին, խոստանալով ողորմած և  
բարեսիրտ հրամանատար լինել, քաղաքավարու-  
թեամբ գլուխ տալով, շնորհակալութիւն արեց ինն  
անդամ բարձրաձայն կրկնած «կեցցէ ների համար,  
որ նաւաստիքը հնչեցնումէին՝ ի պատիւ նորա, և  
յետոյ իջաւ տախտակամածի տակը ծննդեան օ-  
րուայ փառաւոր պարզեի ներսի կողմը ևս աչքի  
անցնելու: Վմէն բան արժանացաւ նորա անպատ-  
մելի, լիաբերան գովասանքին: Կաւապետի սենեա-  
կը զարդարած էր գեղեցիկ կարասիքով, պատերը  
ծածկած էին ողորկած կարմիր փայտով, գոների  
փականքները փայլուն գեղնապղնձից էին, իսկ փոք-  
րիկ, կլոր պատուհանները՝ ամենապարզ ապակուց:  
Պատերի վերայ կախած էին զէնքեր, գաւշնակներ,  
ատրճանակներ, կախաղանաւոր մահճակալը սարգած

էր ամենաշքեղ կերպով, մի խօսքով ՞ օնին ամէն  
բան այնպէս գեղեցիկ էր թռում, որ նա շատ ան-  
գամ ցնծութեան աղաղակներ էր արձակում, բոր-  
բոքուած երախտագիտութեամբ գրկումէր երբեմն  
հօրը, երբեմն ծեր Յառլմասին: Կաւի միւս սե-  
նեակները, թէև այնքան ճոխ և փառահեղ չէին,  
սակայն միասին երեսումէին ամենալաւ դրութեան  
մէջ, այնպէս որ ՞ օնը այդ ամբողջ փոքրիկ ծո-  
վային պալատը դիտելուց և զննելուց յետոյ չէր  
կարողանում իւր սրտի կատարեալ հաճութիւնը խօս-  
քերով արտայայտել:

«Վայ միան տեսնել թէ այս շքեղպա-  
տերազմական նաւը ինչպէս է լողում», ասաց նա:  
«Քամին յաջողակ է, և ես շատ սրտով կը ցան-  
կայի, որ մենք մի փոքրիկ փորձ անէինք»:

«Կատ լաւ, ՞ օն», պատասխանեց կոմմոգորը,  
հաճութեամբ գլուխը շարժելով: «Յառլմաս, բարձ-  
րացի՛ր տախտակամածի վերայ և այնպէս զե-  
կավարութիւն արա՛, որ մանուկը համոզուի, թէ  
քեղ նման ծեր ծովակատուն նաւալարութեան ար-  
հետաք երբէք չէ մոռանում»:

Դարձեալ ուղևորուեցան տախտակամածի վերայ:  
՞ Օներ Յառլմասը հրամայեց խարիսխը վեր քաշել,  
տուց կարեսը հրամանները առագաստը պարզե-  
լու համար, և նայումէր ՞ օնին պայծառ, ուրա-  
խափայլ գէմքով, երբ թեթէ, գողորիկ նաւը բա-  
զի նման լողումէր ջրի երեսին և հնաղանդումէր

ղեկի թեթև ճնշողութեանը, ինչպէս սովոր ձին՝ երասանակին։ ջննը ինքն ևս լողումէր հիացման մէջ, ինչպէս նաւը՝ ծովի մէջ, իսկ կոմմոդորն ու ծեր թռովմասը, հաճութեամբ միմեանց երեսին նայելով և գլուխները թափ տալով. պարզապէս համոզվումէին, որ այդ ճննդեան օրուայ պարզեի ընտրութեան մէջ ամենսին չէին սիսալուել։ ‘Կորա ցանկանումէին ջննին ուրախութիւն պատճառել, և աշա՛, ջննը ուրախ էր, ինչպէս մի թագաւոր, որին յաղթութեան լուր էլն բերել այնպիսի մի կոռուեց, որի անյաջող վերջանալը պէտք է թագը խէր նորա գլխից։ Այժմ ամէն բան պարզ էր նորա համար. ծեր թռովմասի յաճախակի բացակայութիւնը, իւր հօր ճանապարհորդութիւնները, գաղտնի առանձնախօսութիւնները և բոլոր մնացեալ բանները։ Պատերազմական նաւը շինուած էր երկու ծովագնացների անձնական վերահայեցողութեան տակ, ուրեմն, և զարմանալի չէ, որ նա այնպէս գեղեցիկ էր շինուած։

Այսուհետեւ, քանի քամին և եղանակը թոյլէին տալիս, շտապումէին ջննը և թռովմասը գէպ ՚ի նաւը, որ ՚ի յիշտակ մանկան վախճանած մօր անուանել էին «Բարի Լյմմա», և ծեր թռովմասը չէր ինայում ոչ աշխատանք և ոչ խօսք իւր ջանակը աշակերտին այժմ գործնական կերպով կատարեալ ծովագնաց դարձնելու։ Եւ այդ աշխատանքը շատ հիանալի կերպով վարձատրվումէր յուրա-

խութիւն բոլոր նորա մէջ մասնակցողների։ Այլը հաճութեամբ էր նայում իւր որդու յառաջադիմութեան վերայ, ծեր թռովմասը պարծենումէր իւր ձարպիկ և ուշագիր աշակերտով, իսկ ջննի եռանդը այնքան աճումէր, որքան աւելանումէր նորայառաջադիմութիւնը նաւավարութեան արհեստի մէջ։ ‘Եաւաստիքի գրութիւնը ևս շատ լաւ էր, որովհետեւ ջննը աշխատումէր զանազան փոքրիկ ընծաներով և առանձին վարձատրութիւններով նոցա եռանդը վառ պահէլ։ Ուրեմն, և զարմանք չէ, որ ջննը արդէն հետեւալ տարին կարողանումէր այնպէս կառավարել իւր նաւը, ինչպէս մի հին ծովագնաց, այնպէս որ նորա հայրը և ծեր թռովմասը վատահութեամբ կարող էին յանձնել նորան այդ նավի գլխաւոր հրամանատարութիւնը։ Ասկանալի բան է, որ այդ բոլոր վարձութիւնների ժամանակ իսկական ուսումնարանական կրթութիւնը պէտք է բաւական թուլանար։ Որքան աւելանումէին ջննի հմտութիւնները ծովային գործերի մէջ, այնքան յետ էր գնում նա լատիներէն և յունարէն լեզուներում, և կոմմոդորը թողնումէր մանկանը իւր ճանապարհով գնալ մտածելով, որ այդ բոլոր կողմանակի բանները, ինչպէս նա նայումէր ուսումնական իրերի վերայ, ժամանակով իրանք լոյս կ'ընկնեն։ Ջննի ուսուցիչը լաւ ժամանակ էր անցկացնում, երբ նորա աշակերտը լողումէր պատերազմական նաւի վերայ. նա գնումէր զբօսնելու, կամ

Նստումէր իւր առանձնասենեակում և պարապումէր  
այն բանով, որ նորան ամենից աւելի էր գուր գալիս:

Ո որանից յառաջացաւ այն, որ ջ օնը տասնուշորս  
տարեկան դարձաւ, և ուսումնական առարկաներից  
աւելի փոքր տեղեկութիւն ունէր, քան թե մի ու-  
րիշ տասնամեայ մանուկ, թէւ առանց երկար մտա-  
ծելու կարելի էր նորան յանձնել մի իսկական պա-  
տերազմական նաւի հրամանատարութիւնը:

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ:

#### ԽՈՐՀՐԴԱԿՈՐ ՏՈՒՆԸ:

«Ճռվմա՛ս», ասաց մի օր կոմմոդորը իւր նախ-  
նի ղեկավարին, — «Ճռվմա՛ս, գործը այլ ևս չէ:  
կարող այսպէս շարունակուել պէտք է փոխուի»:  
«Ո՞ր գործը, ձ. հ.»:

«Ես ամաչեցի, ճռվմա՛ս, ճշմարիտ, ամաչեցի,  
ինչպէս մի փոքրիկ մանուկ, որին ցոյց էին տուել  
ճիպուսերի համը»:

«Բայց ինչու, ձ. հ.»:

«Ե՛ս, դու ինքդ գիտես այդ: Երեկ, երբ երէցը  
այնտեղ էր իւր որդու հետ, որ դեռ ևս մանուկ  
է ջ օնի հետ համեմատելով, ես զարհուրանքով  
տեսայ, որ ջ օնը յատկապէս ոչինչ չէ ուսել»:

«Ե՛ս, ի՞նչ էք ասում, ձ. հ.: ջ օնը այսօր ևս  
կարող է նաւապետ դառնալ Արքին Անծութեան  
ծառայութեան մէջ, այդ շատ է, ես կարծումեմ»:

«Ղյովմաս, մեր՝ ծովագնացներիս աչքում, բայց ոչ աշխարհի աչքում», պատասխանեց կոմմոդորը, գլուխը շարժելով: Երեցը ինձ խիստյանդիմանեց և նախատինք տուեց, որ ես մանկան թողել եմ այդպէս տգէտ մեծանալ, և — ինչ կամենաս, ասա՛, Ծառվմաս, պատանին պէտք է ուսումնարան գնայ: «Վա երեկ յիմարացածի պէս էր կանգնած երեցի փոքր որդու մօտ, որ իւր ջիցերոնն ու Քսհնոփոնտը ջրի պէս էր թարգմանում: Վա ևս ինձ պէս ամաչումէր. մի խօսքով Ծառվմաս, պատանին պէտք է աւելի գիտենայ, քան թէ առագաստը բանալ ուստի և նա պէտք է հեռանայ տանից»:

Օեր Ծառվմասը քրթմնջաց, բայց խկապէս տեսաւ, որ իւր տէրը իրաւունք ունէր, այդ պատճառով և երկար չը հակածառեց: Կանչեցին ջանին, և սա առանց ուշացնելու տուեց իւր համաձայնութիւնը հօր գիտաւորութեան մասին, որ ամենեւն չէր սխալուել, մտածելով, որ ջանը ևս ամաչել էր երեցի փոքրիկ որդու գերազանցութիւնից:

«Ուղարկե՞ր ինձ, հայրիկ, և որքան շուտ՝ այնքան լւաւ», ասաց նա: «Հաւաստի եղի՞ր, որ ես աշխատասէր կը լինեմ, իմանալով, որ քանի վաղ աւարտեմ ուսանելի իրերս, այնքան վաղ կը մըտնեմ ծովային ծառայութիւն: Ուրեմն, ինչ որ լինելու է, թող շուտով լինի, և ես առիթ չեմ տալ

իմ ուսուցիչներին անբաւական լինել իւրեանց աշակերտից»:

Հայրը ուրախացաւ իւր որդու վճռականութեան վերայ, ծեր Ծառվմասը ևս հաւանութեամբ էր շարժում իւր ալկոր գլուխը, թէև շատ գժուար էր նորան իւր սիրելի աշակերտից բաժանուել:

Երեք օրից յետոյ մի կառք կանգնեցաւ ամրոցի առաջը. կոմմոդորը և ջանը նստեցին նորա մէջ և հեռացան գէպ ՚ի ուսումնարանը, որի մէջ մանուկը երկու կամ երեք տարի պէտք է անցկացնէր: Ծառվմասը արտասուքը աչքին նայումէր կառքի յետեկից, և նորա սիրտը այնպէս ծանր էր, ինչպէս երբէք չէր եղած: Եթէ ուրիշ տեղ գնալու բան լինէր, նա չէր բաժանուիլ ջանից. բայց ուսումնարանում, նա լաւ տեսնումէր, որ ոչինչ օգուտ չէր կարող բերել իւր սիրելի պատանուն: Վյուպէս, նա պէտք է բաժանուէր և միսիթարվումէր միայն այն մտքով, որ ջանը գոնէ արձակուրդները տանը կ'անցկացնէ:

Ոինչ նա ամրոցում քրթմնջում ու բարկանումէր, կոմմոդորը ներկայացնումէր իւր որդուն ուսումնարանի գերեկտորին, որ այդ նոր աշակերտին մի կարճ քննութեան ենթարկելուց յետոյ ուղարկեց իւր ուսումնարանի ամենաստորին գասատունը, ուր նստած էին միայն այնպիսի մանուկներ, որոնք առանց բացառութեան շատ տարիքով ջանից փոքրը էին: Կոմմոդորը նեղացած շարժումէր գլու-

Խը և ասումէր. «Դմ մեղն է, ֆօն: Եթէ ես ա-  
ւելի ուսման վերայ պարապեցրած լինէի քեզ, դու  
այժմ փոքրիկ տղայոց հետ չէիր փակուիլ մի սե-  
նեակում: Այդ ինձ տրտմութիւն է պատճառում,  
ֆօն»:

Ֆօնը ժպտաց: «Մի' տխրիր, հայրիկ», ասաց  
նա ուրախաձայն: «Մի' տարուցյետ բանը ուրիշ տե-  
սակ կը լինի, դորա համար ես քեզ խօսք եմ տա-  
լիս»:

Եւ ֆօնը ուղիղ էր ասում: «Կա ամաչումէր  
փոքրիկ մանուկների մէջ, որոնց գրե՛թէ բոլորից  
ես նա դլանով չափ բարձր էր, իսկ ամօթը դրդու-  
մէր նորան բոլոր իւր կարողացածը անել: Ինչ ե-  
ռանդով նա ծովային ծառայութիւնն էր ուսել  
նոյն եռանդով այժմ նստեց նա իւր գրքերի վե-  
րայ, ուստի և զարմանք չէ, որ նա իւր վառ ե-  
ռանդով և բնական ձիքքերով զարմանալի արագու-  
թեամբ գէպ ՚ի վեր էր բարձրանում: «Կորա ու-  
սուցիչները զարմանումէին նորա աշխատասի-  
րութեան և տոկոնութեան վերայ, իսկ ընկեր-  
ները, որոնք սկզբում ծաղրում և անպատվումէին  
նորան, շուտով այլ ևս չէին կարողանում թագնել  
նորանից իւրեանց յարգանքը: Երկու արկածք, ո-  
րոնք պատահեցան մինը միահից յետոյ ֆօնի մըտ-  
նելոց շատ ժամանակ չ'անցած, աւելի սիրելի  
դարձրին ֆօնին և նորա ընկերների մէջ ներշնչե-  
ցին յարգանք գէպ ՚ի նա:

Ուսումնարանի ամենաբարձր դասատանը կար մի  
աշակերտ Ուոբերտ Նաֆերֆիլդ անունով, որ իւր  
հոգեսոր և մարմնաւոր ընդունակութիւններով մի  
տեսակ համարումն էր ստացել միւս մանուկների և  
պատանիքի մէջ: «Կա պատկառելի էր ամէնքին, և  
ամէնքը հնաղանդումէին այն բոլոր հրամաններին,  
որ նա բարեհաճումէր տալ: Մի և նոյն ժամանակ  
նա մի աղնիւ և քաջ տղա էր, որ շատ սակաւ էր  
կամ ամեննեին չէր ՚ի չարը գործածում իւր ոյժը,  
բացի այն գէպքերից, երբ մինը փորձ էր փորձում  
նորա համն առնել: Երեք տարով մեծ լինելով ֆօ-  
նից, նա չէր մօտենում սորան, մինչև որ մի դիպ-  
ուած նոցա աւելի մօտ պատահեցրեց միմեանց: Մեծ  
աշակերտները մի օր գնտակ էին խաղում մի մեծ  
մարգի վերայ, և Ուոբերտ Նաֆերֆիլդը գտնվու-  
մէր խաղացողների թւում: Պատահմամբ գնտակը  
ընկաւ մի փոսի մէջ, որ գտնվումէր խաղալու տե-  
ղի մօտ, և որովհետև ինքը ուրիշ բանով էր պա-  
րապած և չէր կարող խաղը թողնել, առանց իւր  
կուսակցութիւնը կորցնելու, ուստի և աղաղակեց  
գէպ ՚ի մերձակայ մանուկը գնտակը փոսից հանել  
և բերել իւրեան տալ: Պատահմամբ այդ մանուկը  
ֆօնն էր, որ ամեննեին հակամետ չէր այդպիսի մի  
կարձ և շուտափոյթ հրամանի ականջ գնել: Ուո-  
բերտը սաստիկ բարկացաւ և աղաղակեց. «Հիմա՝  
տղա, չե՞ս լսում: Վնտակը բե՛ր, ասումմէ:

«ՀՇՇ, ինքդ վե՛ր առ», պատասխանեց Գօնը չոր  
տ ցամաք: — «Ես քո ծառայն չեմ»:

Ուորերտ Նաֆերֆլյը զայրացաւ, չը կարողա-  
ցաւ այլ ևս ուշադրութիւնը պահել իսպի վերայ  
և տանուշ տուեց իսպի: Բարկացայտ կերպարան-  
քով քայլեց նա գեպ՝ ի Գօնը, որ սառնարիւն և  
անտարբեր սպասումէր նորան, և մի հարուած տու-  
եց նորա երեսին: Գօնը գունաթափուեցաւ, որով-  
հետեւ այդպիսի մի զրկանք երբէք պատահած չէր  
նորան և պատւի զգացմունքը գրգռուեց նորա մէջ:  
«Դու կոպիտ մարդ ես», ասաց նա Ուորերտին:  
«Եթէ քաջութիւն ունես, կը կոռւես այժմ ինձ  
հետ»:

Այդ խօսքերը ասելով, Գօնը վայր ձգեց իւր  
վերարկուն և գճռաբար պատրաստուեց սովորական  
բոքսեկորտե համար: Ո՞ի ակնթարթում բոլոր ու-  
սումնարանի մանուկները հաւաքուեցան երկու ընդ-  
դիմակաց մանուկների շուրջը, որոնք հետեւալ ըո-  
պէին սկսեցին կուիւը: Գօնը քաջութեամբ յար-  
ձակուեցաւ Ուորերտի վերայ և բոլոր ոյժը հաւա-  
բած մի հարուած տուեց իւր թշնամուն: Բայց նո-  
րա աւելի հասակաւոր հակառակորդը շատ գերա-  
զանց էր նորանից, և Ուորերտը հեշտութեամբ կա-  
րող էր վայր ձգել նորան, եթէ գիտութեամբ չէ  
ինայէր իւր մատաղահաս և թոյլ բայց անվեհեր  
հակառակորդին: «Ես զգաց, որ չափն անցել էր,  
հարուածելով Գօնին, և նորա ներքին ազնւութիւ-

նը ստիպեց նորան խնայել իւր հակառակորդին:  
Կոռւին վերջ տալու համար նա լրւնեց, 'ի վերջոյ,  
Գօնի երկու ձեռքը և այնպէս պինդ պահեց որ  
սա այլ ևս չէր կարող կոռւել: 'Ի զուր էր Գօ-  
նը աշխատում ազատուել, նա իւր չարչարանքով  
միայն շարժումէր միւս մանուկների ծաղրը. որոնք  
շատ հակամէտ էին նորա վերայ մի կուշտ ծիծա-  
ղելու:

«Ո ու՛ո կացէք», ձայն տուեց նոցա Ուորերտը:  
«Ե՞ս մանուկը ձեր բոլորիցդ ևս սրտով է և ա-  
մաշելու տեղիք չ'ունի, յաղթուելով ինձանից, որ  
նորանից աւելի մեծ և ուժեղ եմ: Դու գու, Գօն,  
ների՞ր ինձ: Ես առանց մտածելու հարուածեցի  
քեզ և խնդրում քեզանից այդ վիրաւորանքը մօ-  
պանալ»:

Ուորերտի հայեացքը այդ խօսքերը ասելու ժա-  
մանակը այնպէս բարեկամական էր, որ Գօնի բար-  
կութիւնը իսկոյն չքացաւ:

«Ուո՞րերտ», ասաց նա, «գու ազնիւ թշնամի ես:  
Ես քեզ ոչ միայն ներումեմ քո յանցանքը, այլ և  
խոստովանումեմ, որ իմ կողմից ևս տմարդութիւն  
էր, որ ես հրաժարուեցայ քո գնդակը բերելուց:  
Ուստի գու ևս ների՞ր ինձ, և յետոյ մենք ազատ  
կը լինենք»:

Երկու փոքր ինչ առաջ այնպէս թշնամացած  
մանուկները ցնցեցին միմեանց ձեռքը, և գործ վեր-  
ջացաւ: Գօնը և Ուորերտը բարեկամներ դարձան,

որովհետև նոցանից իւրաքանչիւրը դիտէր գնահատել միւսի լաւ կողմերը: Ուորերտը յարգումէր ֆօնիքոյշ պատուասիրութիւնը և քաջասրտութիւնը, իսկ ֆօնը զարմանումէր Ուորերտի ազնւութեան վերայ, որ խնայեց թոյլ հակառակորդին և անկեղծօրէն խոստովանեց իւր յանցանքը: Իսկ միւս մանուկները սորանից յետոյ շատ զգուշանումէին ֆօնին դիպչել, որովհետև տեսնել էին, որ նա առիւծի պէս անվեհեր ու քաջ էր, իսկ քաջասրտի հետ, 'ի հարկէ, հեշտ չէ կատակ անել:

Այդ կերպով ֆօնը ստացաւ իւր ընկերների յարգանքը, իսկ նոցա սէրը նա գրաւեց մի ուրիշ փոքրիկ արկածքով: Ֆօնը գերազանց լողնորդ էր: Մի օր մի քանի մանուկներ՝ նոցա մէջ Ուորերտ ափերփիլդն ու ֆօնը՝ լողանումէին մերձակայ գետում, և Ուորերտը, որ շատ հեռացել էր, յանկարծ ընկաւ հոսանքի մէջ, որ սկսաւ նորան հեռացնել: Ուորերտը լողալ չը դիտէր, նոյնպէս և միւս մանուկները, բացի ֆօնից: Աա՝ հենց որ լսեց Ուորերտի օգնութիւն կանչելը, իսկոյն ընկաւ ջուրը, լողաց դէպ 'ի այն տեղը, ուր նորա աւելի հասկաւոր բարեկամը կասկածելի ջանքով կովումէր մահուան հետ, և բարեբաղդաբար հասաւ նորան այն միջոցին, երբ նա ուժասպառ ջրի տակն էր ընկըդմում: «Իսոնի՛ր իմ մէջքից և զլուխդ բարձր պահի՛ր», աղաղակեց նա դէպ 'ի կիսով շափ ուշաթափուած Ուորերտը: Աա հնազանդեց, և ֆօնը

փոխանակ այդ բեռը մէջքին հոսանքի դէմ կռուելու, այնքան խոչեմութիւն ունեցաւ, որ թոյլտուեց հոսանքին տանել իւրեան մինչեւ որ հասան ափի մի դուրս ընկած մասին: Միքանի ուժեղ շարժմունք ֆօնի կողմից բաւական եղան ցամաքին հասնելու, և, վերին աստիճանի ուրախացած գործի յաջողութեան վերայ, ֆօնը վայր դրեց ափի վերայ եւր ուժասպառ ընկերոջը:

«Լամի՛ր, ֆօն», ասաց Ուորերտը փոքր ինչշղունչ առնելուց յետոյ, «քանի ես կենդանի եմ, այդ անձնազոհութիւնը երբէք չեմ մօռանալ: Լայսուհետեւ, երբ քեզ մի բարեկամ և սորա օգնութիւնը հարկաւոր լինի, յեշի՛ր Ուորերտ ափերփիլդին»:

«Լամւ է, Ուորերտ», պատասխանեց ֆօնը: «Լայտքան բառեր մի գործածիր այսպիսի շնչին բանի համար: Դու ինքդ մի և նոյնը կանէիր, եթէ դու ֆօն լինէիր, իսկ ես Ուորերտ»:

«Ընկառկա՛ծ», պատասխանեց Ուորերտը, «բայց այդ շէնուաղեցնում քո արած ծառայութիւնը: Լամացի՛ր, ֆօն. դու վրկեցիր իմ կեանքը, և այսուհետև կարող ես այնպէս վարուել այդ կեանքի հետ, ինչպէս որ կը կամենաս»:

«Քո կեանքը ինձ հարկաւոր չէ, այ տղա», պատասխանեց ֆօնը սառնարիւն: «Քո բալեկամութիւնն ինձ աւելի հաճելի է: Բայց այժմ լւենք այդ գործի մասին»:

Ուորերտը սեղմեց ֆօնի ձեռքը, և սա փոխա-

Նակեց այդ սեղմումը։ Տարբեկամութեան կապը արգէն կապուած էր, և ուրախ սրտով յետ գարձան երկուսն ևս ուսումնարան։ Գօնի բարի գործը բերանից բերան էր անցնում, և որովհետեւ ամէնքը առ հասարակ սիրումէին Ուրերտ ։ ափերֆիլտին, ուստի այնու հետեւ սիրեցին և Գօնին, որ նորա կեանքը փրկել էր, Գօնի բարի ու աղնիւ բնաւորութիւնը և երկաթեայ աշխատասիրութիւնը բոլորվին լրացրին մնացածը, այն է պահպանեցին ընկերների սէրը եյարգանքը գէպ՝ ի այդ մանուկը։

Ու երջեշեալ փոքրիկ արկածներից կարճ ժամանակ յետոյ ուսումնարանը միքանի շաբաթով փակուեցաւ, և աշակերտները թողեցին նորան, ու իւրաքանչիւրը իւր հայրենիքը վերադարձաւ։ Ուրերտ ։ ափերֆիլտը երկար ժամանակի հրաժարական տուեց Գօնին, որովհետեւ նա իւր ուսումը աւարտել էր և յաւիտեան պէտք է թողնէր ուսումնարանը։

«Եւ ինչ գործի պէտք է ձեռք տաս», հարց-րեց Գօնը։

«Ես կամնում ծովագնաց դառնալ», պատասխանեց Ուրերտը։ «Հայրս միշմանի տեղ է պատրաստել ինձ համար Արեթուզա նաւի վերայ, որի նաւապետը Ու օօդվիլլէն է»։

«Եաւ», ասաց Գօնը, ցնցելով Ուրերտի ձեռքը, — «Արեթուզա, նաւապետը Ու օօդվիլլէն էս այդ կը նշանակեմ ինձ համար, և, կարելի է, մենք

աւելի շուտ կը տեսնուենք; քան թէ դու կարծում ես»։

Կրկին անդամ իւրեանց բարեկամութիւնը հաստատելուցյետոյ երկու մանուկները բաժանուեցան միմեանցից։ Ուրերտը գնաց զէպ՝ ի արևելք, մինչ Գօնը գէպ՝ ի արեմուտք էր շտապում վեցամսեայ բացակայութիւնից յետոյ գարձեալ գրկելու իւր հօրը և ծեր Ծովմասին։ Կրկին տեսութիւնը, ինչպէս և պէտք է կարծել, սրտաշարժ և ուրախալի էր։ Կոմմոգոսը համբուրումէր իւր որդուն, ծեր Ծովմասը գոռում ու գոչումէր սաստիկ ուրախութիւնից, իսկ Գօնը, — է՛հ, ձեզանից իւրաքանչիւրը, իմ մատաղահաս ընթերցողներ, կարող է շատ երեակայել, թէ ի՞նչ է լինուած մանկան սիրտը, երբ նա առաջին անգամ վերադառնումէ իւր հայրենի օթեանը, որից նա երկար ժամանակ հեռացած էր։

Ոիս օրը Գօնը շտապեց ծեր Ծովմասի հետ գէպ՝ ի իւր նաւը, որ, ՚ի հարկէ վերջնս շատ փառաւոր գրութեան մէջ էր պահել, և Գօնը փորձով ցոյց տուեց, որ իւր ծերունի ուսուցչի գասերը ամենակն չէր մոռացել. և հասկանալի է, որ այդ բանի վերայ շատ ուրախացաւ ծեր Ծովմասը։ Վարոցը վերադառնալիս Գօնի աշքն ընկաւ մի նոր շինութիւն, որ նա առաջ ամենեւն չէր նկատել, և նա հարցրեց իւր ուղեկցին, թէ ինչպէս էր նա երեան եկել։

«Այդ մի զարմանալի, խորհրդաւոր պատմութիւն է, Գօն», պատասխանեց ծեր Ուովմասը և պահեց իւր ձիու սանձը: «Անց որ գու հեռացար այն անհծեալ ուսումնարանը գնալու, եկան բաղմաթիւ արհեստաւորներ և երկու ամսում թիերի մէջ շինեցին այս տնակը, որ նոքա պատեցին բարձր պարսպով: Յետոյ մենք շուտով տեղեկացնք, որ այդ տանը մարդ է բնակվում, բայց թէ ով, այդ ոչ ոք չէր կարողանում մեղ ասել: Մի պառաւ կին գուրս է գալիս ժամանակ առ ժամանակ պարսպի մշտափակ գուներից, գարձեալ փակում է գուռը, գնումէ գիշղում միքանի իրեր առանց մի բառ խօսելու մարդկանց հետ և յետոյ վերադառնումէ այդ տունը, որի գոները նա գարձեալ զգուշութեամբ փակումէ: Այս պէտք է մի զարմանալի աշամորդի լինի. որ անձնատուր է եղել մի-այնակեցութեանը և կտրել է ամէն յարաբերութիւն իւր մերձաւորների հետ»:

«Իու իմ հետաքրքրութիւնը շարժումես, Ուովմաս», ասաց Գօնը: «Տի՛ս, ես շուտով կը փորձեմ, չէ՞ կարելի արդեօք պարսպի վերայ բարձրանալ»:

«Չէ՛, մի անիր այդ, Գօն», պատասխանեց Ուովմասը: «Մինը այդ արդէն փորձեց, քեզ նման մի հարցանէր տղա, և շատ վատ հետևանքի հասաւ: Կորա վերայ հրացան են արձակել պարսպի վերայ բարձրանալիս, և ծակուած ուսով նա ցած է գլոր-

ուել: Ուրեմն, հեռով՝ կաց: Խնչ որ մատներդ չէ այրում, մի' հոգար նորա մասին»:

Գօնը լրեց, բայց հաստատ մտքումը դրեց վեր մագլցել պարսպի վերայ և նորա մէջ ամփոփուած գալունիքի հետքը գտնել: Մի առաւօտ, զեռ արել չը ծագած, հեծաւ նա իւր ձին, արշաւեց դէպ'ի այն տունը և ձին կապեց թիերի խիտ տեղում: «Կորքա ամենքը գեռ ևս քնած կը լինեն», ասաց նա ինքն իւրեան: «Ուստի շուտով վեր ենեմ և մի պաստանարան որոնեմ: Օարմանալի կը լինէր, եթէ ես չ'աշխատէի այդ գործի հետքը գտնել: Գօնը չէր մտածում այն բանի վերայ, թէ նա անիրաւութիւն էր անում, թափանցելով ուրիշի գալունիքի մէջ, նա գեռ ևս շատ մատաղահաս էր և կամենումէր բաւականութիւն տալ միայն մի բոլովին պարզ, բնական հարցասիրութեան: «Այն արագութեամբ և ճարպիկութեամբ, որ նա ձեռք էր բերել նաւի պարաների վերայ մագլցելիս, բարձրացաւ նա պարսպի վերայ, մի արագ և զըննող հայեացք ձգեց իւր չորս կողմը և, տեսնելով, որ տան պատուհանները զեռ ևս պինդ կողպած էին, և ոչ մի մարդկային հոգի չէր երեսում պարտիզում, հանդարտ վայր թռաւ: Նազիւ նա վայր էր իջել, լսեց տան դրան բացուելու ձայնը և իսկոյն թագ կացաւ խիտ թիերի մէջ, որոնց ճոխ տերեւազգեստը բոլորովին ծածկեց ու ամփոփեց նորան, սակայն նորա աշքի համար մացին դար-

ձեալ այնքան ծակեր, որոնց միջով նա կարող էր պարզ տեսնել բոլորը, ինչ որ նորա առաջը պատահէր: Տան դռնից դուրս եկաւ մի կին, որ, հաւանական է կարծել, նոյն կինն էր, որի մասին թովմասը արդէն խօսել էր: «Ա նայեց իւր շօրս կողմը, մտիկ արեց երկնքին, երևի եղանակի դրութիւնը տեսնելու, և յետոյ դարձեալ մտաւ տուն, որի դուռը բաց մնաց:

«Ե՛հ», մտածումէր Թօնը, «մինչեւ այժմ ես ո-չինչ զարմանալի բան չեմ տեսնում, և վաղ վերկենալս ու արշաւելս՝ ի զուր անցկացան»:

Ո՞ի ամբողջ ժամ ամէն բան հանգիստ մնաց: Տան ծինելոյզից դուրս էին գալիս ծիփ թեմեւ, կապոյտ ամպեր, որոնք հանդարտ դէպ՚ի երկինքն էին վերանում, իսկ տան միջից լսվումէր ժամանակ առ ժամանակ միայն մի անօթի կամ կաթսայի զրնկոց, որ ցոյց էր տալիս, թէ պառաւ աղախինը զբաղուած էր խոհանոցում: Թօնի համբերութիւնը արդէն հատաւ, և նա շատ հակամէտ էր դարձեալ հեռանալ երբ բեմի վերայ երեցաւ մի նոր անձնաւորութիւն, որ բոլոր մնացեալ բաներից աւելի գրաւեց նորա ուշադրութիւնը: Ո՞ի ծերունի մօտ վաթսուն տարեկան կամաց կամաց դուրս եկաւ տան դռնից և քայլեց ուղղակի դէպ՚ի այն թուփը, որի յետուը թագ էր կացած Թօնը: Ա մի երկայն, նիհար, ծերութիւնից, կամ, լաւ ևս ասել վշտից ու տրտմութիւնից կնճռուած կերպա-

րանք էր: «Աորա ցանցաղ մազերը ձիմնի պէս սպիտակ էին, և երբ նա այնքան մօտեցաւ, որ Գօնը ճիշդ կարող էր զննել նորա գծագրութիւնը, սա զարհուրեցաւ այն սարսափելի, մեռելային դունաթափութիւնից, որով պատած էր ծերունու զէմբըը: Եցրերուն քայլերով փոքր առ փոքր մօտեցաւ այդ մարդը և հասաւ մինչեւ թիւրի սահմանը, ուր մի հասարակ փայտեայ նստարան էր շինած: Լուխինը եկաւ և տիսուր ու կարեկից հայեացքով նայեց ծերունու վերայ, որ նորա ներկայութիւնը ըստ երեսութիւն բոլորովին չէր նկատում: Փոքրիկ սեղանի վերայ, որ նա վայր դրեց ծերունու առաջը, գտնվումէր մի կտոր հաց և սորա մօտ մի արծաթի պոյտն լի կաթնով:

«Ո՞իլօ՞րդ», ասաց կինը, «չէ՞ք ցանկանում նախաճաշիկ անել»:

«Ո՞իլօ՞րդ», մտածումէր Թօնը: «Այս ի՞նչ է, մի՞թէ այսպիսի մի երկելի պարոն է թաղուած այս առանձնութեան մէջ: Այստեղ մի առանձին բան պէտք է լինի»:

«Ծերունին բարձրացրեց իւր կորացրած գլուխը և անթարթ աշքով հոգեվարքի պէս նայեց աղախնուր վերայ: «Ո՞ա՞րթա», ասաց նա յետոյ խուլ ձայնով, «այսօր լրանումէ տասն տարին, որ իմ թշուառ որդին թողել է ինձ՝ ծերունուս: Ո՞ի, Աստուած, Աստուած, դու ծանր ես պատժում ինձ իմ մեղքերիս համար»:

«Ո՞լո՛րդ, երկինքը գթառատ է», պատասխանց աղախինը միսիթարիչ շարժուածքով:

«Ինձ համար այլ ևս գթութիւն չը կայ այնտեղ», պատասխանց ծերունին անպատմելի տիրութեամբ գլուխը շարժելով: «Իմ որդին վերել կանգնած է յաւիտենական դատաւորի առաջը և բողոքում ինձ՝ իւր հօր վերայ, որովհետեւ ես առաջնորա երջանկութիւնը և յետոյ նորան իւրեան սպանեցի: Ինձ համար գթութիւն չը կայ, Ո՞ա՛րթա»:

«Ո՞լո՛րդ, երկնքի ողորմութիւնը մեծ է», պատասխանց աղախինը: «Տասն երկար ու ծանր տարի գուք զղջացել էք և դարձ էք եկել եսկ զըզջումը մեղմացնում և ամենախիստ դատաւորին, ուր մնաց գթառատ Աստուծուն»:

«Ես շատ եմ զղջացելու դարձ եկել և ծնկաչող խնդրել եմ Աստուծոյ ողորմութիւնը», ասաց ծերունին, «բայց Աստուծած իմ աղօթքը չէ լսում, որովհետեւ իմ սիրտը լի է տառապանքով, և ես աչ ու գոլով եմ մտամերում այն ժամը, որ ինձ դատաստանի է կանչելու այն կեանքը: Ինձ համար ողորմութիւն չը կայ, Ո՞ա՛րթա»:

«Ո՛չ, միլորդ, ի՞նչպէս փոքր էք ճռնաչում դուք երկնքի անվերջ բարութիւնը», պատասխանց կինը: «Ո՞իթէ գուք չէք արել բոլորը, որ լաւացնէք այն, ինչ որ գեռ կարող է լաւանալ: Ո՞իթէ գուք հարց ու փորձ չէք արել ձեր հարսի ու թոռան մասին: Ո՞իթէ գուք պատրաստ չէք այդ անտէ-

րունջ որբերին ձեզ որդեգրելու: Ո՞իթէ գուք չէք կամենում ձեր որդու ամուսնուն օրին աւոր ճանաշել, և նորան ձեր գոյքի ժառանգ նշանակել Ո՞իթէ գուք չէք ցանկանում այդ բոլորը անել միլորդ»:

«Ես այդ ցանկանումէի, այո՛, ցանկանումէի այդ, բայց ի՞նչ օգուտ բարի գործելու լոք ցանկութիւնից, երբ մարդ արդէն գործել է չարը: Ո՛չ, որդեա'կ, եթէ գու կարողանայիր կրկին վերագառնալ այն կեանքից, ես յօժարութեամբ կը ներէի քեղբոլորը, քո որդին կը լինէր և իմ որդին, իսկ քո ամուսնուն ես այնպէս կը սիրէի, ինչպէս և քեզ: Ո՛չ, որդեակ իմ լշնստ, ների՞ր քո զղջացող հօրը: Կերի՞ր նորան և այն, որ նա քո կնօջը թշուառութեան մէջ է ձգել և քո մանկանը կորըստեանն է մատնել: Կերի՞ր, ների՞ր»:

«Ծերունին բարձրացրեց իւր գողդոջուն ձեռքերը գէպ ՚ի երկինքը, և նորա աչքերից սահմանին ջերմ արտասուբներ, որոնք այրելով գլորվումէին նորա ներս ընկած, գդգոյն թշերի վերայ: Կորա սրտի յուղմոնները այնպէս զրեղ էր, որ նորա թոյլոյժը չը զիմացաւ: Կա, ուշամեափ եղաւ և թուշացած յետ ընկաւ նստարանի վերայ: Աղախինը երկիղից բարձրաձայն աղաղակեց և արագ քայլերով շտապեց գէպ ՚ի տուն, երեխ, ջուր կամ այլ կազդուրիչ միջոց բերելու: Գանը օգուտ քաղեց այդ վայրկեանից, երբ նա կարող էր անեկատելի

կերպով հեռանալ, արագ մագլցեց դարձեալ պարբապի վերայ, որի յետեւ նա կայծակի արագութեամբ չքացաւ: «Առա սիրու բարախումեր, կարծես. թէ նա մի յանցանք էր գործել, և ձին հեծնելու ժամանակ նա մրմնջաց. «Աա մի խեղճ, տարաբաղտ մարդ է, և ես, յիրաւի, լաւ շարեցի, որ նորա գաղտնիքին ականջ գրեցի»:

Ամրոցը վերադառնալու ժամանակ նա միտք էր անում, թէ արդեօք հարկաւո՞ր էր յայտնել իւր ճանապարհորդութեան հետևանքը ծեր թառվմասին, թէ ոչ, և, 'ի վերջոյ, վճաեց վերջինը: «Այդ անարդարութիւն էր, որ ես պարտէզը մտայ», ասաց նա ինքն իւրեան, «բայց աւելի անարդար կը լինի, եթէ լսածս գուրս տամ ուրիշների մօտ: Ուրեմն, պէտք է լռել ոչ ոք չը պէտք է ինձանից տեղեկանայ այն ծերունու հանդամանքներին, որ առանց այդ ևս բաւական թշուառ ու խլճալի է իւր առանձնութեան մէջ: Աակայն ես կը ցանկայի աւելի ճիշդ տեղեկութիւն ունենալ նորա մասին, կը ցանկայի իմանալ, նորա անունը, և թէ ինչո՞ւ է նա իւր հարազատ որդուն սպանել: Օարհուրելի է — իւր հարազատ որդուն»:

Այս հանդամանքը դեռ երկար ժամանակ զբաղեցնումէր մեր ջօնին, և նա միայն այն ժամանակ, մօռացաւ նորան, երբ կրկին վերադարձաւուսումնարան, ուր խորհրդաւոր տունը այլ ևս ամէն օր ու ամէն ժամ նորա աչքի առաջը չէր: Կարելի

է, նա այլ ևս երբէք չէր լնկնիլ իւր այդ արկածքի յետեւից, եթէ աւելի ուշ առանձին հանդամանքներ ու կապեր կենդանի հետաքրքրութիւն չը զարթեցնէին նորա մէջ: Ուէ ինչ կապեր էին դոքա, մնք յետոյ կը տեսնենք ու կ'իմանանք:

## ԳԼՈՒԽ ԵՐԻՌՈՐԴ:

### Զ Ե Կ Ա Բ :

Վնցել էր երեք տարի այն օրից, երբ ջ՞ոնը առաջին անգամ ուսումնարան մտաւ, և այն ժամանակուայ մանուկը դարձել էր մի գեղեցիկ, վայել-ջակաղմ և ուժեղ պատանի։ Այդ երեք տարուայ մէջ ջ՞ոնը առատութեամբ ներս էր ընդունել այն բոլորը, ինչ որ մանկութեան ժամանակ բաց էր թողել, և ուսումնարանի վերատեսուչը նորա ուսումնարանից հեռանալու միջոցին տուեց նորան մի վկայական, որից երկումէր, թէ նորան պէտք էր հաշուել այն ամենալաւ աշակերտների թւում, ուրոնք երբ և իցէ եղել էին դպրոցում և աւարտել էին ամենամեծ գովասանութեամբ։ Վրապանում դըրած այդ գերազանց վկայականը, որին ջ՞ոնը ամէն կերպով արժանի էր, յետ շտապեց պատանին դէպ՝ ի տուն և ուրախացրեց իւր հօր ու ծերունի բա-

րեկամի՝ թառվմասի սիրտը իւր ծաղկափթիթ, առոյդ տեսքով, իւր արիութեամբ ժողոված գիտութիւնների առատ գանձով և արթուն ու սրամիտ հանձարով, որ բաւական պարզ յայտնվումէր նորա խօսքերի մէջ և արտափայլումէր նորա կայծակնացյատ աչքերից։ Մի քանի շաբաթ շարունակ ջ՞ոնը մնաց իւր հօր ամբոցում, որին ծանր էր թւում կրկին բաժանուել իւր սիրելի որդուց։ Ուեպետամէն օր խօսվումէր այն մասին, թէ ջ՞ոնը իւր ասպարեզը ծովագնացութեամբ պէտք է սկսէր, և տասն անգամ արդէն որոշուած էր նորա Պօրտումուտ ճանապարհորդելու ժամանակակետը, բայց կոմմոդորը միշտ հեռացնումէր այդ, ջ՞ոնին ևս այդ ուշացնելը հաճելի էր, որովհետեւ իւր հայրենիքում նա պակաս հանգիստ և երջանիկ չէր զգում իւրեան, տեսնելով, որ իւր ներկայութեամբ ուրախացնումէր իւր սիրեցեալ հօրը։ Իայց, ՚ի վերջոյ, պէտք էր կարեւոր կարգադրութիւնները անել, և կոմմոդորը մի խնդիր գրեց իւր հին բարեկամին, որ սա ընդունէ նորա որդուն իւր նաւի վերայ երրեւ միշման։ Մի քանի օրից յետոյ եկաւ պատասխանը, որ բոլորովին համապատասխանումէր կոմմոդորի ցանկութեանը, և մնումէր միայն մի բան, որի կատարումը քնքոյշ հօրը, ինչպէս և ծեր թառվմասին, փոքր ինչ ծանր էր թւում։ Ջ՞ոնը նամակի ստանալուց յետոյ արդէն երրորդ օրը պէտք է

Պօրտսմուտ լինէր, որովհետև այդ միջոցին նաւը անյապաղ ծովն էր մտնելու:

«Վայդմ, իմ սիրելի ջնօն, 'ի հարկէ, մենք այլ ևս չենք կարող գործը յետաձգելը, ասաց կոմմոդորը իւր որդուն, նամակի բովանդակութիւնորան յայտնելուց յետոյ: Ա աղը շատ կանուխ գու պէտք է ճանապարհ ընկնես»:

«Ես պատրաստ եմ, հայր», պատասխանեց ջնօնը, «բայց թոյլ տուր, խնդրեմ, հարցնել ինչպէս են կոչվում նաւապետը և նաւը, որի վերայ ես իմ առաջին քայլերը պէտք է անեմ դէպ 'ի ծովապետի աստիճանը»:

«Վրեմուզա, նաւապետը՝ Ա օօդվիլլէ, — փառաւոր նաւ և հիանալի նաւապետ: Դացանից աւելի լաւը ես չեմ կարող ցանկանալ իմ որդուն»:

«Վրեմուզա, նաւապետը՝ Ա օօդվիլլէ», ասաց ջնօնը, ձեռը ճակատին դրած մտածելով: «Վայդ շատ լաւ եղաւ, — կարելի է, ես այնտեղ կը գըտնեմ հին ծանօթիս՝ քաջ Ուօրերտ Հափերֆիդին, որի մասին ես քեզ արդէն պատմել եմ — յիշումես, հայրիկ»:

Կոմմոդորը այդպէս հեշտութեամբ ոչինչ չէր մոռանում ջնօնի պատմածներից: «Վայո՛, այո՛, յիշումեմ», ասաց նա: «Դայց ինչ եղաւ նա»:

«Լի՛չ, երբ մենք բաժանվումենք միմեանցից, նա ինձ հաղորդեց, թէ ինքը գնալու էր Վրեմուզա նաւը ծովագնաց դառնալու, ինչպէս այժմ ես: Ես

շատ կ'ուրախանայի, եթէ նա գեռ ևս այնտեղ լինէր»:

«Ը ատ կարելի է, որ նա գեռ ևս նաւի վերայ լինի», մտածումէր կոմմոդորը: Ինձ ևս շատ հաճելի կը լինէր այդ, որովհետև հին բարեկամը ոչ մի տեղ աւելորդ չէ մարդուս համար»:

Վեւս առաւօտը կոմմոդորը, ծեր թովվմասը և ջնօնը մի կառք նստեցին և արագ սլացան դէպ 'ի այն նաւահանգիստը, որի մէջ Վրեմուզան խարիսխ էր ձգել: Կառքը յաջողութեամբ տեղ հասաւ, և միւս օրը ջնօնը, պատերազմական նաւի տախոտակամածի վերայ կանգնած, գլխով ուղարկումէր հօրը և ծեր թովվմասին իւր վերջին հրաժարական ողջոյնը: Բաժանուելը ցաւալի էր, բայց շուտով կրկին տեսնուելու յոյսը զովարար բալսան էր ածում նոցա սրտերի վերքի վերայ: Դացի դորանից, բոլորի ցանկութիւնն ևս այն էր, որ ջնօնը իւր հօր պէս լաւ ծովագնաց դառնայ, ուրեմն ամենը ևս պէտք է միխթարուէին այն մոքով, որ գոնէ առաջին քայլը այդ նպատակի համար արդէն արած էր:

Հաղիւ թէ կոմմոդորն ու թովվմասը կրկին ափին էին հասել, Վրեմուզայի տախոտակամածի վերայ հնչուեցաւ խարիսխը բառնալու հրամանը, և կարճ միջոցից յետոյ հոյակապ նաւը, առագաստները պարզած, շառաչելով լորաց դէպ 'ի ծովի մէջ տեղը: Ջնօնը կանգնած էր, պատշգամբի վանդակի վերայ

կրթնած, և նայումեր իւր հայրենիքի հողին, որ,  
կարծես թէ, փաքր առ փոքր յետ էր քաշվում և  
կորչումեր գոլորշիքի ու մառախուղի մէջ: Երբ  
նորա վերջին շողքը չքացաւ երկնակամարի տակ,  
արտասուքի մի կաթիլ գլորուեց նորա աչքից, և  
նա ձեռքը քսեց ճակատին, կարծես թէ, կամենա-  
լով տխուր մտքերը այն տեղից սրբել, և յետոյ  
դարձաւ գէպ 'ի իւր մերձակայ շրջապատող առար-  
կաները, որոնց հետ նա կամենումէր իսկոյն ծանօ-  
թանալ: «Աւէի վերայ յատկապէս ոչխնչ նոր բան  
չը կար նորա համար, որովհետև նորա փոքրիկ  
նաւը իսկ և իսկ մի մեծ պատերազմական նաւի  
գաղափարով էր շինած: «Ա, պէտք է սովորէր մի-  
այն աւելի մեծ համեմատութիւնների ու տարածու-  
թիւնների, որ, 'ի հա՛րկէ, չէր կարող նորան ծա-  
նըր երևել:

Ո՞նչ նա աչքը ման էր ածում իւր չորս կող-  
մը, մօտեցաւ նորան մի վայելչակազմ աստիճանա-  
սոր և մտերմութեամբ մեկնեց նորան իւր ձեռքը:

«Նորհաւորումեմ ձեր գալուստը Վորեթուղայի  
վերայ, պ. ՞օն Ո՞ելուրնէ», ասաց մի բարեկա-  
մական ձայն: «Ձեզ երեխ համելի կը լինի մեղ մօտ»:

՞օնը վեր նայեց և իսկոյն ճանաչեց իւր նախ-  
սի ընկերակից Ուօրերտ ափերֆիլդին, որ ար-  
դէն նաւի ծառայութեան չորրորդ, այսինքն՝ լէյ-  
տենանտի աստիճանին էր հասել: Որտանց սեղմեց  
նա իւր ընկերօջ ձեռքը և արտայայտեց իւր ուրա-

խութիւնը հին ծանօթին կրկին տեսնելու վե-  
րայ:

«Իմ բարեկամութիւնը միշտ պատրաստ է ձեզ  
համար, սիրելի ՞օն», ասաց լէյտենանտը, «և երբ  
դուք որ և իցէ ցանկութիւն ունենաք, դարձէ՛ք  
դէպ 'ի ինձ: Ինչ որ իմ ձեռքիցս գալիս է, այն  
պատրաստ կը լինի ձեզ համար, որովհետեւ ես չեմ  
մոռացել, որ իմ կեանքովս ձեր քաջասրտութեանն  
ու անձնազոհութեանն եմ պարտական: Առ այժմ  
միայն այս կարող եմ ձեզ հաւատացնել, որ այստեղ  
ամէնքը բարեկամաբար կ'ընդունեն ձեզ»:

՞օնը արտայայտեց իւր շնորհակալութիւնը իւր  
մեծաւորի բարեկամական առաջարկութեան և յու-  
սադրութեան հսմար, և յետոյ լէյտենանտ ափեր-  
ֆիլդը զրոյց արեց նորա հետ անցած ժամանակնե-  
րի մասին, մինչև որ ծառայութիւնը կանչեց նորան:

«Ո՞խտեր Ռայլ», ձայն տուեց նա մի երիտա-  
սարդի, որ այդ միջոցին անցնումէր նորա առաջից,  
«յանձն առէ՛ք, ինդրեմ, այս մեր երիտասարդ ըն-  
կերօջ հետ փոքր ինչ պարապել և ծանօթացրէ՛ք  
նորան մեր գաղտնիքի սկզբնական հիմունքներին»:

«Ո, Ռայլը ցոյց տուեց, որ պատրաստ էր իսկոյն  
կատարել իւր լէյտենանտի կամքը և մի և նոյն  
ժամանակ մի հետաքրքիր ու զննող հայեացը ձգեց  
՞օնի վերայ, որ հանգիստ ընդունեց այդ և պա-  
տասխանեց մի ժպիտով:

«Իէ՛ս, երիտասարդ պարոն», ասաց յետոյ Ռայ-

լը, «նախ և առաջ, ես կարծումեմ, մենք պէտք է աւելի մօտ ծանօթանանք միմեանց հետ: Ուրեմն, իմացէք. իմ անունս է Գէկ Շարայլ երկու տարի է, որ ես Վրեթուզա նաւի վերայ եմ, և պատրաստ եմ բարեկամութիւն անել ամէն մի նորեկ երիտասարդի հետ, եթէ նորա կապոյտնշանազգեստի տակ մի ուրախ և քաջ սիրտ է տրոփում»:

Գօնը աւելի սուր նայեց իւր առաջնորդին, և սորա արտաքին տեսքը նոյնքան դուր եկաւ նորան, որքան և նորա ուրախ ժպիտը: Գէկ Շարայլը մի գեղեցիկ, սևագանգուր տղա էր տասն և եօթն կամ տասն և ութը տարեկան, նորա աչքերը այնպէս էին վառվում, ինչպէս երկու աստղ գեշերուայ իւաւար երկնքում:

«Շատ լաւ, պ. Շարայլ», պատասխանեց Գօնը իւր ընկերօջ այդ կարճատեև զննողութիւնից յետոյ, «Եթէ ձեզ միայն մի քաջ և ուրախ սիրտ է հարկաւոր, այն ժամանակ, ես կարծումեմ, դուք ձեր ցանկացած մարդուն գտել էք ինձանում»:

«Տեսնե՞նք, տեսնե՞նք», պատասխանեց Շարայլը: «Առ այժմ ես պատրաստ եմ ընդունել թէ դուք ամենապատուական մարդն էք աշխարհիս երեսին, և այդ ենթագրութեամբ ձեղ իրեւ առաջնորդ ծառայել Դառւք երբ և իցէ եղել էք Առին Վեծութեան պատերազմական նաւերից մինի վերայ»:

«Իւս չէ», պատասխանեց Գօնը համաձայն ճշմարտութեան:

«Վա՞թէ: Ուրեմն, կարելի է մի քանի կատակներ անել մինչեւ որ դուք սովոր և ընտանի զգաք ձեղ նաւի վերայ», ասաց Գէկը մի խորամանկ ժպիտով:

«Լարելի է, այնքան շատ չեն լինիլ այդ կատակները, որքան դու կարծումես, մտածումեր Գօնը, որ այնպէս հմուտ էր այն բոլոր կատակնէրին և խորամանկութիւններին, որոնք միշտ սպասումն նորեկներին պատերազմական նաւի վերայ, ինչպէս մի հին ծովագնաց, որովհետև նորա բարեկամ թառվմասը բաւական պատմել էր նորան այդ մասին: «Դու միայն յառաջ գնա, Գէկ Շարայլ, քեզ դուքար կը լինի ինձ թակարդի մէջ ձգելը»:

Գէկը արագ յառաջ գնաց, ցոյց տուեց իւր ուղեկցին զանազան հետաքրքրական և ուշադրութեան արժանի բաներ, և մտքովն անգամ չէր անցկացնում, թէ Գօնը այդ բոլորը այնպէս գիտէր, ինչպէս և ինքը: Որովհետև Գօնը մտածումեր մի կատակ նազար Գէկի գլուխին, այս պատճառով դուշութեամբ ծածկումեր իւր տեղեկութիւնները ծովային կեանքի մասին:

«Խակ այժմ», անաց Գէկ Շարայլը, «երբ մենք ստորին մասը արդէն քննել ու տեսել ենք, հարկաւոր է փոքր ինչ վերին կողմը ևս գիտել: Հարձրանանք կայմնի վերայ, պ. Վելլբուրնէ: Ես առաջ կ'երթամ, և ձեզ հարկաւոր է միայն նկատել,

Թէ ես ինչպէս եմ վարվում պարանի վերայ մագլցելիս»:

«Այստեղ պէտք է բարձրանամ ես», հարցրեց ջնը կեղծ զարհուրանքով, այն ինչ մտքումը ծիծաղումէր, որ նորա խորամանկութիւնը մինչև այժմ այնպէս յաջողումէր: «Ուղիղն ասեմ, ես այդքան համարձակութիւն չ'ունեմ»:

«Ե՛հ, չէ՞ որ գուք ինձ հաւատացնումէիք, թէ քաջ սիրտ ունէք», ասաց Ջէկ Շրայլը փոքր ինչ արհամարհանքով: «Ճ'շմարիտն եմ ասում, եթէ կամենումէք, որ մեր բարեկամութիւնը շարունակուի, պէտք է բարձրանաք»:

Ջնը լսւ գիտէր, որ, եթէ նա չ'զգուշանար, վերև հասնելուն պէս նորա ուղեկեցը պինդ կապելու էր նորան կայմից նաւաստիքի ծիծաղին ու ծաղրածութեանը ենթարկելու համար: Ինյոց նա ամենեին չէր վախենում դորանից, նա մանաւանդ, որ ինքը դիտաւորութիւն ունէր Ջէկին գերազանցել խորամանկութեամբ և նորան իւրեան ձգել այն թակարդի մէջ, որ նա պատրաստել էր կարծեցեալ նորեկի համար: Առ այժմ Ջէկի վստահութիւնը չը թուլացնելու համար նա մի ամբողջ ժամ հրաժարուեցաւ կայմի վերայ մագլցել և երբ, ի վերջոյ, յանձն առաւ այդ, այնպէս անյաջողակ էր ճեանում, որ Ջէկը չը կարողացաւ իւրութախութիւնը ծածկել:

«Ոչի՞նչ, ծիծաղի՛ր», մտածումէր ջնը, — «տեսնենք, վերջն ովկէ ծիծաղում»:

Ժամանակ առ ժամանակ նա կանգ էր առնում, երբեք թէ երկրողից ու գլխի պտոյտից չէր կարողանում յառաջ գնալ բայց Ջէկ Շրայլը չը թողեց նորան, մինչև որ բերեց այն տեղը, ուր նա մտածումէր կատակին մի ուրախառիթ վախճան տալ:

«Այժմ ձգեցէ՛ք ինձ ձեր ձեռքը, պ. Մելբուրնէ», ձայն տուեց նա ջնին:

«Խսկոյն», պատասխանեց սա և ձեռքը տարաւ գրպանը, որտեղ մի պարան էր թագցրել: Ճետեւեալ վայրկեանում նա դորանով կապեց Ջէկին և ուրախ ծիծաղով դուրս թռաւ մի առագաստակալի վերայ, որից նա հին, փորձառու ծովագնացի պէս պարանների վերայով վայր իջաւ տախտակամածի վերայ:

«Այս ի՞նչ սատանութիւն է, պ. Մելբուրնէ», չարացած աղաղակեց Ջէկ Շրայլը, տեսնելով իւրեան այնպէս անակնկալ կերպով իւր սեփական թակարդի մէջ ընկած: «Այդ ի՞նչ սատանութիւն արեցեք»:

«Ե՛հ, պ. Շրայլ, ես կամեցայ միայն ձեզ ցցց տալ թէ ցամաքի մկները շատ անգամ այնպէս յիմար չեն, ինչպէս գուք կարծումէք», պատասխանեց ջնը մի ուրախ ծիծաղով, որին յօժարութեամբ ձայնակեց եղան բոլոր մերձակայ նաւաստիքը: Կթէ գուք ինձ մի քաղցր խօսք կ'ասէք, դար-

Ճեալ կ'արձակեմ ձեզ, եթէ ոչ՝ դուք կարող եք  
փոքր ինչ կապած մնալ կայմնի վերայ և ուրախա-  
նալ շրջապատող գեղեցիկ ծովային տեսարանով»:

«Եկ Շայլի սիրտը ըստ երկութին շատ էր  
ցանկանում բարկանալ բայց նա փոխեց իւր միտ-  
քը և միւսների պէս ծիծաղեցաւ:


«Պ. Անլբուրնէ», ասաց նա, «ես տեսնումեմ,  
որ դուք մի խորամանկ աղուէս եք, որի հետ կամ  
բարեկամ պէտք է լինել կամ թշնամի»:

«Ես կարծումեմ, դուք բարեկամութիւնը կ'ընտ-  
րէք, ֆէկ», աղաղակեց ֆօնը դէպ ՚ի կայմն:  
«Գառնեա ես, հակառակ ձեր, այդ կը գերադասէի»:

«Դէ՛ս, մանուկ սատանայ, եկէք վերե ու ար-  
ձակեցէք ինձ», բացականչեց ֆէկը ժամանով:  
«Ուկատ խարուածը ես եմ, բայց խոստովանու-  
մեմ, որ ձեր կատակը լաւն էր, ուստի և սրտումս  
ոչինչ ոխ կամ ատելութիւն չեմ պահում դէպ ՚ի  
ձեզ: Շայց շուտ եկէք, ֆօն, որովհետեւ դուք  
տեսնումէք, որ ախորժելի չէ այստեղ վերև մնալ  
և համբերութեամբ թոյլ տալ ուրիշներին ծալը  
անելու»:

ֆօնը մի ակնթարթում սկիւռի պէս արագ ու ճար-  
պիկ թռաւ կայմնի վերայ և արձակեց ֆէկին, ո-  
րի ժամանում աչքերում ատելութեան կամ բարկու-  
թեան ամենափոքը հետք անգամ չէր կարելի կար-  
դալ:

«Եա ձեռքը մեկնեց ֆօնին և ասաց. «Եա՛ւ, ե-



րիտասարդ, ես այժմ համոզուեցայ, որ դու ուրախ  
և քաջ սիրտ ունես կրծքիդ մէջ, որովհետև այլա-  
պէս դու չէիր համարձակուիլ ինձ ձեռք տալ և  
խորամանկութեամբ գերազանցել ինձանից: Այսու-  
հետև դու ինձ կ'անուանես ջէկ, իսկ ես քեզ՝  
ջօն, և մենք բարեկամներ կը լինենք: Ա այնո-  
րան, ով որ քեզ ձեռք կը տայ, այնուհետև ես գի-  
տեմ, թէ ինչ կ'անեմ նորան»:

Ջօնը ամեննեին այնպիսի յէմար տղա չէր, որ  
մերժէր այդ ընկերական կապը. ընդհակառակն,  
նա առ ՚ի սրտէ սեղմեց ջէկի ձեռքը:

«Շատ լաւ», ասաց նա, «դու ինձ համար կանգ-  
նած կը լինես, իսկ ես՝ քեզ համար, ջէկ, թող  
այսուհետև մենք միմեանց դաշնակիցը լինենք»:

Նոր բարեկամները իջան տախտակամածի վերայ,  
ուր ջէկը միքանի կատակներով ներկայ գտնուող-  
ների ծիծալելու ցանկութեանը իւր անձի տեղ մի  
ուրիշ առարկայ տուեց, իսկ յետոյ տարաւ ջօնին  
միշմանների սենակը, որ այդ նոր անդամն ներկա-  
յացնէ մմացեալ ընկերներին: Ջօնը անկեղծ ըն-  
դունելութիւն գտաւ պատահիքի մեծ մասից, որոնք  
դրե՛թէ բոլորեքեան ևս նորա հասակակից կամ  
նորանից փոքր ինչ աւելի տարեց էին, և ոչ ոք  
փորձ չէր փորձում նորա հետ խաղ առնել, ինչ-  
պէս սովորութիւն էր անել բոլոր նորեկների հետ:  
Ջօնը կարողացաւ այստեղ ևս, ինչպէս և իւր կեան-  
քի ասպարէզի սկզբում, յարգանք ստանալ ինչպէս

երբեմն ուսումնարանում, և նորա հետ արդէն սկըզ-  
բից վարվումէին ոչ թէ ինչպէս նորեկի, այլ ինչ-  
պէս մի հին ընկերօջ հետ, որի մասին լսած էին,  
թէ չէ թոյլ տալիս իւր հետ կատակ անել: Այս-  
պէս ազատուեցաւ Գօնը զանազան ծաղրածութիւն-  
ներից, որովհետեւ ցոյց էր տուել թէ բաւական  
քաջութիւն ունէր պատասխան տալու ամէն մար-  
դու, որ ցանկութիւն կը ցոյց տար նորան դիպչե-  
լու: «Նորա բարի ու ազնիւ բնաւորութիւնը կա-  
տարեց մնացեալը Արեթուղայի նաւորդների աչքում  
նորան հաճելի անելու համար, իսկ ինչ որ վերա-  
բերումէ նորա ծառայութեանը, նա այնպէս ճիշդ  
և խղճմանքով էր կատարում իւր պարտականու-  
թիւնները, որ շատ շուտով Ոօօդվիլլէ նաւապե-  
տի և սորա զօրապետների յայտնի սիրելին դար-  
ձաւ: «Նաւաստիքի սէրը Գօնը կարողացաւ գրա-  
ւել փոքրիկ ընծաներով և քաղցր վարքով, և այդ-  
պէս, նորա գալուց մի քանի շաբաթ յետոյ Արե-  
թուղայի վերայ այլ ևս մարդ չը կար, որ Գօնի  
վերայ քաղցր աչքով չը նայէր: Գօնը ևս իւր  
կողմից ամէնքի հետ լաւ էր վարվում, բայց ամե-  
նից աւելի իւր բարեկամ Գէկի հետ, որի հետ  
նա շուտով, ինչպէս ասումեն, մի սիրտ և մի հոգի  
դարձաւ: Գէկին ու Գօնին միշտ միասին էին տես-  
նում, և այդ երկուսի բարեկամութիւնը շուտով  
խօսակցութեան առարկայ դարձաւ նաև վերայ:

### ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՒԴԻ:

### Զ Է Կ Ա Բ Ս Ա Գ Ո Ւ Մ Ը :

Ոօօդվիլլէ նաւապետը հրաման էր ստա-  
ցել պտտել Արիջերկրական ծովի ջրերում և,  
որքան կարելի էր, վեստել Գրանսիացիքին, որոնց  
հետ մեր պատմութեան ժամանակներում Անդլիան  
պատերազմ ունէր: Այսպէս, նա արիաբար նաւու-  
մէր այս և այն կողմը, և բոլոր Արեթուղափի վե-  
րայ գտնուողների աչքերը ուշադրութեամբ նայու-  
մէին, որ թշնամու ամենափոքր հետքն անգամ չը  
բաց թողնեն: Իայց անցնումէին շաբաթներ առանց  
մի պատերազմ բացուելու: ՚Վ վերջ, հեռուում  
նկատեցին մի առագաստ, որ թշնամեացն էր երեսում,  
և նաւապետը իսկոյն հրաման տուեց ուղղակի նո-  
րա վերայ նաւել: «Նկատած նաւը ըստ երկութիւն  
նոյնքան ցանկութիւն ունէր պատերազմելու, որ-  
քան և Արեթուղայի նաւորդները, որովհետեւ մին-

չե ճանապարհի կէսը ինքը յառաջ եկաւ սորա դիմացը: Ո՞ի ժամից յետոյ երկեցաւ, որ նա լնտիր զինորներով և բաղմաթիւ թնդանօթներով զրահաւորուած մի պատերազմական նաւ էր:

«Իւս Արեթուզայից մեծ է», ասաց Գէկը Գօնին: «Ես կարծումեմ, մի աշխոյժ պարահանդէս կը լինի»:

«Դու կարծումես, նաւապետը կը պատերազմի՞ աւելի զրեղ հակառակորդի հետ», հարցրեց Գօնը:

Գէկը ժպտաց: «Որովհետեւ նա աւելի մեծ է, այդ գեռ չէ նշանակում, թէ նա և աւելի զրեղ է», պատասխանեց նա: «Եւ թէկուղ այդպէս ես լինի. մենք Անգլիացիք ենք, իսկ նոքա Գրանսիացիք. միւս տարբերութիւնները ոչնչանումն դորա առաջը»:

«Ինձ շատ հաճելի կը լինէր այդ», պատասխանեց Գօնը սառնութեամբ: «Ես արդէն վաղուց է փափագումեմ մի փառաւոր կոռու մասնակցել: այրըս և ծեր թողմասը իւրեանց պատմութիւններով շատ են զրգուել իմ հետաքրքրութիւնը այդ մասին»:

«Եւ ժմ դու կը տեսնես, որ կատակ չէ լի թընդանօթները գատարկելը», նկատեց Գէկը: «Ի՞այց յոյս ունեմ, որ դու քաջութիւնդ չես կորցնիլ, Գօն: Լմօթ կը լինէր, եթէ մի ծեր ծովագնացի որդին երկիւղ ցոյց տար»:

«Անհոգ կաց, Գէկ», ասաց Գօնը սառնու-

թեամբ: «Ես քո բարեկամը չեմ լինիլ, եթէ բացարձակ կռուից վախենամ»:

Այդ վայրկեանում հնչուեցաւ թմբուկը նշան տալու, որ ամեն մարդ պէտք է պատրաստ լինէր պատերազմի համար, և իւրաքանչիւրը շտապեց եւր տեղը բռնել: Ճինդ բռպէից յետոյ ամեն բան պատրաստ էր կռուի համար, և առաջին թնդանօթը որոտաց Գրանսիացւոց պատերազմական նախից: Գէկը նայեց իւր ընկեր Գօնի վերայ և բռնեց նորա ձեռքից: Գօնը կանգնած էր հանգիստ և աչքերով հետեւումէր թնդանօթի գնուակի ընթացքին, որ գալիս էր ալիքների վերայ պարելով, և ժպտաց փոքր ինչ արհամարհաբար, երբ նա, Արեթուզային հասնելով, յետ խփուեցաւ և յետոյ, թոյլ ու անզօր, ինչպէս և առաջ էր, լնկղմեցաւ ջրի մէջ:

«Եւ նշան է այդ», ասաց նա հանգստութեամբ: «Եթէ միւս գնտակներն ես սորանից աւելի վնաս չը պատճառեն մեղ կարծեմ, մենք աժան կը պըրծ նենք այստեղից»:

«Ե՞ն, Գօն, դու, յիրաւի, այնպէս հանգիստ ես, ինչպէս երկումես, թէ միայն ձեւացնումես քեզ այդպէս», հարցրեց Գէկը. երկիւղի ամենափոքր հետք անգամ չը նկատելով իւր ընկերոջ երեսին այն բռպէին, երբ թնդանօթի որոտումը հնչուեցաւ ծովի վերայ:

«Եպա ի՞նչ, երկիւղ», հարցրեց Գօնը: «Ու

Ես նոր ասացի քեզ, թէ ամենկին երկչոտ չեմ։  
«Ղյո՛, բայց ես քեզ չէի հաւատում, ՞՞՞ն»,  
պատասխանեց ՞էկը, «որովհետև ես պէտք է քեզ  
ասեմ, որ իմ ձանաշած նորեկների մէջ դու միակն  
ես, որ թնդանօթի ձայնից ամենափոքր դող ան-  
գամ չես զգում, առաջին անգամ պատերազմ դուրս  
դալով»։

«Լ՛հ, դու կատակ ես անում», պատասխանեց  
՞՞՞ը ժպտալով։ «Ո՞վ կը վախենայ իւր պարտքը  
կատարելուց։ Խսկ ծովագնացի առաջին պարտքը,  
իմ կարծիքով, քաջասրտութիւնն է»։

՞՞՞ի բոլորովին հանգիստ և անվրդով կերպա-  
րանքը պարզ ցոյց էր տալիս, որ նա այն էր զգում,  
ինչոր խօսումէր, և ՞էկը շատ ուրախացաւ, տես-  
նելով, որ նորա ամենալաւ բարեկամի սիրտը այն-  
պէս փառաւոր կերպով դիմացաւ։ Թշնամեաց հետ  
զարնուելու առաջին փորձին։

«Ղյո՛, պատանի, ես տեսնումեմ, որ դու իմ  
բոլոր սիրոյն արժանի ես», ասաց նա։ «Խսկ այժմ  
զգութութիւնն է հարկաւոր, գործը ծանրակշուն է»։

Երկու նաւերը այնքան մօտեցան միմեանց, որ  
ատրճանակի գնտակը կարող էր հասնել մինից մին-  
չե միւսը։ Ղյոժմ Ա օօդվիլլէ նաւապետը բացեց  
պատերազմը, հրամայելով նաւի առաջին և լայն  
կողմը դատարկել։ Փշրուած գնտակները սկսան  
թռչել այս և այն կողմը։ Այի քանի բոպէից յե-  
տոյ երկու նաւերն ևս պատաճ էին վաւոդի ծխի

ամպերով, և հրաձգութիւնների ճայթիւնը այնպէս  
սաստիկ էր, որ աղմկի մէջ հազիւ էին լսվում նա-  
ւապետի հրամանները։ ՞էկն ու ՞՞՞ը սառնու-  
թեամբ կատարումէին իւրեանց պարտականութիւ-  
նը, և երկուսն ևս շատ անգամ ժպտումէին, երբ  
տեսնումէին, որ պատերազմը իւրեանց համար յա-  
ջող ուղղութիւն էր ստանում։

«Պրանսիացին թուլանումէ», ասաց ՞էկը, «նո-  
րա կրակը այլ ևս այնպէս կանոնաւոր չէ գալիս,  
ինչպէս մինչեւ այժմ, և կուեր շուտով կը վերջա-  
նայ։ Տե՛ս, կէս ժամ չ'անցած, մենք «յաղթու-  
թիւն» կը գոռանք»։

Արդարէ, թշնամու ընդդիմութիւնը, կարծ ես,  
թուլանումէր, այն ինչ Ղնդիլիացւոց ջանքը կրկնա-  
պատկվումէր։ Պրանսիական նաւը արդէն ողբալի  
կերպով կործանուելու վերայ էր, երբ մի լաւ նշան  
դրած թնդանօթի գնտակ թշնամեաց նաւապետին  
վայր ձգեց։ Ղյոժմ շատ կետերում պատերազմը  
ինքն ըստ ինքեան գաղաքացաւ, և հետևեալ վայր-  
կեանում թշնամեաց նաւը նշան տուեց, թէ կամե-  
նումէ անձնատուր լինել։ Այնչեւ այժմ թէ ՞է-  
կը և թէ ՞՞՞ը անվաս էին մնացել, բայց այժմ,  
երբ յաղթութեան ձայնը հնչուեցաւ Ղըբթուզյի  
վերայ, ՞՞՞ը զգաց մի այրող ցաւ ձախ կոան վե-  
րայ, և ՞էկը բացականչեց. «Ղատուա՛ծ իմ, դու  
վիրաւորուած ես, ՞՞՞»։

Յերաւի, թշնամեաց հրացանների վերջին գըն-

տակներից մինը անցել էր ֆանի ձախ բաղկի միջով, և արիւնը ալբերակի պէս հոսումէր նշանագեստի պատռուած թեր վերայով:

«Եսդ ոչինչ, ֆէկ, պատասխանեց ֆանը հանգիստ, և շարժեց վիրաւորուած կուռը: «Դու տեսնումես, որ ոսկրը առողջ է մացել, իսկ այդ փոքրիկ վէրքը մսի մէջ շուտով գարձեալ կ'առողջանայ»:

Այսկայն շուտով ֆանը զգաց, որ արեան կորըստի պատճառով նորա ուժերը սպառվումէին: «Ես գունաթափուեցաւ, ինչպէս զի, սառն բրտինքը պատեց նորա ճակատը, և նա թուլացած վայր կ'ընկնէր տախտակամածի վերայ, եթէ ֆէկը իւր գերկը չ'առնէր նորան: «Ես տարաւ իւր վիրաւորուած բարեկամին ստորին սենեակները և շատ ուրախացաւ, երբ բժիշկը հաւատացրեց նորան, թէ վէրքը ամեննեին վտանգաւոր չէր: Ա էրքը կապելուց յետոյ ֆանը կրկնն ուշքի եկաւ և այնքան ոյժ զգաց իւր մէջ, որ ֆէկի օգնութեամբ կարողացաւ բարձրանալ իւր կախաղանաւոր անկողինը, որից նա մի քանի օր այլ ևս չը պէտք է վեր կենար: «Քանի որ նա հիանդ էր, ֆէկը չէր հեռանում նորա կողքից, որովհետեւ լէյտենանտ ջափերփիլքը, կարեկցելով ֆանին, թոյլ էր տուել նորան բոլորովին նուիրել իւր անձը իւր մատաղահաս բարեկամի ինամատարութեանը: Ա էրքից յառաջացած տենդի տեղութեան բոլոր ժամանակը

նա տալիս էր ֆանին ամէն տեսակ գիւրութիւն, զովացնումէր նորա այրող վէրքը և ամէն կերպով աշխատումէր նորա ցաւը մեղմէլ: Գիշերները նա հսկումէր ֆանի մահճակալի մօտ և նորա ամէն մի ցանկութիւնը կատարումէր անձնազոհ սիրով և յօժարութեամբ: Ֆանը լաւ էր նկատում իւր բարեկամի հոգատարութիւնը և երախտագէտ հայեագքով էր աշխատում վարձատրել նորան այդ հաւատարմութեան համար, երբ գեռ ևս այնքան թոյլ էր, որ իւր շնորհակալութիւնը չէր կարող բառերով արտայայտել: Ի վերջոյ, նա դարձեալ առողջացաւ, և այժմ կատարեց այն, ինչ որ հիւանդութեան ժամանակ ստիպուած էր բաց թողնել:

«Լ սի՞ր, ֆէկ», ասաց նա, երբ երկուքը միասին առաջին անգամ կանգնած էին դարձեալ տախտակամածի վերայ, «քանի որ ես կենդանի եմ, քո սէրը չեմ մոռանալ, հասկանումես: Ես շատ բառեր չեմ կարող ասել, բայց դու ինձ ճանաչումես, և այդ բաւական է»:

«Լ ա՛ւ է, լաւ», պատասխանեց ֆէկը և սեղմեց ֆանի ձեռքը: «Ենթ հերթը ինձ կը հասնի, այն ժամանակ դու ևս կը հոգաս ինձ համար, ինչպէս ես քեզ համար, և դորանով բանը կը վերջանայ»:

Ի հա՛րկէ, այլ ևս խօսակցութիւն չ'եղաւ դորամանին, որովհետեւ բարեկամները առանց երկար խօսելու արդէն գիտէին, թէ ինչ պէտք է սպասէին միմեանցից:

Այնչդեռ ֆանը հեւանդ պառկած էր, լրեթու-  
զան նաւել էր գեղ ՚ի Մասինայի նաւահանգիստը  
կանգ առնելու և պատերազմում կրած վնասի տե-  
ղը լրացնելու համար: Երբ խարիսխը ձգեցին, և  
ֆանայեց ծաղկաւէտ, գեղեցիկ ցամաքի վերայ,  
որ պարտէղի նման տարածուած էր նորա աչքի ա-  
ռաջը, սաստիկ ցանկութիւն զգաց մի փոքր ժամա-  
նակ ափումն անցկացնելու, և հարցրեց ֆէկին,  
արդեօք սա ցանկութիւն չունէ՞ր նորան ուղեկցել:

«Ես շատ կը ցանկայի», պատասխանեց ֆէկը,  
«բայց ինձ երկու բան է պակաս գորա համար»:

«Եւ ի՞նչ են գոքա», հարցրեց ֆանը:

«Թոյլատվութիւն և դրամ, որոնք շատ անգամ  
դժուար ճարուելու են», պատասխանեց ֆէկը:

«Ա ՚հ, ի՞նչպէս, գրա՞մ», հարցրեց ֆանը բո-  
լորովին զարմացած և հանեց գրպանից մի բուռն  
ոսկի: «Ես բաւական չէ»:

«Ենտարակոյս բաւական է քեզ համար», պա-  
տասխանեց ֆէկը ժպատալով: «Բայց ինձանում շատ  
պէտք է որոնես, որ մի ոսկի գտնես: Ես չքաւոր  
եմ, ֆանը, և ոչինչ չունեմ, բացի իմ ոռձկից և  
աւարի դրամից, որ մեզ միայն Ենգլիայում պէտք  
է հատուցանեն»:

«Դու չքաւո՞ր ես, ֆէկ, գու՞», հարցրեց ֆանը  
զարմացած: «Բայց ես այստեղ չէ՞մ: Դու այլ  
ես իմ բարեկամը չե՞ս: Ինչ որ ինձ է պատկա-  
նում, այն քո սեփականութիւնը չէ: Լ՚հ, այ զար-

մանալի մարդ, այդ ի՞նչ միտք եկաւ յանկարծ  
գլուխդ»:

«Բայց, ֆան, ես չեմ կարող քո գրպանին ձեռք  
տալ և քո դրամը վճարել իմ զուարձութիւննե-  
րիս համար»:

«Մի՛ յիմարացիր, ֆէկ», ասաց ֆանը փոքր  
ինչ բարկացած: «Դէ՛հ, վե՛ր առ»:

ֆէկը մի հրաժարական շարժուածք արեց և գլու-  
խը շարժեց:

«Եւդպէ՞ս, այդպէ՞ս, սիրելիս», ասաց ֆանը,  
«դու առնումես ինձնից ամենալաւ բանը, և ամենա-  
չնչի՞ն ես ուղում ինձ թողնել՝ Մեր պայմանը  
այդպէս չէ, սիրելիս: Ով իմ սիրտս ստացել է,  
պէտք է ստանայ միւս բաներն ես, որոնք ինձ են  
պատկանում, ուրեմն, ֆէկ, վե՛ր առ, թէ չէ՝ ամ-  
բողջ քսակը ծովն եմ ձգում»:

ֆէկը տեսաւ, որ ֆանը կատարեալ իրաւունք  
ունէր, այս պատճառով այլ ևս չը հրաժարուեցաւ  
ընդունել դրամը, ինչպէս և ընդունել էր ֆանը  
բարեկամութիւնը, այսինքն, անկեղծ սրտով:

«Ես այսպէս աւարտելուց յետոյ», ասաց ֆանը,  
«ես լէյտենանտ ափերֆիլդից թոյլատվու-  
թիւն կը խնդրեմ ինձ ու քեզ համար, իսկ յետոյ  
մենք կ՚երթանք ցամաքը, և այստեղ գու ինձ կը  
պատմես, թէ ինչու գու այնքան դրամ չունես,  
որքան ես»:

Եւ ֆանը կատարեց իւր ասածը, ստացաւ հին-

բարեկամից ցանկալի թոյլատվութիւնը և թիավարեց ջէկի հետ դէպ 'ի ցամաքը:

«Եւժմ հետեւի'ր ինձ, ջօն», ասաց ջէկը: «Ես վաղոց արդէն ճանաչումեմ Մեսսինան, և քեղմի այնպիսի տեղ կը տանեմ, ուր գու կը գըտ՝ նես առաջինը՝ գեղեցիկ բնութիւն, երկրորդը՝ ամենալաւ գինի և երրորդը՝ ընտիր սեղան: Իմացի'ր, որ, եթէ ես քեզ օգնումեմ դրամդ մսխելում, ապա և կամենումեմ գոնեա միջոց տալ, որքան կարելի է, լաւ մսխել այն»:

ջօնը հոգւով յօժար էր իւր բարեկամի կարգադրութեանը ենթարկուել, և քառորդ ժամից յետոյ երկու պատանիքը նստած էին միմեանց մօտ մի կանաչ հովանոցի մէջ և ուրախանումէին ծաղկաւէտ երկրի փառաւոր տեսքով, մեղմ օդով, կապոյս երկընքով, փայլուն արեգակով, և մի և նոյն ժամանակ հիանալի գինւով, որ փայլումէր մաքուր բաժակների մէջ նոցա առաջը դրած հասարակ փայտեայ սեղանի վերայ:

«Եսածդ ուղիղ էր, ջէկ», ասաց ջօնը, զուարթ դէմքով նայելով իւր չորս կողմը, «այս տեղը ցամաքի մի շատ սիրուն մասն է, որի վերայ նայելով մի քանի ժամ հայրենիքն անդամ կարելի է մոռանալ: Մենք այստեղ կը մնանք և զրոյց կ'անենք, երբ դու քո պատմութիւնը կը վերջացնես»:

ջէկը տրտմութեամբ շարժեց գլուխը, և ուրախ, զուարձալի ժպիտը չքացաւ նորա

շրթունքից: «Լոի՛ր, ջօն», ասաց նա, «իմ պատմութիւնը պայծառ և ուրախառիթ չէ և չէ համապատասխանում այս փառաւոր շրջակայքին. թո՛ղ ուրիշ բաների վերայ խօսենք և յօժարակամ չը կորցնենք այս գեղեցիկ օրը»:

«Ե՛ս, ջէկ, եթէ դու վիշտ ունես, ես աւելի պէտք է պահանջեմ, որ գու ինձ հաղորդես այդ», պատասխանեց ջօնը: «Իարեկամը բարեկամից ու չինչ չը պէտք է ծածկի, և ես կարծումեմ, որ մենք բարեկամներ ենք: Ուրեմն, պատմի՛ր և դու՛րս հանիր սրտիցդ բոլորը, ինչ որ քեզ ձնշումէ: Ո՞ւ գիտէ, կարելի է, ես առողջարար ձէթ ունեմ քո կրծքիդ մի քանի գաղտնի վէրքերի համար»:

«Պէ՛ս լաւ, թէ դու ցանկանումես, ես կը պատմեմ», պատասխանեց ջէկը: «Իայց ինձ վերայ մի՛ ձգիր յանցանքը, եթէ ես ինքս տիրեմ և քեզ ես տիրեցնեմ»:

ջէկը յառաջեց այս խօսքերից յետոյ, խմեց մի ումապ այն գինուց, որ նորա առաջը փայլումէր բաժակի մէջ, և յետոյ սկսեց իւր պատմութիւնը հետեւալ կերպով:

«Տե՛ս, ջօն, իմ՝ թշուառ տղայիս, հանգամանքները բոլորովին ուրիշ են, ինչպէս դու ինքդ իսկոյն կը տեսնես, եթէ ես քեզ ասեմ, որ ես իմ իսկական անունն անգամ չը գիտեմ; և, հետեւաբար, աւելի անյայտ է ինձ հօրս անունը»:

«Ե՛ս, ջէկ, ինչ գատարկ բաներ ես խօսում»,

ասաց Գօնը: «Քո հօր անունը Ռայլ եղած կը լինէր, ինչպէս և քոնը»:

«Այդպէս չէ, Գօն, այդպէս չէ», պատասխանեց Էկը. «Ռայլ անունը ինձ մի բարի մարդ է տուել որին ես շատ բան եմ պարտական, 'ի միջի այլոց և այն, որ ես Կորին Մեծութեան ծառայութեան մէջ միշման եմ և քո լաւ ընկերդ, Գօն: 'Կա ինձ տուեց իւր անունը, որովհետեւ, ինչպէս նա ասումէր, իմ սեփական անունը ես չէի կարող անվտանգ կրել, այդ պատճառով նա ամենեին չ'ասաց ինձ այդ անունը: Իայց, համբերիր, մենք կըրկին կը վերադառնանք իմ պատմութեան այդ մասին, ամենից առաջ ես պէտք է քեզ պատմեմ այն, ինչ որ ես գիտեմ, իսկ յետոյ՝ այն, ինչ որ ես եղբակացնումեմ, և այդտեղ դու ևս կարող ես քոթին խառնել ընկնելով ինձ հետ միասին զանազան գուշակութիւնների մէջ: Ուրեմն, լսի՞ր: Ես պէտք է գեռ ևս մի փոքր մանուկ լինէի, երբ հայրըս կենդանի էր, որովհետեւ ես շատ թոյլ կերպով եմ յիշում, որ նա մի գեղեցիկ, բարձրահասակ և վայելչակալը մարդ էր, որ մեզ, այսինքն՝ ինձ և մօրս, ժամանակ առ ժամանակ այցելութիւն էր գալիս մեր կալուածքը»:

«Կալուածք», հարցրեց Գօնը: «Ուրեմն, քո մայրը կալուածք ունի: Այժմ անկարելի է, որ դու այնպէս խեղճ լինես, ինչպէս ասումէիր, Գէկ: «Կանչ զիր զեռ, Գօն», պատասխանեց Գէ-

կը, «այդ փառքը այնպէս մեծ չէ, ինչպէս երկումէ: Մայրս միշտ ուրախ էր լինում, երբ այն մարդը, որին նա իմ հայր էր անուանում, և որ ինձ քնքոյշ հօր պէս սիրումէր, մեզ այցելութիւն էր գալիս կալուածքը. բայց, եթէ նա երկար ժամանակ չէր գալիս, մայրըս ամբողջ օրեր լացով էր անցկացնում, առնումէր ինձ իւր գիրկը և շատ անգամ կրկնումէր. «Տարաբա՛ղս մանուկ, ինչ կը լինի քո վերջը»: Տէ՛ս, Գօն, նա կատարեալ իրաւունք ունէր հոգսի մէջ ընկնելու, որովհետեւ մինչեւ այժմ ես դարձել եմ միայն մի խեղճ միշման, որ մեծ բան չէ, եթէ մարդ աչքի առաջն ունի միշտ միշման մնալ»:

«ՀՇ, Գէկ», ընդհատեց Գօնը, «դու լշյտենանտ ևս կը դառնաս: Համբերութիւն ունեցի՞ր միայն»:

Գէկը փոքր ինչ դառն ժպտաց և ասաց. «Այս՝, եթէ ես լաւ տէրեր ու բարեկամներ ունենայի, այն ժամանակ կարելի էր. բայց այսպէս — ինձ համար փոքր յոյս կայ, Գօն»:

«Այդպէս յիմարաբար մի խօսիր», ասաց Գօնը: «Ես քո բարեկամն եմ, և դու կը տեսնես, որ կարող ես ինձ վերայ յոյս դնել: Իմ հայրը փոքր ինչ ազդեցութիւն ունի, և այդ նա, 'ի հարկէ, առաջ քեզ համար, և յետոյ ինձ համար պէտք է գործածէ»:

Գէկը շնորհակալութեամբ, բայց փոքր ինչ անվստահ սեղմեց Գօնի ձեռքը և շարունակեց պատ-

մութիւնը: «Ես մի կայտառ մանուկ էի, և իմ ամենասիրելի զուարձութիւնն էր թռչկոտել պարտիզի մէջ, որ տարածվումէր մեր տան առաջը: Երբ ես այնտեղ էի լինում, շատ չէի մտածում մօրս մասին, որ լաց էր լինում, երբ ես ծիծաղումէի, և ինձ համար երկնքից բարիք էր մաղթում, մինչ ես անհոգ և ուրախ վաղումէի դոյն զգոյն թիթեռների յետեց: 'Ի հա՛րկէ, այդ մեծ յանցանք էր, որ ես այնպէս փոքր կարեկցութիւն ունէի դէպ'ի մայրս, և պատիժը չուշացաւ: Ո՞ի կիւրակէ — այդ մի գեղեցիկ, պայծառ և երանաւէտ ամառուայ օր էր — մայրս կատարեալ երաւունք ունէր առ ՚ի սրտէ ուրախ լինելու: 'Եա պարումէր ինձ հետ սենեակում, ծիծաղումէր, երգումէր, մի խօսքով, բոլորովին երջանիկ էր: 'Դորա պատճառն այն էր, որ նա մի նամակ էր ստացել հօրիցս, որ գրումէր, թէ կիւրակէ օրը գալու էր: Ի՞այց առաւօտը անցաւ, իսկ հայրս չեկաւ: Ես դորա վերայ տիրած էի, որովհետեւ մայրս ինձ հագցրել էր ամենալաւ հանդերձս, և այդ իսկ պատճառով չը պէտք է այլ անգամների նման թռչկոտէի, որպէս զի մաքուր ու զարդարուած գուրս գայի հօրս առաջը: 'Ի վերջը, երբ կէս օրը արդէն անցել էր, մի կառք երկեցաւ այն խճուլիի վերայ, որ բերումէր դէպ'ի մեր տունը: Ո՞այրս ցնծութիւնից ճշաց իւր սուր ձայնով, և ես ուրախութիւնից սկսեցի ձեռք ու ոտքս գետնին զարկել: Ո՞ենք դուրս վաղեցինք և գնացինք

կառքի առաջը: Այս կանգ պուաւ, բայց հօրս փոխանակ կառքից գուրս եկաւ մի ծեր, մուայլ դէմքով մարդ, նորան հետեւեցին և այլ երկու մարդիկ ոստիկանական նշանազգեստով, և երեքն ևս խիստ ու թշնամական հայեացքով քայլեցին դէպ'ի մեզ: Ո՞այրս գունաթափուեցաւ և, կիսով չափ ուշաթափուած, վայր ընկաւ տան առաջը գտնուած քարեայ նստարանի վերայ: Ես ինքս զգացի մի անսովոր երկիւղ և կպայ մօրս, որ ինձ գրկեց և պինդ սեղմեց իւր կրծքին: 'Ծեր, մուայլադէմ մարդը կանգնեց մեր առաջը, նայեց մեզ թշնամական հայեացքով, և մըմուաց իւր համար մի քանի խօսք, որոնք ես չը հասկացայ, բայց որոնք անկասկած քալցր խօսքեր չընին: Չետոյ նա դարձաւ դէպ'ի մայրս և մի քանի բառեր ասաց նորան, որոնք ես մոռացել եմ: Ո՞այրս լաց եղաւ, ընկաւ այն մարդու ոտները, գրկեց նորա ծնկները, աղաչեց, պաղատեց տարածած բաղուկներով, բայց չը կարողացաւ այն մարդու սիրտը փափկացնել: Ո՞ի քանի խօսքերից յետոյ, որ նա ասաց իւր ուղեկիցներին, սոքա կամեցան ինձ մօրս գրկեց խլել: Ես պաշտպանվումէի կարողացածիս չափ, բայց, ՚ի հա՛րկէ, իմ բոլոր ջանքը ՚ի զուր կը լինէր, եթէ մօրս խօսքերը՝ «կամենումեմ», կամենումեմ», չաղատէին ինձ յափշտակողների ձեռքից: «Լա՛ւ, ես վաղը կը վերադառնամ, տիկին», ասաց անձանօթը մօրս: «Ա ա՛յ ձեզ, եթէ գուր ձեր խօսքը կոտրած լի-

Նէք: Այդ սպառնալիքով նա հեռացաւ մեղանից,  
և ուշաթափուած վայր ընկաւ մայրս»:

«Ես գեր այսօր ևս չը գիտեմ, թէ ինչէր նշանակում այս բոլոր տեսարանը», շարունակեց ջէկը կարճատե լուսթիւնից յետոյ: «Սորա հետեանքը այն եղաւ, որ մայրս արտասուքը աչքին հաւաքեց իւր գոյքի մի մասը և թողեց կալուածքը, որ այլ ևս երբէք չը վերադառնայ այնտեղ: Մ'ենք մի տուն վարձեցինք մեղ համար մի գիւղում Փօրտսմուտի մօտ և կենումէինք այնտեղ խաղաղ առանձնութեան մէջ: Ոչ ոք այցելութիւն չէր անում մեղ, բաց ՚ի մի ծեր ծովագնացեց, ջէմմի Շրայլ անունով, որի հետ ես ծանօթացել էի, և որը իւր ոռօճկի կիսով ապրումէր նոյն գիւղում մեղանից ոչ հեռի: Ես տարայ նորան մօրս մօտ, և որովհետեւ նա ամէն կողմից մի բարեացակամ, պատկառելի և զարմանալի բարեսիրտ մարդ էր երեսում, այս պատճառով և շատ շուտով ստացաւ թշուառ մօրս վըստահութիւնը, որին նա արդա՛ր մի ճշմարիտ օդնական և պաշտպան հանդիսացաւ: Վուանձնապէս հոգ տարաւ նա իմ մասին. նա ինձ տուեց ուսումնարան, վարժեց մի քանի առարկաների մէջ, որոնց մասին չէր յիշում մեր գիւղի պ. ուսուցեչը, և նեղութեամբ, ջանքով ու համբերութեամբ այնքան յառաջ տարաւ ինձ, որ ես տասն և չորս տարեկան հասակում գոնեա այնքան տեղեկութիւն ունէի, որ կարող էի մի պատերազմական նաւի վերայ իբ-



րե աւելորդ միշման ընդունուել: «Եռօրա հին ծա-  
նօթութիւնները օգնեցին նորան այդ տեղը ինձ հա-  
մար ճարելու ջանքերում, և դորա համար ոչ ոք  
այնքան շնորհակալ չէր նորան, որքան խեղճ մայ-  
րըս, որին իմ ապագայի հոգաը անկասկած ստիպել  
է շատ տիսուր ժամեր անցկացնել: Յ եմմի Ծրայլը  
իւր անունով գրել տուեց ինձ նաւի մատեանում,  
և դորա վերայ ևս մայրս շատ ուրախացաւ, այն  
ինչ ես սաստիկ զարմացած էի: «Ճամանակով դու  
կ'իմանաս, թէ ինչու այդ անհրաժեշտ է», պատաս-  
խանեց նա իմ հարցին: «Փա՛ռք տուր Աստուծուն,  
որ մեր բարի բարեկամը քեզ թոյլ է տալիս իւր  
անունը կրել»: Ես, յայտնի բան է, զարմացայ,  
բայց լինելով անհոգ, ինչպէս ամէն տասն և չորս  
տարեկան տղա, այլ ևս չը մտածեցի այդ հանգա-  
մանքի մասին, և Յ էկ Ուօրինզնից — այդ մօրս  
աղքանունն է — դարձայ Յ էկ Ծրայլ որ այժմ  
կողքիդ նստած է, Յ օն»:

«Ե՛հ, յետոյ ի՞նչ եղաւ», հարցրեց Յ օնը, որ  
լսրած ուշադրութեամբ ականչ էր դրել իւր բա-  
րեկամի պատմութեանը: «Ի՞նչպէս բացուեց գաղտ-  
նիքը»:

«Ե՛ա այժմ ևս այնպէս մութն է, ինչպէս և ա-  
ռաջ», պատասխանեց Յ էկը և յառաջեց: «Եմ  
պատմութեան ամենատիսուր մասն այնէ, որ ես, վե-  
րադառնալով առաջին ծովագնացութիւնիցս, որ ինձ

կէս տարու չափ մօրիցս հեռու պահեց, լուր ստացայ, որ մի ամիս առաջ մայրս մեռել էր»:

«Աստուած իմ, խեղճ տղա», բացականչեց ջոնը կարեկցութեամբ — «Իսկ ծերունի ջեմմի Բրայլը»:

«Այսպէս մեռել էր, ջոն: Մօրիցս յետոյ նա միայն մի քանի շաբաթ է ապրել, և ես ժամանակին վերայ հասայ նորա գերեզմանի վերայ մի բուռն հող ածելու: Են, ջոն, երբ ես մտաբերումեմ այդ ժամանակը, ուրախութիւնը երկար ժամանակով փախչումէ ինձնանից, այս պատճառով լաւ է նաւը վերադառնանք, որովհետեւ այսօր ես վատընկեր կը լինեմ քեզ համար»:

Ջէկը տարաւ ձեռքը դէպ ՚ի աչքերը արտեանունքի վերայ գտնուած արտասուքի կաթիլը սըրբելու, և ջոնը լուսվեամբ վեր կացաւ տեղից, տեսնելով, որ սովորական մսիթարիչ խօսքերը այստեղ անտեղի էին:

«Ե՞կ, ջէկ», ասաց նա, քնքշութեամբ գրկելով իւր բարեկամին: «Իայց շատ անձնատուր մի եղբր տրտմութեանը: Եթէ դու ոչ հայր ունես և ոչ մայր, գոնեա ունես մի բարեկամ, որ քեզ իւրեանից աւելի է սիրում: Վիսիթարուի՛ր և յոյս ունեցե՛ր. կարելի է, այս լաբւրինթոսի մէջ ես մի թել գտնեմ, որ կարող է զանազան գաղտնիքներ մելնել: Պառ հօրդ կրկին չես տեսել այնպէս չէ՞»:

«Չեմ տեսել և ոչինչ ես չեմ լսել նորա մա-

սին այն օրից, երբ մեղ հալածեցին մեր քաղցրատեսիլ կալուածքից», պատասխանեց ջէկը «Ո՞ի այն Աստուած գիտէ, թէ ինչ է եղել նա»:

«Իսկ մօրիցդ կամ ծեր ջեմմի Ծրայլից մնացած գոյքի մէջ ոչինչ աեղեկութիւն չե՞ս գըտել»:

«Ես այդ չը գիտեմ, ջոն: Իմ վիշտը այնպէս մեծ էր, երբ ես լսեցի աշխարհիս երեսին իմ միակ սիրելի էակիս մահը, որ ես ոչնչի վերայ չէի մտածում, բացի իմ սրտիս ցաւից, որին ես ակամայ անձնատուր էի լինում: Մօրս թողած փոքրիկ կարողութիւնը կաւավարվումէր մի խնամակալի ձեռքով, որ գտասատանական ճանապարհով էր կարգուել ինձ վերայ, իսկ մնացեալի մասին ես բոլորովին ոչինչ չը գիտեմ. մինչև անգամ գիւղն ևս չեմ գնացել այն ինձ համար սգալի ժամանակից յետոյ: Ես վախենումէի, ջոն, այն տիուր ու ցաւլի յիշատակութիւններից, որոնք անպատճառ կը վրդովէին ինձ վերադարձիս ժամանակը»:

«Իայց այնու ամենայնիւ, ջէկ, մենք պէտք է գնանք այնտեղ, երբ յարմար միջոց գտնենք», ասաց ջոնը: «Ո՞վ գիտէ, թէ ո՞րքան ծանրակշիռ են այն գաղտնիքները, որոնք պատումն քո ծնունդը և ազագան, և շատ կարելի է, մօրդ կամ ջեմմի Ծրայլի թողած թղթերում մի պացոյց գտնուի: Վի՞ կարծիր, ջէկ, թէ ես անհիմն և առանց պատճառի եմ քեզ ստիպում. ընդհակառակն,

գու պէտք է իմանաս, որ ես իմ սեփական կարծիքներն ունեմ այդ գործի մասին»։

Ուշ լնչ տեսակ կարծիքներ էին դոքա, ջանը չէր կամենում բացատրել ։ Բայց ջէկի պատմութեան ժամանակը միշտ տարրուբերվումէր նորա մէջ իւր հայրենի ամրոցի մօտ գտնուած խորհրդաւոր տունը, և նա հարցնումէր ինքն իւրեան. «Ի՞նչ կը լինի, եթէ այն անակի զղջացող ծերունին որ և իցէ կապ ունենայ ջէկի հետ։ Այդ անհնարին չէ այն բոլորց յետոյ, ինչ որ ես լսեցի, մանաւանդ թէ՛ չէր կարող ծերունին այն մռայլատեսիլ մարդը լինել, որ ջէկի մօրը վանել է կալուածքեց։» Կա ծածուկ մտքումը դրեց Անդլիա վերադառնալուց յետոյ թոյլատվութիւն խնդրել հայրենիքը գնալու, կրկին անդամ բարձրանալ այն պարսպի վերայ և ամեն հնար գործ գնել իւր բարեկամ ջէկի խկական անունը և խկական ծագումը իւմանալու։ Կա յոյս ունէր, որ այդ խնդրել առանց վճռուելու չէր պրծնիլ նորա ձեռքից, սակայն լրեց ջէկի առաջը և չը յայտնեց բոլորովին իւր գաղափարները, որպէս զի, եթէ նա խաբուէր, գոնեա այդ խաբէութեամբ չը տիրեցնէր իւր բարեկամին։

### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ:

#### ՊԵՐՈՒ ՓԻՒ Կ:

Մի քանի շաբաթից յետոյ Արեթուզան արդէն լրացրել էր այն վիասի տեղը, որ կրել էր ֆրանսիական նաւի գէմ պատերազմելիս, և նոյն ժամանակին հրաման գուրս եկաւ, որ Աօգվիլլէ նաւապետը վերադառնար Անդլիա մի այլ պաշտօն ստանալու համար։ Ոչ ոք այդ հրամանի վերայ այնպէս չէր ուրախացել ինչպէս ջանը, նա ուրախ էր առաջինը՝ այն բանի վերայ, որ կարող էր իւր հայրենիքը գնալ և յետոյ՝ յոյս ունէր իւր պատերազմում ցոյց տուած քաջութեան և ստացած վէրքի համար հօր և ծեր թառվմասի գովասանքին արժանանալ ։ Բացի գորանից, նորան բորբոքումէր և այն միտքը, որ պէտք է գործ կատարէր իւր բարեկամ ջէկի համար, որի բաղդը նա յոյս ունէր իւր ցանկացածի պէս բաց անել, ուրեմն, և

ամենեին զարմանալի չէ, որ նա ուրախ սրտով էր սպասում հայրենիքը հասնելուն:

Քամին և եղանակը յաջողակ էին. հին Անդլի-այի ափերի կաւճեայ ժայռերը արդէն չքացած է-ին, մի աղօտ, միգապատ գիծ երկումեր հեռուում, և ջնը այլ ևս չէր կասկածում, որ հետեւալ առաւուը ուուը դնելու էր հայրենի հողի վերայ, երբ մի արկածք պատահեցաւ, որ նորա բոլոր գաղա-փարները և յայսերը առ ժամանակ ոչնչացրեց:

Ենակնկալ կերպով Արեթուզան հանդիպեցաւ մի քրանսիական նաւի, որի վերայ խսկոյն և եթ յար-ձակուեցաւ: Բացուեցաւ սաստիկ պատերազմ: Քրանսիական նաւը կարթով բռնուեցաւ. Անդլիա-ցիք՝ ջէկն ու ջնը առաջինների թւում՝ թռան թշնամեաց տախտակամածի վերայ, և այնտեղ իւ-րաքանչիւր մարդ, մահն աչքի տակն առած, դէմ առ դէմ կովումէր միւսի հետ գործին, որքան կա-րելի էր, շուտով վախճան տալու համար: Այնը հրացանի կոթով այնպէս հարուած տուեց ջէկի գլխին, որ սա շմեցաւ և ուշաթափուած վայր ըն-կաւ: «Առյն վայրկեանում Քրանսիացւոց յաջողե-ցաւ իւրեանց նաւը կարթից աղատել և խսկոյն հնչուեցաւ Աօօդվիլլէ նաւապետի հրամանը՝ «Ա-մէնքդյետ քաշուեցէք դէպի ՚ի Արեթուզա»: Կե-րե չընկնելու համար զօրքի այն փոքրիկ մասը, որ թռել էր Քրանսիացւոց տախտակամածի վերայ, պէտք է յետ քաշուէր: Ջնը տեսաւ իւր բարե-

կամին յատակի վերայ ընկած, բարձրացրեց նորան և աշխատումէր գերութիւնից աղատել: Իայց ար-դէն ուշ էր, որովհետեւ նաւերը այնքան հեռա-ցել էին միմեանցից, որ նա չէր կարող այն բեռը վեր քաշած թռչել իւրայինների նաւը: «Ա ձայն տուեց իւր ընկերներին և, գոնէ ջէկին փրկելու համար, ձգեց իւր կիսով չափ ուշաթափուած բա-րեկամին դէպի ՚ի իւր հայրենակիցները, որոնք տա-րածած բազուկներով ընդունեցին նորան, և յաջո-ղութեամբ վայր գրին նաւի վերայ: «Ճառի՛ր», ձայն տուեցին նոքա ջնին: Իայց սա գլուխը շարժեց, որովհետեւ այժմ հեռաւորութիւնը այն-պէս մեծացել էր, որ յիմարութիւն կը լինէր նո-ցա ձայնին լաել: Անդստութեամբ գարձաւ նա դէպի ՚ի Քրանսիացիքը, որոնք բռնեցին նորան և տախտակամածի տակը ձգեցին, որպէս զի նա շա-րունակուող պատերազմում արգելք չը լինէր: Ջո-նը յոյս ունէր, որ նաւը կ'առնուէր, ինչպէս և ա-ռաջին պատերազմական նաւը, և յետոյ, բնական բան է, նա կրկն աղատութիւն կ'ստանար: Իայց այդյոյսը խաբուսիկ յոյս էր: Քրանսիական նաւա-պետը, տեսնելով, որ եթէ պատերազմը շարունակ-ուի, վերջը անպատճառ ինքը պէտք է փանչի, աշխատեց պատերազմից խոյս տալ և, բոլոր առա-գաստները պարզած, սկսաւ փախչել: Ճէպէտ նո-ցա հալածեցին, և ուղարկեցին նոցա յետեկից մի քա-նի թնդանօթի գնտակներ, բայց Քրանսիական ա-

կը այնքան մօտ էր, որ պէտք է հրաժարուէին փախստական թշնամուն ձեռք բերելու դիտաւորութիւնից, այս պատճառով Արեթուզան երեսը շուր տուեց և թողեց Ճան Կօբօլտին, որքան կարող էր, արագ փախչել Գօնը, անտարակցյա, փոքր ինչ տեսրեց դորա վերայ, բայց նա միսիթարվումէր այն մտքով, որ գոնեա փրկել էր իւր բարեկամին և, բացի գորանից, նա յոյս ունէր, որ շատ շուտով գործ կը դրուէին կարեռ միջոցները անախորժ գերութիւնից նորան ազատելու համար: Այս, նա չէր սխալվում այդ բանում, բայց նորա ազատութեան համար գործ գրուած ջանքերը բոլորովին այլ տեսակ էին, քան թէ նա կարծումէր:

Ո՞նչ Գօնը այդպէս անձնատուր էր լինումիւր մտքերին, Գէկը կրկին ուշքի եկաւ, և նորա առաջին հարցն էր՝ «ու՞ր է Գօնը»:

«Գէկ, պատանիս», ասաց Էյտենանտ Աաֆերֆիլդը, որ Գօնի գերութեան վերայ բնականաբար միւսներից պակաս չէր տիրել. «բարեկամիդ դու շուտով չես կարող կրկին տեսնել»:

Գէկը գարձեալ այնպէս գունաթափուեցաւ, ինչպէս և էր իւր ուշաթափուած ժամանակը: «Արդեօք նա վիրաւորուած կամ սպանուած չէ», հարցրեց նա վերին աստիճանի վախեցած:

«Ո՛չ, այդպէս չէ», պատասխանեց Աաֆերֆիլդը: «Աանգստացի՞ր Գէկ, նա միայն գերի է ընկել»:

«Պերի՞ է ընկել, ի՞նչպէս եղաւ այդ», հարցրեց Գէկը:

«Ե՛հ, քեզ փրկելու համար զոհեց իւր անձը ազնիւ պատանին», ասաց Աաֆերֆիլդը և մանրամասնաբար պատմեց, թէ ինչպէս էր եղել այդ անցքը:

«Ո՞ի ուրիշ գերելի հետ չեն փոխիլ նորան», հարցրեց Գէկը, խորին զգացմունքով լսելով Էյտենանտի պատմութիւնը Գօնի հաւատարիմ բարեկամութեան այդ պատցոյցի մասին:

«Քանի պատերազմը տեսումէ, նա չէ կարող փոխուել, ասաց Աաֆերֆիլդը վհատութեամբ: «Խեղճ պատանուն կը պահէն այնտեղ մինչև խաղաղութեան հաստատուելլ, իսկ այդ կարող է շատ ուշ լինել»:

«Լա՛ւ», ասաց Գէկը վճռաբար, ես կամ կազզատեմ նորան, կամ մասնակից կը լինեմ նորա գերութեանը: Ամօթ կը լինի ինձ, եթէ ես նորան բարձի թողի անեմ, երբ նա իւր անձը զոհել է ինձ համար»:

«Ես սպասումէի, որ դու այդպիսի մի փորձ կ'անես, Գէկ», պատասխանեց Էյտենանտը, «բայց, պատանեակ, ծանր է այն գործը, որ դու կամենումս ձեռնարկել: Գրանսիացիք շատ արթուն են Հըսկում իւրեանց գերիներին, որոնցից նորա շատ սպակաւ են ունենում: Եւ դու լաւ գիտես, Գէկ, որ հաղուագիւտ մարգարիտը մարդ աւելի զգուշութեամբ է պահում, քան թէ հասարակ աղբերա-

Քարը: Ա՞ի ձեռք տուր դորան, պատանիս, եթէ  
ոչ՝ մատներդ կ'այրես»:

«Եթէ կեանքս անգամ հարկաւոր լինի դնել այդ  
փորձի վերայ, ես պէտք է անեմ այդ», պատաս-  
խանեց ջէկը: «Եթէ միայն ես կարողանայի ար-  
ձակուրդ ստանալ կարեւոր պատրաստութիւնները  
տեսնելու և երկու ամիս Գյրանսիայումն անցկաց-  
նելու. . . »

«Թոյլատվութեան համար արդէն ես կը հո-  
գամ», ասաց Հաֆերֆիլդը: «Այո՛, ես մինչև ան-  
գամ ուղեկից կը լինէի քեզ. Ջէկ, եթէ Գրան-  
սերէն լեզուին հմուտ լինէի: Իսայց այսպէս իսկոյն  
կ'իմանան, որ ես Անգլիացի եմ, և, փոխանակ քեզ  
օգնելու, կարող եմ բոլորը փշացնել: Իսկ թոյլա-  
տվութեան և դրամի կողմից, ջէկ, դու պակասու-  
թիւն չես ունենալ»:

«Եթէ այդպէս է, շատ բան արդէն ձեռք է բե-  
րած», ասաց ջէկը ուրախութեամբ: «Բարեբաղ-  
դաբար ես այնքան հասկանումեմ ֆրանսերէն, որ  
այնտեղ կարող եմ գործս յառաջ տանել, իսկ ե-  
ռանդի կողմից ինձանում պակասութիւն չի լինիլ:  
Ջօնը պէտք է ազատուի, ինչ և նստէ այդ»:

Հենց որ Արեթուզան Պօֆերի նաւահանդիսաւը  
հասաւ, ջէկը ստացաւ Հաֆերֆիլդից իւր ցան-  
կալի թոյլատվութիւնը անորոշ ժամանակով և մի  
գումար, որ նա բոլորովին բաւական էր համա-  
րում իւր նպատակի համար: Առանց երկար ուշա-

նալու Անգլիայում, նա երկու ձկնորսի օգնու-  
թեամբ փոխադրուեցաւ Գրանսիա և սկսեց իւր  
թափառականութիւնը օտար աշխարհում: Ա՞ի փոք-  
րիկ քաղաքում Կալէի մօտ, ուր նա ավել էր դուրս.  
եկել, գնեց մի հնավաճառից մի հին հանդերձ, ո-  
րով նա թափառական մանրավաճառի էր նմանում,  
ճարեց մի արկղ, որ կաշուէ փոկով ուսը ձգեց, և  
գնեց զանազան վաճառք, ինչպէս՝ մլրատներ, ասեղ-  
ներ, ժապաւէններ, անուշահոտ իւղեր և այլ սո-  
ցա նման իրեր: «Եա իրաւամբ մտածումէր, որ այդ  
հագուստը կարող էր նորան մեծ ծառայութիւն ա-  
նել իւր գերի ընկած ընկերօջ մասին հարց ու փորձ  
անելու ժամանակը, որովհետև միջոց էր տալիս նո-  
րան յարաբերութիւն ունենալ ամէն տեսակ մար-  
դոց հետ, որոնց նա աշխարհի համար անհասկա-  
նալի կերպով կարող էր հարց ու փորձ անել:

Ամէնից առաջ հարկաւոր էր գտնել այն բանիը,  
որի մէջ ձգած էր ջօնը: Ջէկը թափառումէր մի  
ծովելերեայ տեղից դէպ ՚ի միւսը, հարցնումէր  
զանազան նաւահանդիսաւներում այն պատերազմա-  
կան նաւի մասին, որի Պիօնէդ անունը նա բարե-  
բաղդաբար՝ միան էր պահէել և մի քանի օրից յե-  
տոյ տեղեկացաւ, որ նա Կալէի նաւահանդիսաւն էր  
եկել Արեթուզայի տուած վնասի տեղը լրացնելու  
համար:

«Լա՛ւ», մտածեց ջէկը, «կ'երթանք Կալէ:  
Ուր որ նաւն է, այնտեղ կը լինի և գերին. գո-

Նեա ես այնտեղ աւելի հեշտ կարող եմ տեղեկանալ, թէ ուր են տարել նորան»։

Դար արկդը ուսին ձգած, ՞էկը անցաւ բոլոր երկրի միջով, և ոչ ոք չը հարցրեց նորա ովկինելը։ Կալէ հասնելով, նա ամենից առաջ գնեց միքանի աղօց, մուրճ, դուր և այլ երկաթի զէնքեր, որնք կարող էին նորան պիտանի լինել այն բանդի գոները քանդելու, որի մէջ տանջվումէր ՞օնը, և յետոյ իջևանեց նաւահանդսոի մօտ գտնուած մի հիւրանցում, ուր նաւաստիքը շուտ շուտ գալիս էին թթու գինի խմելու և տապակած նապատակների ու այծեամների փոխանակ կատուներ ու շներ ուտելու։ Հիւրասենեակից նա կարող էր բոլոր նաւահանդիսուր տեսնել և ուրախութեամբ նկատեց, որ Դիմուդը, խարիսխը ձգած, հանգիստ մնումէր, և ալիքները այս և այն կողմն էին տարուբերում նորան։

«Դեղեցիկ նաւ է», ասաց նա մի երիտասարդ նաւաստիի, որ, անդործ պատուհանի վերայ նըստած, իւր գլանակն էր ծխում։ «Խնչ է նորա անունը»։

«Այդ Դիմուդն է, պատանիս», պատասխանեց ծովագնացը։ «Դա մի հոյակապ նաւ է, մանաւանդ այժմ, երբ ցածահոդի Անդլիացու հետ ունեցած կոռւց յետոյ կրկին նորոգուել է»։

«Խնչէք ասում», աղաղակեց ՞էկը կեղծ զարմանքով, «նա նորերումս Անդլիացոց հետ կորւ

է ունեցել։ Անտարակոյս, հակառակորդը բոլորովին ոչնչացրած կամ գերի առնուած կը լինի։ Այսպէս չէ»։

«Այդպէս չէ, պատանիս», պատասխանեց նաստանի փոքր ինչ շփոթուած, բայց իսկոյն պարծենալով աւելացրեց. «բայց Անդլիացին այդ վեճակից չէր ազատուիլ, եթէ չը փախչէր։ Ես ինքս կայի այդ պատերազմում և այս պատճառով գործին լաւ տեղեակ եմ։ Մեր նաւապետը, որ, սաւե ելու, ամենաքաջ մարդն է բոլոր նաւատորմիդի մէջ, կամեցաւ կարթով բռնել թշնամեաց նաւը, երբ վատասիրտ Անդլիացին երեսը գարձրեց և սկսեց փախչել։ Մեզ մնումէր միայն թողնել նորան փախչելու, որովհետև ափը այնքան մօտ էր, որ մենք չէինք կարող նորան յետ գարձնել։ Սակայն նա մեզ միտը կը պահէ։ Ողորմելուն բռնցինք և քսան ու չորս մարդ գերի վեր առանք»։

«Մի լաւ պարզի՞ր, ինչպէս եղաւ այդ», հարցրեց ՞էկը վստահ և ողեւորուած, թէպէտ և չէր կարողանում մի և նոյն ժամանակ ծիծաղը պահել Գրանսիացու անամօթ ստախօսութեան վերայ։ «Պատմի՞ր ինձ այդ, խնդրեմ, բարեկամ, այդպիսի պատմութիւնները ես շատ սիրով եմ լսում»։

«Նաւաստիին, ինչպէս երևումէր, վերին աստիճանի փաղաքական երևեցաւ ՞էկի ուշադրութիւնը, և նա պատմեց այն հրաշալի քաջագործութիւնները, որ կատարել էին Դիմուդի մարդիկը».

«Տե՛ս», ասաց նա, «երբ մեր նաւապետը հրամա-  
յեց կարթով բռնել թշնամեաց նաւը, քսան —  
քսան ու չորս հոգի մերոնցից կայծակի արագու-  
թեամբ թռան նոցա տախտակամածի վերայ: Եթէ  
նա իսկոյն չը թեքուէր և երեսը չը շուռ տար,  
կորած կը լինէր: Ի՞այց որովհետեւ կարթով կա-  
պելը չը յաջողեց, այս պատճառով մենք պէտք է  
յետ դայինք, և որպէս զի մեր թռչկոցը՝ ի զուր  
չ'անցնէր, մեղանից իւրաքանչիւրը բռնեց մի մարդ  
և, «յաղթութիւն» ձայն տալով, յետ թռաւ Պա-  
ռմէդի վերայ, որտեղ գերիներին կապեցին և տախ-  
տակամածի տակը ձգեցին:

«Դակ այժմ ո՞րտեղ են նոքա», հարցրեց ՞է-  
կը:

«Ե՛ւ, այնտեղ: «Եայի՞ր, նոցա առ ժամանակ  
ձգել են այն հին աշտարակի մէջ, որ բարձրանու-  
մէ այն փայտեայ տանիքի յետեւը: Խնչպէս լավումէ,  
նոցա կը տանեն աւելի խորը ցամաքի մէջ, որով-  
հետեւ սատանի տղայքը արդէն փորձ էին արել  
փախչելու: Հըմ, բայց նոցա հետքը շուտով դտել  
էին»:

Որպէս զի ոչ մի կասկած չը զարթնի, ՞էկը  
շարունակեց զրոյց անել նաւաստիի հետ մինչեւ այն  
ժամանակ, երբ սա, ՚ի վերջոյ, վեր կացաւ և հիւ-  
րանոցից գուրս եկաւ: ՞էկը արհամարհական ժպի-  
տով նայեց նորա յետեկից և յետոյ ուրախութեամբ  
ձեռքերը տրորեց: «Կասկած չը կայ», ասաց նա

ինքն իւրեան, «որ իմ սկրելի ՞օնը այնտեղ՝ այն  
անիծեալ աշտարակի մէջն է. այժմ հարկաւոր է նո-  
րա վանդակը գտնել: Վնամ, փոքր ինչ մօտից նա-  
յեմ այդ բանդը»:

Վտածելով, գարձեալ ուսը ձգեց նա իւր արկ-  
ղը, ասաց բանդոկապետին, թէ կամենումէ փոքր  
ինչ շրջել առուտուր անելու համար, և հանդարտ  
քայլեց, փողոցէ փողոց անցնելով, դէպ ՚ի աշտա-  
րակը, որ նա գտաւ առանց մեծ զժուարութեան:  
Պա մի հին, բայց տակաւին ամուր և պինդ շե-  
նութիւն էր, շրջապատած մօտ վեց ոտնաչափ բարձ-  
րութիւն ունեցող պարսպով, որ ունէր մի հատ եր-  
կամէ գուռն: Առա վանդակի միջով ՞էկը կա-  
րողացաւ բանդի ներքին բակը ևս գետել և այս-  
տեղ նկատեց մի քանի հատ պահապանների տնակ-  
ներ, որոնց առաջը փայտեայ նստարանների վերայ  
նստած էին 10 — 12 զինուրներ, որոնք անհոգ  
զրոյց էին անում միմեանց հետ, թուղթ էին խա-  
ղում, կամ կատակ էին անում առանց շատ հոգ-  
տանելու աշտարակի մասին: Աս յանձնած էր մի  
քանի այլ զինուրների. որոնք հրացանները ուսե-  
րին լուռ կանգնած էին աշտարակի մուտքի առա-  
ջը կամ աշխատումէին ժամանակը անցկացնելյետ ու  
առաջ գնալով փակած դրան առաջը: ՞էկը նայեց  
զինուրների վերայ, մտիկ տուեց բարձր, ահագին  
աշտարակին և, վհատած, քորեց ականջի յետեւը:  
«Դաժուար պէտք է լինի այդ ահագին քարի աշ-

տարակից մարդ գուրս հանելը», մրմնջաց նա իւր համար: «Աշտարակը լաւ պահպանած է, և, բայց դորանից, այս նեղու երկաթով վանդակած թընդանօթակաների միջով մուկ անդամ չէ կարող անցնել ոչ թէ մարդ: Ինչ և իցէ — ժամանակը կը դայ, հնարն էլ կը դայ: Այդ պէտք է փորձուի, ինչ և արժենայ: Մի բարեկամ, որի սիրտն ու քսակը միշտ բաց է, որ իւր անձն անդամ զոհելէ բարեկամի համար, չը պէտք է բարձի թողի առնուի: Աստուծոյ օգնութեամբ անկարելի բան չը կայ»:

Մեր երիտասարդ մանրավաճառը պատեց աշտարակի շուրջը, և նորա սիրտը փոքր ինչ հանդըստացաւ, երբ նա տեսաւ, որ աշտարակի լուսամուտները յետեի կողմից աւելի մեծ էին և աւելի խոշոր վանդակներով, քան թէ մուտքի կողմից: Իրաւ է, պատուհանները շատ բարձր էին, բայց դունեա հնար կար գուրս գալու:

«Եթէ ֆանը այնտեղ նստած լինէր», մրմնջաց ֆէկը, «և ես կարողանայի հասցնել նորան մի սղոց ու մի զոյտ թէ, այն ժամանակ գժուար չէր լինիլ նորան ազատելը: Բայց ի՞նչպէս հասցնեմ նորան սղոցը, երբ մինչև անդամ չը գիտեմ, թէ որտեղ է նա նստած, թէպետ, ընդհանրապէս խօսելով, նա, այո՛, այստեղ բանդարկած կը լինի»:

Գլուխը շարժելով նայումէր ֆէկը աշտարակի վերայ և մտածումէր, թէ ինչպէս կարող էր վե-

րոյիշեալ կասկածը փարատել: «Եթէ ես զինւորներին ուղղակի հարցնեմ, նոքա կը հասկանան, ինչումն է բանը, և ոչ միայն ոչինչ տեղեկութիւն չեն տալ, այլ ինձ ևս, իրբև կասկածելի մարդու, կը ձգեն իւրեանց անիծեալ աշաբարակը: Բայց այսու ամենայնիւ, ի՞նչպէս կարող եմ ես մի քայլանդամ անել դէպ ՚ի առաջ, մինչև չիմանամ, թէ որտեղ է ֆանը»:

Յանկարծ, կարծես թէ, մի վերին ճառագայթով լուսաւորուեցաւ նորա հոգին: «Նորա միտն եկաւ, թէ ինչպէս հաւատարիմ երգիւ հլուգելը երգով գտելէր իւր թագաւորին՝ Ուիշարդ առիշասրտին, և մտածեց, որ ինքն ևս կարող էր նոյն միջոցը գործ գնել: Կա արդէն կամենումէր ձայնը բարձրացնել և երգել նստաստիքի երգերից մինը, որ ֆանը ամէնից աւելի էր սիրում, երբ մի նոր միտք նորա արդէն բացած բերանը կրկին փակեց:

«Կա՞ց», մտածեց նա, «Եթէ ես անգիտական երգ և անգլիերէն բառեր երգեմ, գորանով ես իսկցին կը մատնեմ ինձ: Ո՛չ, ո՛չ, այս չի լինիլ, եթէ ոչ ամէն բան կ'ոչնչանայ»:

Տիսուր ու նեղացած նստեց նա իսկցին մի ծառի տակ և սկսեց դարձեալ նորհել ու մտածել և մի և նոյն ժամանակ հանդարտ սուլեց իւր համար:

«Լ՛հ, այ յիմար տղա, որ ես եմ», բացականչեց նա յանկարծ: «Ի՞նչ հարկաւոր է ինձ երգել:

Ես կը սուլեմ մի եղանակ, և, եթէ ջօնը ձայնս  
լսէ, նա ինձ կը հասկանայ և նշան կը տայ»:

Կա բերանը սրեց և այնպէս բարձր սուլեց, որ  
ճիւղերի վերայ եղած թռչիւնները, լսելով այն,  
լոեցին և զարմացած վայր նայեցին մատաղահաս  
պատանու վերայ, որ, կարծես թէ, կամենումէր նո-  
ցա հետ մաքառել: ջէկը սուլեց իւր եղանակը,  
յետոյ լոեց, վեր նայեց դէպ 'ի աշտարակը և ա-  
կանջները սրեց, որ ոչ մի ձայն բաց չը թռղնէ:  
Բայց ամէն բան խաղաղ մնաց: ջէկը ոչինչ չէր  
լսում, բացի բակի զինորների ծիծաղից ու զրոյ-  
ցից և յետ ու առաջ գնացող պահապանների հա-  
ւասար քայլերց: «Կա կրկին անգամ սուլեց մի և  
նոյն եղանակը, երրորդ, ըորըորդ անգամ, բայց ո-  
չինչ չը շարժուեցաւ: «Եյժմ վերջին անգամ»,  
ասաց նա կամաց ինքն իւրեան: «Եթէ նա սորանից  
յետոյ ևս ոչինչ նշան չը տայ ինձ, նշանակումէ,  
ձայնս չէ լսում, կամ բոլորովին աշտարակի մէջը  
չէ և կամ մի այնպիսի բանդի մէջ է ձգած, ուր  
դրսից ոչ մի ձայն չէ կարող թափանցել»: «Կա սու-  
լեց առաջուանից աւելի բարձր և ականջ դրեց —  
ինչ էր այդ: Կայծակի արագութեամբ թռաւ նո-  
րա աչքը դէպ 'ի աշտարակը: Ո՞ի պատուհան կա-  
մաց զրնգաց, մի սպիտակ բան երկեցաւ սորա ու  
երկաթեայ վանդակի միջով, և ջէկը համարեա  
բարձրաձայն աղաղակեց, տեսնելով, որ այդ իւր ո-  
րոնած բարեկամի պատկերն էր, փոքր ինչ գունա-

թափ և նիշար, քան թէ առաջ, բայց անփոփոխ  
էին մնացել առաջուայ գծագրութիւնը և հաւատա-  
րիմ, բարի հայեացքը, որ, որոնելով, պատումէր  
չորս կողմը և, 'ի վերջո, գաղարեցաւ ջէկի վե-  
րայ: ջէկը յօժարութեամբ մի ուրախ և բարձրա-  
ձայն ողջոյն կը տար նորան — բայց այդ չը պէտք  
է անէր, որովհետեւ պահապանները և զինորները  
իւրաքանչիւր խօսք կը լսէին: Եյսպէս, նա բաւա-  
կանացաւ միայն նշաններով իմաց տալով բարեկա-  
մին իւր հիացմունքը, յուսալով, որ ջօնն ևս իւր  
պէս աշխոյժ և ուրախ կը պատասխանէր գորան:  
Բայց ջօնը վայր էր նայում ջէկի վերայ բոլո-  
րովին անսատարեր և ոչ մի ժպիտ, ոչ մի շար-  
ժուածք չէր ցոյց տալիս, թէ նա ուրախ էր այդ  
կրկին տեսութեանը:

«Կայծակ, ի՞նչ է եղել ջօնին», մտածումէր  
ջէկը, բոլորովին վրդովուած: «Կա այնպէս է  
շարժվում, որ, կարծես թէ, — երա՛ւ է, երա՛ւ է:  
Կա ինձ չէ ճանաչում այս նոր հագուստովս: Ես՝  
մոռացկոտ յիմարս, մտածել անգամ հարկաւոր չէ  
դորա մասին: Բայց, համբերութիւն, ի՞նչպէս ա-  
նենք, որ նա իսկոյն ճանաչէ»:

«Կա իսկոյն կրկին սուլեց իւր եղանակը, վեր ա-  
ռաւ գլխարկը և ցոյց տուեց իւր կերպարանքը  
ջօնին, որ այժմ յանկարծ բարձրաձայն բացա-  
կանչեց և չքացաւ պատուհանից:

«Մըրը՛կ, այս անյաջող էր», մըմնջաց ջէկը,

չափաղանց վախեցած: «Եթէ այն բակի մարդիկը լսել են այդ աղաղակը, ես կորած եմ, և ջ օնն էլ հետո»:

Եւյիրաւի, բակումը աղմուկ բարձրացաւ, վանդակաւոր գուռը ճռուաց, և արագ քայլեր սկսան մօտենալ նորան:

«Եթէ ես այժմ փախչեմ, այն ժամանակ խուզարկութիւնը կը շարունակեն, կը տեսնեն բաց պատուհանը և ջ օննին մի այլ բանդ կը տանեն»: Վայդ մտքերը կայծակի արագութեամբ անցան ջ էկի գլխովը. բայց նոյն արագութեամբ ևս նա կարողացաւ ելք դանել իւր այդ վտանգաւոր գրութիւնից: Խսկոյն բռնով փշրեց իւր արկղի ապակիներից մինը, սկսաւ թափ տալ օդի մէջ իւր թեթև վիրաւորուած և արիւնոտ ձեռքը, իբր թէ ցաւի սաստկութիւնից, և այնպէս աղաղակումբ, որ, կարծես թէ ասեղի վերայ էր կանդնած:

«Sacre bleu, դու, յիմա՛ր տղա», ձայն տուեցին զինւորները գէպ՝ ի նա, «այդ ի՞նչ տեսարան ես ներկայացնում գու այդտեղ»:

«Օ՛հ, օ՛հ», գոռումբը ջ էկը, թափ տալով ձեռը և մի ոտի վերայ պար գալով, — «օ՛հ, չէ՞ք տեսնում, անիծեալ ընկյու: Կամցաւ արկղիս շըրջանակի վերայ կոտրուել, վայր ընկաւ, ձեռս գրեապակիի վերայ — օ՛հ, օ՛հ, ամբողջ ձեռս պատռուած է ապակու փշրանքից»:

Ջ էկը գոռում ու գոչումբը և մի և նոյն ժամանակ այնպէս ծաղրաշարժ կերպով ծոմոռումբ երեսը, որ զինւորները, փոխանակ կասկածի մէջ ընկնելու, բարձրաձայն ծիծաղեցին և հայհոյանքի ու ծաղրածութեան մի հեղեղ թափեցին նեղծ ջ էկի գլխին: Վայդ երեսս նեղացած այդպիսի անկարեկցութեան վերայ գէպ՝ ի ինքը, նա, 'ի վերջոյ, կիսաձայն քրթմնջաց մի քանի բարկութեան խօսքեր, վեր առաւ գարձեալ իւր արկղը և տրտում հեռացաւ: Բայց հենց որ ծածկուեցաւ մերձակայ թիվբի մէջ, կանդ առաւ, զգուշութեամբ նայեց տերեների միջով և ուրախութեամբ տեսաւ, որ զինւորները, առանց մի հայեացք անգամ ձգելու աշտարկի վերայ, վերադարձան բանդի բակը:

«Վայդ լաւ է», ասաց նա և ուրախութիւնից իւր համար ծիծաղեց յաջողած կատակի վերայ: «Եթէ ինձ մի անգամ յաջողեց քթերիցդ քաշ տալ ձեզ, խորամանկ Գրանսիացիք, ուրեմն, միւս անգամներումն ևս կը յաջողի: Վայդ ես արգէն շատ բան եմ ձեռք բերել տեղեկանալով, թէ որտեղ է ջ օնը, իսկ մնացեալի համար ես յոյս գնումեմ սիրելի Վատուծոյ և իմ լաւ բաղդիս վերայ: Վայդ մնումէ միայն տեղեկութիւն տալ նորան այն դիտաւորութեան մասին, որ ինձ այստեղ է բերել: Ի՞նչպէս հաղորդեմ ես այդ նորան, երբ մենք ոչ մի բառ չենք կարող խօսել միմեանց հետ»:

Ի զուր էր նա գլուխը կոտրում այդ նպատակը:

կին հասնելու համար հնար գտնելու, և կամաց կամաց վերադարձաւ դէպ 'ի բանդի մուտքը մի անգամ ևս դիտելու տեղի դրութիւնը: Համարեա' դրան դիմացը նա նկատեց մի փոքրիկ հիւրանոց և տեսաւ մի քանի զինորներ, որոնք լի շիշերով այնտեղից դուրս եկան և մտան բանտի բակը:

«Աչա՛, մտածեց նա, «դա յարմար կետ է դիտելու համար: Այդ պանդոկի պատուհանից ես կարող եմ միշտ աշտարակը աչքիս առաջն ունենալ և կը տեսնեմ բոլորը, ինչ որ այնտեղ կը պատահի: Այստեղ կը վարձեմ բնակարանս»:

Համարձակ գնաց նա դէպ 'ի այդ հիւրանոցը, բերել տուեց նախաճաշիկ և նստեց օղետան առաջը մի տեսակ բաց հովանոցի մէջ, որտեղ լաւ եղանակին հիւրերը սովորաբար նստումէին թարմ օդ և ազտ բնութիւն վայելելու համար: Այդ կայանից նայեց նա դէպ 'ի աշտարակը և հազար անգամ ցանկացաւ թուշիւն դառնալ, որ կարողանար թուշել դէպ 'ի վերեկ պատուհանը և սորա երկաթէ վանդակի միջով իւր բարեկամի հետ զրոյց անել: Ինյաց այդ միանդամայն անկարելի բան էր և ոչ մի քայլ յառաջ չէր տանում նորան դէպ 'ի նպատակը: Ո՞ինչ նա, իւր հնարագիտութիւն չ'ունենալու վերայ վհատած, իւր չորս կողմն էր նայում, տեսաւ երկու մանուկ, որոնք զուարձանումէին նետարձակելով մի որոշեալ նպատակի վերայ:

«Կտայ, գտայ», աղաղակեց նա ցնծութեամբ,

բայց շատ ցածր ձայնով: «Այժմ հնարը ձեռքումը է: Խնքս չեմ կարող բարձրանալ, գոնեա կարող եմ մի նետ ուղարկել վերև, իսկ նետի ծայրին մի կտոր թուղթ փաթաթել որի վերայ զանազան լաւ բաներ գրած կը լինեն: Իրաւ է, այդպիսի մի թեթև աղեղով գործը չէ կարող գլուխ գալ բայց պէտք է յուսաւ որ այս մեծ քաղաքում կարելի կը լինի մի լաւ աղեղ գանել»:

Ծողորովին ուրախացած այս մտքի վերայ, Զէկը ճանապարհ ընկաւ, տակն ու վերայ արեց կալէի բոլոր գրպակները մի աղեղի համար և, 'ի վերջոյ, գտաւ իւր որոնածը մի զինավաճառի մօտ: Յայտնի բան է, այդ խաղալիքը բաւական թանկէր, և Զէկը մի կասկածաւոր հայեացք ձգեց իւր քսակի վերայ, որ արդէն հասել էր շատ բարձր աստիճանին այն վտանգաւոր հիւանդութեան, որ անուանումն ծիւրախտ կամ բարակացաւ: Ուափառական կեանքը, որ նա պէտք է վարէր 'ի սէր իւր բարեկամի, այն ծախքը, որ նա արել էր մանրավաճառի հագուստը կատարեալ և խաբութիկ ցոյց տալու համար, բաւական դատարկելէին նորաքսակը, և իսեղծ պատանին չը գիտէր, ինչպէս և որտեղից լցնէր նորան: Կարճատեև մտածմունքից յետոյ նա ասաց ինքն իւրեան. «Առաջ ես կը վարժուեմ նետաձգութեան մէջ և յետոյ կը գրեմ Զօնի հօրը՝ այդ հարուստ մարդուն, որ օգնէ իւր որդու աղատութեան համար անելու ջանքերիս մի բուռն

գուբլօններով։ ՞ ՞ ՞ պէտք է աղասուի, այդ հաստատ է, բայց գորանով ամէն բան չէ վերջանում. մենք պէտք է մի նաւակ գնենք, որով կարողանանք նաւել գէպ՝ ՚ի մեր հայրենիքի ափերը, իսկ գորա համար դրամ է հարկաւոր։

Այսպէս էր մտածում ՞ ՞ ՞ լաւ կշռադատէ, ՚ի հա՛րկէ, իրաւացի կը համարէ նորա վճիռը։ « Ախասպէս ուղղեց նա իւր քայլերը գէպ՝ ՚ի այն պանդոկը, որ գտնվումէր բանդի գիմացը. բայց ձանապարհին մի նոր հանդամանք ընկաւ նորա միտը, որ պակաս հոգուի մէջ չը ձգեց նորան, քան թէ փողի պակասութիւնը։ Ինչո՞վ պէտք է արդարացնէր նա իւր երկարատե կացութիւնը պանդոկում։ Ի՞այց այդ հարցը ևս նա կարողացաւ վըճուել։ « Ես ամէն օր մի քանի ժամ գուրս կ'երթամ, և եթէ չեմ մոռանալ արկող ուսս ձգել կը կարծեն, թէ ես այս կարծեցեալ արհեստով եմ պարապում։ Քաղաքը մեծ է, և մի երկու շաբաթ ես կարող եմ այս կերպով կասկածը իւր բնումը լսեղդել, իսկ յետո՞յ — այն ժամանակ ևս մի հնար կը գտնուի։

Բոլորովին հանդստանալով այդ հանդամանքի մասին, ՞ ՞ ՞ ուրախ քայլեց և կանոնաւոր կերպով բնակարան վարձեց « Լապոյտ Վրձիւ » կոչուած հերանոցում, հաղորդելով պանդոկապետին իւր հնարած առասպելը, որ պէտք է արդարացնէր նորա կացութիւնը։ Պանդոկապետը գտաւ գործը շատ պարզ և բնական, և ՞ ՞ ՞ լաւ, վայր դնելով արկողը

իւրեան ցոյց տուած սենեակում, գուրս եկաւ հիւրանոցից և սկսաւ զինորների աչքի առաջը բոլորովին անհոգ վարժուել նետաձգութեան մէջ, նշաւակ ընտրելով իւր համար մի լապտերի սիւն, որ շատ յարմար էր երկում նորա նպատակի համար։ Ինչ որ նա գուշակումէր, նոյնը և պատահեցաւ։ Զաղիւթէ նա հինգ կամ վեց անգամ արձակելէր, մօտեցաւ նորան բանդապահ զինորներից մինը և խստութեամբ հրամայեց իւր վարժութիւնը դադարեցնել։

« Ի՞այց ինչո՞ւ, ընկեր », հարցրեց ՞ ՞ ՞ լի։ « Օ հնարձակութիւնը մի փոքրիկ կիրք է նոն համար, և ես արիութեամբ վարժվումնորանում, որ ժամանակով նոյնպէս լաւ հրածիդ լինեմ, ինչպէս դուք, քաջդ իմ, անկասկած, այժմ էք արդէն »։

Օ ինորին, ըստ երկութիւն, գուր եկաւ ՞ ՞ ՞ կ շողոքորթութիւնը, որովհետեւ նա քաղցրութեամբ ժապտաց և կարեկցաբար ուսերը վեր քաշեց, ասելով. « Ես, բարեկամ, ձեր նպատակը շատ գովելի է, բայց, այնու ամենայնիւ, ցաւելով պէտք է կըրկնեմ, որ դուք այստեղ չը պէտք է շարունակէք ձեր վարժութիւնը »։

« Ի՞այց ինչո՞ւ, հարցրեց ՞ ՞ ՞ լի։

« Որովհետեւ լապտերների սիւները, բարեկամ, լապտերներ կրելու համար են, և ո՛չ թէ իբրև նշաւակ ծառայելու։ Զասկանումէք այդ, սիրելիս »։

« Ե հա՛րկէ, ՚ի հա՛րկէ », պատասխանեց ՞ ՞ ՞ լի

փոքր ինչ տհաճութեամբ: «Այսկայն ես մի շիշգենի կը տայի, եթէ ինձ մի տեղ ցոյց տային, ուր ես կարողանայի անվրդով շարունակել իմ խաղը»:

«Մ' շիշ գինի՞», հարցրեց զինւորը, և նորա աքերը փայլեցան: «Ե՛ս, սիրելիս, ինչու ձեր նպատակի համար դուք օգուտ չէք քաղում այն՝ մեծ տիլեայ ծառից, որ գանվումէ բանդի յետեւը: Ե՛յն-տեղ նորա բունի վերայ դուք կարող էք հաստատել ձեր շրջանակը, և ոչ ոք չի խանգարիլ ձեղ»:

«Էկը փոքր մնաց, որ բարձրածայն բացականչը, այնպէս ուրախացաւ նա զինւորի խօսքերի վերայ:

«Ե՛ս, այդ ևս ուղիղ է», ասաց նա հաճութեամբ: «Ես արդէն մտածել էի տիլեայ ծառի մասին, միայն կարծումէի, թէ ինձ կը հալածէին այնտեղից»:

«Ո՛չ, ո՛չ, ես ձեզ խօսք եմ տալիս, որ այնտեղ ոչ ոք չի խառնուիլ ձեր խաղի մէջ», ասաց զինւորը: «Որքան կամենաք, արձակեցէ՛ք նորա վերայ, բայց լապտերի սիւնը մի՛ ընտրէք ձեզ համար իբրև նշաւակ, բարեկամ»:

Օինւորը գնալու կերպարանք ցոյց տուեց, բայց չանդարս և ուշացնելով, և Պէկը լաւ էր հականում դորա պատճառը: «Ես այժմ այլ ևս չեմ արձակելու», ասաց նա: «Ուրեմն, ես կարծումեմ, մենք կը դատարեցնում անդամակաց այն շիշը, որի մասին ես ա-

ռաջ ասացի: Դուք ցանկութիւն չ'ունէք, բարեկամ»:

Օինւորը բոլորովին հաւանութեամբ գլուխը շարժեց և հաճութեամբ միրուքը հարթեց ձեռքով: «Ինչպէս կամենաք, սիրելիս», ասաց նա: «Ի՞այց իմ պատճառով ինչու էք դադարեցնում ձեր զուարձութիւնը»:

«Ի՞ա՛հ, ես այդ կարող եմ վաղը բաւական վայելել», պատասխանեց Պէկը և մտերմութեամբ բոնեց զինւորի թեկից: «Եշէք, եկէք, եթէ մեղ մի ուրախութեան վայրկեան է երեւում: պէտք է շուտով բռնենք նորան, որ ձեռներիցս չը փախչի»:

Ջապարով հետեւց զինւորը այդ հրաւէրին, և մի քանի բոպէից յետոյ նոքա նստած էին բաց հովանոցում, և նոցա առաջը դրած էր մի շիշ փայլուն գինին, որից Պէկը եռանդով ածումէր զինւորին, մինչ ինքը կաթիլ կաթիլ էր խմում իւր բաժակից: «Ես շատ ուրախ էր, որովհետեւ ինքեանք թշնամիքը ճանապարհ էին բաց արել նորա համար, և նա կարող էր, եթէ միայն զգուշութեամբ վարուէր, առանց ամենափոքր կասկած անգամ զարթեցնելու, ամենայարմար կերպով իւր բարեկամի հետ հաղորդակցութիւն ունենալ: Ե՛յն ժամերը, որ նա անցկացրեց զինւորի հետ, շիշն առաջը դրած, հոգատարութեամբ գործ դրեց նայօգուտ իւր, և խորամանկութեամբ առաջարկած հարցերով շուտով դուրս քաշեց նա զինւորից, որ Պէկի վերայ շատ

Խիստ կերպով չէին հսկում, համարելով նորան շատ մատաղահաս և թոյլ իւր ազատութեան համար մի փորձ անելու: Հետոյ նա տեղեկացաւ, որ ժամ առ ժամ մի պահապան պտտումէ աշտարակի շուրջը ամէն տեղ, ինչպէս հարկն է, վերահայեցողութիւն անելու, և թէ գիշերը մի զինոր ևս հսկումէ բանդի պարսպի վերայ, որ այդ կերպով խափանէ ամէն փախչելու ջանք բանդարկեալների կողմից: Այդ վերջին հանգամանքը այնքան չը դուր եկաւ մեր ջէկին. սակայն նա յոյս ունէր բարեյաջող դիպուածների վերայ և միանգամայն միտը դրեց գոնէ ձեռքից չը թողնել ոչ մի այնպիսի բան, որ կարող էր նպաստել նորա համարձակ և յանդուգն դաղափարների իրագործելուն:

Ո՞ի ժամից յետոյ զինորը պատրաստուեց իւր պահակը վերագանալու, և ջէկը, որ զանգզան հոգալու բաներ ունէր, յետ չը պահեց նորան:

«Սակայն, քաջդ իմ», ասաց նա բաժանուելու ժամանակը, «Ես յոյս ունեմ, որ մեր ծանօթութիւնը շուտով կը նորոգուի: Իմ փոքրիկ պարապմունքը այնքան շահ է տալիս ինձ, որ կարող եմ ինձ թշյլ տալ ժամանակ առ ժամանակ մի հիւր հրաւիրել մի շեշ գինի դատարկելու, և ես շատ ուրախ կը լինեմ, եմէ իմ խօսակցութիւնը նոյնքան դրաւած լինի ձեղ, որքան ձերը՝ ինձ»:

Գրանսիացու սիրտը սաստիկ շարժուած էր ջէկի կրկնած հրաւէրի և նորա շողոքորթութեան վե-

րայ: «Ա՛հ, դուք, արդա՛րե, մի հիանալի երիտասարդ էք», ասաց նա. «Գրանսուա Բաժուրի վերայ դուք միշտ կարող էք վստահ լինել որովհետեւ նա պատիւ կը համարէ իւր համար ձեր բարեկամութիւնը որոնել»:

Կրկին նորոգելով քաղաքավարական նշանները, ի վերջոյ, բաժանուեցան միմեանցից այդ երկուսը: Օճնորը վերագարձաւ իւր պահակը, որտեղ նա, բոլորվին զարմացած ջէկի քաղցր բնաւորութեան վերայ, լիաբերան տարածեց սորա գովասանքը, եսկ ջէկը գնաց իւր սենեակը, իսկոյն նամակ դրելու ջօնի հօրը: Այի քանի խօսքով նկարագրեց նա իւր գրութիւնը, հաղորդեց նորան ջօնի գերութեան լուրը և յայտնեց իւր յոյսը, թէ կարող էր նորան ազատել եմէ դրամական միջոցներով փոքր ինչ օգնէին նորան: Իւր սեփական դրամական միջոցները, աւելացրեց նա, արդէն սպառուել էին, և այս պատճառով նա հաստատ յոյս ունէր, թէ կոմմոդորը նորան կ'օգնէր: Կ վերջոյ, նա յայտնեց իւր հասցէն, անուանելով իւրեան մանրավաճառ, և խորհուրդ տուեց ամենամեծ զգուշութեամբ վարուել: Այդ նամակը աւարտելուց յետոյ նա գրեց երկրորդը աւելի կարճը, դէպ ի ջօնը հետեւալ խօսքերով: «Այրելի ջօն, ջէկը եկել է քեզ աղատելու: Օգուշացի՛ր, որ դու քով վարվմունքով ոչինչ չը ցոյց տաս: Այս ճանապարհով, որով այս նամակն է եկել, այն է՝ օդի միջով, ես

Քեզ մի սղոց ևս կը հացնեմ: Աշոցի՞ր նորանով  
քո պատուհանի վանդակի սիւնիկները և պատրաստ  
եղի՞ր փախչելու: Քո՞ ՞էկը: Ո՞ ետ գրութեան.  
«Մի՛ մոռացիր սղոցին ձէթ քսել եթէ ոչ՝ նորա  
ձայնը կը լսեն, և բանի՞ր միայն ցերեկով, երբ  
ինձ տեսնում ո»:

Վայ տողերը գրելով մի փոքրեկ թղթի կտորի  
վերայ, ՞էկը փաթաթեց այն մի նետի ծայրին  
այն դիտաւորութեամբ, որ միւս առաւօտը իւր բա-  
րեկամի պատուհանը արձակէ նորան: Իայց ի՞նչ  
կը լինէր, մտածեց նա յանկարծ, եթէ նա սխալ-  
ուէր, և նամակը մնար բակումը՝ պարսպի ու աշ-  
տարակի մէջ տեղը լշմէ այդ պատահէր, բնական  
բան է, նորան կը գտնէին, և այնուհետեւ — մնաք  
բարեաւ ազատութիւն, յոյս և ուրախութիւն: ՞է-  
կը ապշեց, բայց ոչ երկար: Մինչդեռ նա զբաղ-  
ուած էր իւր բարեկամի ազատութեան գաղափա-  
րով, նորա գլուխը առաջուանից աւելի հնարագէտ  
էր գարձել, և նա շուտով կարողացաւ այժման  
գժուարութեան մէջ ևս զգուշանալու մի հնար մտա-  
ծել: «Լա՛ւ», ասաց նա ինքն իւրեան, բացի նա-  
մակից, ևս կ'ամրացնեմ նետի վերայ մի երկայն ու  
պինդ, բայց բարակ թելի ծայրը: Լշմէ ևս սխալ-  
ուեմ, այն ժամանակ կարող եմ նետը դարձեալդէպ  
՚ի ինձ քաշել և գործի բացուելու վտանգը, եթէ  
բոլորովին չբացած չը լինի, գոնեա շատ նուազած  
կը լինի»:

՞էկը այնպէս արի էր իւր գործին, որ նոյն ե-  
րեկոյին վաղեց մի պարանավաճառի մօս, որի ար-  
հետանոցը նա նկատել էր աղեղը որոնելու ժամա-  
նակը: Վասեղ նա գնեց թելերի զանազան կար-  
ժեր, որոնք նորա նպատակի համար բոլորովին պի-  
տանի էին երեսում, և ուրախ վերադարձաւ իւր  
բնակարանը:

«Ձորդ ամէն բան այսպէս լսւ լինի», ասաց նա  
ինքն իւրեան քնելու ժամանակը: «Վայմ, սիրելի  
Վատուած, մի՛ ինայիր մեղանից քո օգնութիւնը, և  
մենք ութ օրից յետոյ, կարելի է, արդէն ջրանցքի  
միւս կողմում հանդիստ մեր հայրենիքում կը լի-  
նենք»:

Վայ կարծ, բայց լիասերտ աղօթքից յետոյ ՞է-  
կը քնեց և երազումէր փախստեան, վտանգի և ա-  
զատութեան վերայ, այնպէս որ, երբ զարթեցաւ,  
նախ և առաջ այն մտածեց որ մինչև այն ժամը ո-  
չինչ այնպիսի բան չէր արել, որ կարողանար ստոյդ  
համարել իւր երազի վերջը, որ նորան փրկութիւն  
էր խոստանում:

Վային քայլերը, որ ՞էկը արեց միւս առա-  
ւոտը, երեսը խաչ անելուց, անկողնից վեր կենա-  
լուց, լուացուելուց և հագնուելուց յետոյ, կայանու-  
մէին նորանում, որ միջոց գտնէր ՞օնի հօր վե-  
րայ գրածնամակը անվտանգ սորա ձեռքը հացնելու:  
Վայ շատ գժուար էր երեսում, որովհետեւ բոլոր  
փոստային և նաւային յարակցութիւնները Վագի-

այի և Գրանսիայի մէջ ընդհատուած էին պատերազմի պատճառով, սակայն ջէկը այդ բոլորը արդէն մտածել էր գեռ նամակը գրելուց առաջ և իւր գործին բաւական տեղեակ էր: Իւր ճանապարհորդութեան ժամանակ Գրանսիայի ցամաքի և հիւսիսային նաւահանգիստների միջով նա տեղեկացել էր, որ մաքսանենդների նաւերը գրեթէ ամէն օր գալիս էին Անդլիայից Գրանսիա և այստեղից վերադառնումէին Անդլիա: Նա մինչեւ անգամ առաջարկել էր իւրեան այս հարցը, թէ չէ՞ր կարող արդեօք մի այդպիսի մաքսանենդի նաւեց օգուտ քաղել փախչելու համար: Ի՞այց այդ վերջին միտքը նա շուտով թողեց, համարելով չափազանց վտանգաւոր, իսկ նամակը յանձնեց մի նաւաստիի, որին խոստացաւ մեծ վարձատրութիւն, եթէ նա ուղղակի կոմմոդորի ձեռքը հասցնէր այն: «Ի՞ո՞ն օրը պէտք է ճանապարհ ընկնէր այն նաւը, որին պատկանումէր յիշեալ նաւաստին, և այդ յայտնի էր ջէկին, այնպէս որ հինգ կամ վեց օրից յետոյ նա կարող էր կոմմոդորից մի պատասխան ստանալ, իսկ յետոյ՝ երբ նա բաւական դրամ կ'ունենար ձեռքին, նորան հեշտ կը լինէր ազատութեան միւս միջոցների թւում մի մակոյկ ևս ճարել փախչելու համար:

Այդ ուրախ յուսով ջէկը իւր նետն ու աղեղը վեր առած, դուրս եկաւ սենեակից, բարեկց իւր բարեկամ Գրանսուա Իօժուրին սորա մօտովի անց-

նելիս, մի քանի բոպէ զըսյց արաւ նորա հետ, և յետոյ գնաց դէպ՝ ի հին տիլեայ ծառը, որ այնտեղ շարունակէ առաջի օրուայ ընդհատուած նետաձութիւնը: Կասկած չը զարթեցնելու համար նա հաստատեց իւր շրջանակը ծառի վերայ, արձակեց մի քանի նետ և յետոյ սուլեց այն յայտնի եղանակը, որ երեկ նորա բարեկամ ջօնին դէպ՝ ի պատուհանն էր գրաւել: Մի քանի տակտերիցյանեղոյ գարձեպլ երևեցաւ ջօնի պատկերը վանդակի վերայ, և ջէկը նորան նշաններով հասկացրեց, որ նա պատուհանը բաց թողնէ, և ինքը հեռանայ: Ջօնը հասկացաւ նորան: Ջէկը իսկոյն վեր առաւ իւր նամակաւոր նետը, հաւաստի եղաւ, որ բարեկ, բայց պինդ թելը կապած էր նորանից, գրեց աղեղի վերայ, հաստատ ձեռքով նշան դրեց և արձակեց:

«Յաղթութիւն», բացականչեց նա հանդարաւ «Կատակը յաջողեց»:

Ծառչիւնի պէս անցաւ նետը վանդակապատ պատուհանի միջով, և հետեւեալ բոպէին ջօնը շտապով վեր առաւ այն և իսկոյն ներս բաշեց պատուհանի միջով սորանից կապած թելի միւս ծայրը: Ջէկը ազատ շունչ քաշեց, երբ իւր արած փորձի այդ վերջին գաւաճանական նշանն ևս չքացաւ վանդակի յետել: Խակոյն դորանիցյանետոյ ջօնը երևեցաւ պատուհանի մօտ, հասկացրեց նշաններով, թէ նամակը կարդացել էր և արտայայտեց

իւր ուրախութիւնը այն յուսոյ վերայ, որ ջէկի  
հաւատարիմ բարեկամութիւնը զարթեցրելէր նո-  
րա սրտի մէջ:

Այժմ մի ուրիշ վտանգաւոր ձեռնարկութիւն էր  
մնում գլուխ բերելու, այն է՝ սղոցը հասցնել ջօ-  
նի ձեռքը: Այդ իրաւամբ երևումէր ջէկին մի  
գժուար գործ, որովհետեւ սղոցի ծանրութիւնը  
հարկաւ պէտք է փոխէր նետի ուղղութիւնը: Ա-  
կայն վաղթէ ուշ այդ պէտք է լինէր, և ջէ-  
կը մտածումէր. «Ինչ որ պէտք է լինի, թող շուտ  
լինի»: Սղոցը կապած էր նետից, թելը նոյնպէս:  
«Եա առաջուայ պէս գրեց այն աղեղի վերայ, նշան  
գրեց, արձակեց և երկիւղով ու լարած ուշադրու-  
թեամբ սպասումէր հետևանքին: Բնականաբար նա  
երկար սպասելու տեղիք չունէր: Ո՞հ կարճատեւ,  
երկիւղալի ակնթարթ, և — զրբ'նդ — նետը դի-  
պաւ պատուհանից ցած՝ սորա քարի շրջանակին և  
վայր ընկաւ բակը: Կայծակի արագութեամբ յետ  
քաշեց ջէկը թելը, կծկեց այն, գրպանը գրեց  
նետը, երբ սա, թելին հետևելով, պարսպի այս  
կողմն ընկաւ, և դարձաւ դէպ ՚ի իւր շրջանակը:  
«Որա բաղդն էր, որ նա այնպէս արագ ու շտա-  
պով ձեռք տուեց գործին: Հաղիւ նա կանգնեց իւր  
տեղը և երեսը դարձրեց դէպ ՚ի շրջանակը, եկաւ  
նորա բարեկամ հօժուրը, պարսպի շուրջը ման  
գալով, և յայտնեց իւր յօժարութիւնը ջէկի հետ  
մի ժամ զրոյց անելու: ջէկը գժուարանումէր իւր

շփոթութիւնը ծածկել բայց դորա վերայ նա քօղ  
ձգեց, նկատելով, որ այդ օրը շատ անյաջող էր նե-  
տաձգութիւնը: Իարեկամ հօժուրը բարեսրտու-  
թեամբ միսիթարեց նորան և առաջարկեց կրկին  
փորձել բաղդը: Իայց ջէկը, որ, ըստ երևութիւն,  
շատ տիրած էր, հաւաքեց իւր գործիքները և  
նկատեց, թէ միւս օրը կարող էր անել այդ: Այժմ  
նա պէտք է հեռանար իւր գործը կատարելու: Այ-  
տարակոյս, նա սիրով կը մնար, բայց վախենումէր,  
որ մի՛ գուցէ իւր ձեռքի գողը, որ յառաջացելէր  
սիսալուելու երկիւղից, կամ ջօնի որ և իցէ անըզ-  
գուշութիւնը կասկածի տակ ձգէին նորան, այս  
պատճառով նա իւր բաղդի կրկին փորձելը յետա-  
ձգեց միւս օրուայ: Իարեկամ հօժուրը յաջողու-  
թեամբ խարուեցաւ և շատ բաւական մնաց, երբ  
ջէկը հրաւիրեց նորան կէս օրից յետոյ մի շիշ  
գինու վերայ: ջէկը հեռացաւ այնտեղից, գնաց  
պանգոկը, ուսը ձգեց իւր արկդը և գնաց քաղա-  
քումը շրջելու: Իայց, փոխանակ մանրավաճառի  
զեր կատարելու՝ իւր ապրանքը առաջարկելու և  
ծախս անելու, նա ընտրեց իւր համար մի խաղաղ  
տեղ, ուր կարող էր անվրդով անձնատուր լինել  
իւր մտքերին: Ատանուելու մօտաւոր և մեծ վտան-  
գը մի փոքր երկիւղ էր ձգել նորա սիրալ, և նա  
մի այլ հնար էր մտածում սղոցը ջօնի ձեռքը  
հասցնելու համար:

«Ճաելով ամենեին չի լինիլ», մտածումէր նա:

«Որովհետև այդ ինձ մի անդամ չը յաջողեց, այս պատճառով այժմ երկիւղից միւս անդամներումն ևս չի յաջողիլ, և վերջը մի օր կը բռնուեմ։ Իայց ինչպէս այդ գլուխ բերեմ։ Այդ պէտք է անպատճառ գլուխ բերուի, որովհետև առանց սղոցի ջոնը երեք չէ կարող պատուհանի երկաթէ սիւները խորակել խոկ քանի որ այդ սիւները կանգուն են, ՚ի զուր կը լինի ամէն փորձ բանդից դուրս գալու։» Մի ուրիշ աւելի փոքր հաւատարմութիւն ունեցող բարեկամ, այդ ակներեւ անկարելութիւնը տեսնելով, յետ կը կանգնէր բոլոր ձեռնարկութիւնից, բայց այդ չը կար ջէկի բնաւորութեան և դիտաւորութեան մէջ։ Այն դժուարութիւնները, որոնց հետ նա կուռել էր, շատ բարձրացրել էին նորա քաջութիւնը և հաստատակամութիւնը, և նա միւս անդամ խօսք տուեց ինքն իւրեան, աւելի սիրով գերի ընկնել, քան թէ իւր դիտաւորութիւնից հրաժարուել։ Մրգելքների հետ աճումէին նորա հնարագիտութիւնն ու սրամտութիւնը, և մօտ մի ժամ խոր մտածելուց յետոյ, նա ծափ տուեց և ծիծաղեց։

«Եհա՛, այսպէս լինի», բացականչեց նա։ «Իմ սիրելի բարեկամ հօժուր, դու քո սեփական աչքովդ պէտք է տեսնես, թէ ինչպէս եմ ես սղոցը ջոնի ձեռքը հասցնում։»

Նա մի փոքր ժամանակ ման եկաւ անգործ, յետոյ վերադարձաւ պանդոկը, կողպեց իւր սիւնեակի

գուռը, որ ոչ ոք չը վերայ համնի, և սկսեց մեծ եռանգով նետերեց մինի մէջը փորել։ Իարեբաղդաբար ոչ մի գործիք պակաս չէր նորան։ Իւր արկղի մէջ նա գտաւ շատ գչիրներ ու բարակ դուրեր և օրչնեց այն միտքը, որ նորան ստիպել էր ուղղակի թափառական մանրավաճառի հագուստը ընտրել։ Կէս ժամից յետոյ նա արդէն այնպիսի փոսէր փորել նետի մէջ, ուր մի բարակ ու թոյլ արց կարող էր ամփոփուել։ Փոսի բերանը նա գարձեալ փակեց մի փայտեայ բեկուով, և այժմ նետը նոյնպէս անմեղ էր երեսում, ինչպէս և բոլոր մնացեալները։ Միւսներեց զանազաններու համար նա մի նշան արեց նորա վերայ, որ միայն իւրեան էր նկատելի, դրեց գրպանը և հանգիստ սրտով սպասեց այն ժամին, որ նշանակել էր իւր բարեկամ հօժուրին տեսութեան համար։ Ճամը եկաւ, իսկ նորա հետ և զինուրը։ Ջէկը ներս հրաժարեց նորան և այնպէս ուրախ ցոյց տուեց իւրեան, որ նորա հոգւոյ լաւ դրամադրութիւնը շուտով անցաւ և Պիրանսիացու վերայ։ «Դուք երկեի լաւ ծախս էք արել», ասաց նա ջէկին։ «Չեր բարեկութիւնը վատ նետաձգութեան վերայ անցել է։»

«Անկասկա՞ծ», պատասխանեց ջէկը։ «Առաւօտները առ հասարակ ես այնքան լաւ չեմ արձակում, չը գիտեմ, ինչու, իսկ այժմ — ես կարող եմ ձեզ հետ բաստ բռնել, բազդ իմ, որ կը խփեմ ամէն

Նպատակի, որին միայն իմ նետը կարող է հասնել:  
Ճամաձա՞յն էք»:

«Ինչո՞ւ չէ», պատասխանեց ուրախացած Գրան-  
սիացին: «Եթէ ես պէտք է որոշեմ նպատակը,  
այն ժամանակը . . . .»

«Ինչպէս կամենաք», բացականչեց Զէկը:  
«Բասար երկու շիշ գինու վերայ է: Բայց ես ա-  
ռաջուց ասումեմ ձեզ, որ դուք կը վճարէք»:

«Տեսնե՞նք, տեսնե՞նք», ասաց Իօժուրը: «Խո-  
կոյն վճռե՞նք դործը, սիրելիս»:

Զէկը հոգւով յօժար էր այդ բանին, որովհե-  
տեւ Գրանսիացին հենց այն էր ասում, ինչ որ խո-  
րամանկ աղեղնաւորը ցանկանումէր: «Ա, վեր ա-  
ռաւ իւր նետն ու աղեղը, քայլեց դէպ ՚ի տիլեայ  
ծառը, և կախեց շրջանակը իւր տեղը»:

«Դէ՛հ, երեսուն քայլից», ասաց Իօժուրը: «Ե-  
թէ դուք երեք անգամից երկուսը սիսալուէք, ես  
եմ տարել»:

«Ը ատ լաւ», պատասխանեց Զէկը և, որքան  
արող էր, աշխատեց նշաւակին գիպցնել: Այդ յա-  
ջողեց նորան, և բարկութեամբ խոստովանեց Գրան-  
սիացին իւր անձը յաղթուած:

«Ես այդ ձեզ առաջուց ասացի, քաջդ իմ», ա-  
սաց Զէկը ճպատալով: «Այդ դործը դժուար չէր,  
և եթէ դուք քաջ ժանօթ լինէիք իմ աղեղին, մի  
այլ նպատակ կը նշանակէիք ինձ: Աշտարակի ծայ-

րի պատուհաններից մինին դիպցնելը այդպէս հեշտ  
չէր լինիլ»:

«Լ՛հ, ես այդ լաւ գիտեմ», պատասխանեց Իօ-  
ժուրը: «Բայց եթէ ես այդ ձեզ նպատակ ընտրած  
լինէի, դուք չէիք համաձայնիլ»:

«Ո՞թէ: Ո՞թէ դուք այդպէս էք կարծում,  
բարեկամ», պատասխանեց Զէկը հպարտութեամբ:  
«Դուք կարող էք սիսալուել: Ուո՞ղ այս բասար  
տարած էր համարուի, և ես ձեզ նորն եմ առա-  
ջարկում: Ես երեք անգամ կ'արձակեմ դէպ ՚ի այն  
բաց պատուհանը և գոնեա երկու անգամ կը դիպ-  
ցնեմ — եթէ ոչ՝ դուք էք տարել»:

«Լաւ, լաւ», շտապով աղաղակեց Գրանսիա-  
ցին, մտքումը ծիծաղելով Զէկի յիմարութեան  
վերայ, որ արդէն տարած բանը կրկին փորձի տակ  
էր ձգում: «Ապասեցէք մի միայն մի վայրիկեան, որ  
ես պատուհանը բաց անեմ»:

Ա աղեղով հեռացաւ նա այնտեղից: Զէկը սու-  
լեց իւր եղանակը, Զօնը երևեցաւ, հասկացաւ  
իւր բարեկամի նշանները, որոնք յորդորումէին նո-  
րան զգաստ լինել, և դարձեալ չքացաւ պատու-  
հանից, որ և իսկոյն փակեց: Ըուտով դորանից  
յետոյ երևեցաւ Իօժուրը, բաց արեց այն և ձայն  
տուեց: «Ապասեցէք»:

Երկու բոպէից յետոյ նա կրկին ներքեն էր և  
առաջարկեց Զէկին արձակել նետը: Զէկը այդ  
միջոցին ենթադրել էր, թէ ինչպէս պէտք է գլուխ

բերէր իւր գաղափարը: Աղօցաւոր նետը դրած էր աղեղի վերայ: Եթէ նա սխալուէր, և սղօցաւոր նետը վայր ընկնէր բակումը, նա պէտք է ասէր, թէ այդ իւր վերջին նետն էր, ուրեմն, և հօժուր պէտք է յետ բերէր այն: Իսկ եթէ նոյն նետը նպատակին դիմչէր, այն ժամանակը նա գիտութեամբ պէտք է սխալուէր միւս երկու անգամին, իսկ այնուհետև նա յոյս ունէր, որ հօժուրը յաղթութիւնը տանելու ուրախութիւնից չէր մտածիլ առաջին նետը յետ բերելու մասին: Այդ կերպով յաջողութիւնը բաւական ապահովելով, արձակեց նա հանգիստ սրտով, և սղօցաւոր նետը թուսամուտի միջով: Իօժուրը սրտնեղութիւնից ու բարկութիւնից շշնջաց մի անէծք, մինչ ջէկը ուրախութիւնից գրեթէ ցնորուեցաւ և անպատճառ կը մատնէր իւրեան, եթէ իօժուրը նորա ուրախութեան ճիշը չը վերաբերէր մօտաւոր շարժառիթին, այն է բաստը երկրորդ անգամ տանելու ուրախութեանը: Աակայն ջէկը դորա վերայ չէր մտածում և ամենեին չէր փափագում իօժուրի վերայ յազդանակ կանգնել: «Կա մի այլ նետ հանեց գրպանից, գիտութեամբ սխալուեց, և երրորդ անգամ՝ նոյնպէս: Այժմ ծիծաղի հերթը իօժուրինն էր, որ չէր աշխատում իւր հրճուանքը ծածկել:

«Տարայ», աղաղակեց նա և ծափ տուեց: «Լ՛հ, բարեկամ, դուք չափազանց մեծ կարծիք էք ունեցել ձեր յաջողակութեան վերայ»:

«Անկասկա'ծ, ճշմարի'տ է», պատասխանեց ջէկը և այնպէս էր ձեանում, իրը թէ բարկութիւնից նորա սիրու պատովումէր, այն ինչ նա այնքան ուրախ էր, որ պատրաստ էր ամբողջ աշխարհը կրծքին սեղմել: «Բայց այնու ամենայնիւ ես չեմ հասկանում, թէ ինչպէս եղաւ այդ: Դուք բաղդ ունէք, բարեկամ, և ձեր բաղդը աւելի մեծ է, քան թէ իմ ճարտարութիւնը: Բայց ողջ մին է: Եկէք և թոյլ տուէք ինձ մի շեշգինուվ մոռանալ իմ տիրութիւնը: Որովհետև դուք բաստը տարել էք, 'ի հարկէ, ես պէտք է ձեզ հրաւիրեմ»:

Այդպիսի առաջարկութիւնը այնքան ախորժելի էր աշխայժ ֆրանսիացուն, որ նա չէր կարող այն մերժել: Ուրախ քայլեց նա ջէկի հետ դէպ 'ի պանդոկը, և աշխատումէր բարեկամական, միսիթարիչ խօսքերով փարատել իւր մատաղահաս ուղեկցի տիրութիւնը: Ջէկը հեշտութեամբ միսիթարուեց:

«Լ՛հ, լա՛ւ», ասաց նա, այն բաւականութիւնը, որ իմ կորստից դուք էք օգուտ քաղում, մոռացնել է տալիս ինձ այդ կորուստը, այլ ևս չը մտածե՞նք դորա վերայ»:

Ջէկը մինչև երեկոյ զրոյց արեց իւր յաջողութեամբ խարուած բարեկամի հետ, իսկ այդ միջոցին ջնը ուշադրութեամբ զննումէր այն նետը, որ ջէկը ձգել էր նորա պատուհանի միջով: «Կա

շուտով գտաւ նորա մէջ ամիսովուած գանձը և ու-  
րախութեամբ բացականչեց. «Նա՛, ջէկ, ես դո-  
րա փոխարէնը կը հատուցանեմ քեզ, հենց որ կ'ա-  
զատուեմ: Միայն համբերութիւն»:

Միւս առաւօտը, երբ ջէկը նետաձութեան  
տեղն եկաւ և սուլեց իւր եղանակը, ջնը ուրախ  
դէմքով ցոյց տուեց նորան իւր ստացած գործիքը  
և իսկոյն սկսեց երկաթէ սիւնիկները սղոցել: Ո-  
րովհետեւ նա հետևել էր այն զգուշութիւններին,  
որ ջէկը հազորդել էր նորան իւր նամակի մէջ,  
ուստի և նորա աշխատանքը շատ փոքր շառաչիւն  
էր հանում, և այդ փոքրը ևս ծածկվումէր ցե-  
րեկուայ սովորական աղմուկի տակ: Պահապաննե-  
րը ոչինչ չէին լսում, որովհետեւ նորա սաստիկ  
զբաղուած էին խօսքով, խաղով ու ծիծաղով, ու-  
րեմն, և ժամանակ չէին գտնում ականջ դնելու  
իւրեանց գերին, որին, նոցա կարծիքով, բաւա-  
կան լաւ պահպանումէին ամրոցը և երկաթէ փա-  
կանքները:

### ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴԻ:

Ա Զ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք :

Մօտ մի շաբաթ անցնելուց յետոյ ջնը այն-  
քան սղոցել էր իւր պատուհանի երկաթէ սիւնիկ-  
ները, որ նորան հարկաւոր էր միայն մի ուժգին  
հարուած տալ ձեռքով նոցա բոլորվին խորտակե-  
լու համար: Այդ հանգամանքը նա նշաններով  
յայտնեց իւր բարեկամ ջէկին, բայց սա տիրու-  
թեամբ պատասխանեց, 'ի հարկէ, նոյնպէս նշան-  
ներով, թէ նա դեռ պէտք է սպասէր, որովհետեւ  
փախչելու բոլոր նախապատրաստութիւնները գեռ  
և արած չէին: Ջնը սպասումէր համբերու-  
թեամբ և, որպէս զի նորա ջերմեռանդ աշխատան-  
քի հետքերը ժամանակից առաջ չը կարողանային  
նկատել, նա մեծ հոգացողութեամբ ծեփեց երկա-  
թէ սիւների ճեղքերը մի տեսակ շաղախով հոցի  
մուղից ու երկաթի փշրանքից:

Այդ միջոցին ջէկը ման էր գալիս ևոր մտած-  
մունքի մէջ և այնպէս տրառում էր, որ այդ նոյն  
իսկ նորա ուրախ բարեկամին՝ Գրանսուա Բօժու-  
րին անգամ զարմացրեց: «Պատճառն այն էր, որ  
նորա դրամը բոլորովին մօտեցել էր եւր վերջին,  
իսկ ջօնի հայրը գեռ ևս ուշացնումէր հասցնել  
նորան այն օգնութիւնը, որին նա այնպէս սաստիկ  
կարօտ էր: Ի՞նչպէս պէտք է փախչէր նա ջօնի  
հետ, եթէ չը կարողանար մի ձկնորսի մակոյկ գը-  
նել, որ նորան ջրանցքի միւս կողմը՝ Անդիսա, հա-  
նէր: Ջէկի տրամութիւնը, ինչպէս ասումեն, չա-  
փիցն անց էր կացել, և Գրանսուա Բօժուրը շատ  
էր կորցնում դորանով, որովհետև ջէկը երկու  
օր էր արդէն, որ մի բեր վերայ անգամ չէր հրաւի-  
րել նորան:

«Ի՞այց ի՞նչ է պակաս ձեզ, ընկեր», հարցրեց  
նա մի օր նորան կարեկից ձայնով ու դէմքով:

Մազ պրծաւ, որ ջէկը պատասխանէր՝ «Դրամ,  
քա՛ջիմ», բայց բարեբաղդաբար ժամանակին ու-  
շը հաւաքեց և ուսերը թափ տուեց:

«Ես սպասում մի բարեկամի, որ ինձ խոստա-  
ցել է այստեղ այցելութիւն գալ», ասաց նա:  
«Ի՞այց նա չէ գալիս, իսկ ես չեմ կարող այստե-  
ղից հեռանալ, մինչև որ գոնեա մի տեղեկութիւն  
չստանամ նորանից: Գործը շատ ծանրակշու է,  
ընկեր, և, ուղիղն ասեմ, եթէ նա այսօր ևս գայ,

ես մի ուրախ խնձոյք կը տամ ձեզ և ձեր բոլոր  
ընկերներին»:

Յարգելի Գրանսուա Բօժուրի աչքերը պայծառ  
փայլեցան այն ախորժելի դիտաւորութեան վե-  
րայ, որ ջէկը արտայայտեց, և նա միսիթարու-  
մէր իւր մատաղահաս բարեկամին: «Ճամբերու-  
թիւն միայն, սիրելիս, փոքր ինչ համբերութիւն»,  
ասաց նա: «Ճանապարհորդը շատ անգամ անա-  
կընկալ կերպով է գալիս, և այն միջոցին, երբ  
դուք համարեա ամենենին չէք սպասում, յանկարծ  
կը գայ ձեր բարեկամը: Աի՞րու առէք, ընկեր: Ո-  
ռացէք ձեր հոգսերը մի շիշ գինով, իսկ մա-  
ցեալ բաներում յօյսներդ գրէք ապագայի վերայ»:

Ջէկը հասկացաւ իւր լաւ բարեկամի բացայայտ  
ակնարկութիւնը և, բարեկամութիւնը չը կարելու  
համար, ծածուկ յառաջելով բերել տուեց մի շիշ  
գինի, թէւ գորա համար նա պէտք է վճարէր  
գրեթէ բոլոր իւր ունեցած առ ձեռն դրամը:

«Լաւ», ասաց նա, «լաւ յուսանք», և մտքու-  
մը ասաց. «որքան մեծ է կարեքը, այնքան մերձ  
է օգնութիւնը»: Այդ մտքի մէջ նա փոքր ինչ  
միսիթարութիւն գտաւ և կարողացաւ այնքան ոյժ  
գործ գնել եւր վերայ, որ երբեմն ծիծալումէր իւր  
բարեկամի կատակների վերայ:

Դեռ երկուքն ես նստած էին հիւրասենեակում,  
երբ դուռը բացուեցաւ, և մի ծեր: սպիտակ վար-  
սով ու ձկուած մէջքով մարդ մտաւ սենեակը, քա-

զաքավարութեամբ ողջունեց երկու բարեկամներին, և նոյցա մօտ մի տեղ բռնեց, որտեղից կարող էր լսել այդ երկուսի խօսակցութիւնը, առանց կասկած շարժելու։ Աակայն, ըստ երկութիւն, նա շատ չէր հոգում սոցա խօսք ու զբոյցի մասին. Հրամայեց մառանապետին մի զովարար բան բերել, հանեց գրպանից մի ծխափող, կրակ վառեց և շուտով ծածկուեցաւ անուշահոտ ծխի թանձր ամպերի մէջ։ Այդ մառախուղի միջից նա այնպէս էր նայում, ինչպէս իւպիտերը ամպերի միջից, և շատ անգամ դադարեցնումէր իւր զննող աչքերը ջէկի վերայ, որ ամենելին երեսն անգամ չէր դարձնում դէպ ՚ի նա։ Գրանսուա Իօժուրը, ընդհակառակն, բարկութեամբ էր նայում անծանօթի վերայ։

«Այս մարդը կամենումէ մեղ ծխով խեղճել», ասաց նա կամաց ջէկին և հաղեց։ «Ես չեմ կարող սորա մօտ մնալ։ Իացի դորանից, բարեկամ, շեշը դատարկ է, և ծառայութիւնը կանչումէ, ուրեմն, ես պէտք է ձեղ թողնեմ»։

ջէկը ամենելին ցանկութիւն չ'ունէր նորանյետ պահելու, որովհետեւ ո՞րտեղից պէտք է վճարէր նա երկրորդ շեշի գինը։ «Պնացէ՛ք, ընկեր», ասաց նա, «վաղեան օրը չի փախչել մեր ձեռքից, և եթէ մինչեւ այդ ժամանակը կը դայ իմ բարեկամը, որին ես այնպէս փափագով սպասում մ, մենք մի ուրախութիւն կ'անենք միասին»։

Երկու բարեկամները ցնցեցին միմեանց ձեռքը.

Գրանսիացին հեռացաւ, իսկ ջէկը դարձեալ նըստեց սեղանի մօտ և անձնատուր եղաւ տխուր մտածմունքների։ Մի վայրկեան ևս գաղտագողի նայեց նորա վերայ անծանօթը, յետոյ՝ յատկապէս այն րոպէին, երբ ամրող սենեակում ոչ ոք չը կար, բացի նորանից ու ջէկից, վեր կացաւ, մօտեցաւ պատանուն և հարցրեց անդլիերէն. «Ի՞նչպէս է մեր ջօնը»։ ջէկը վեր թռաւ, զարմացած ու վերին աստիճանի զարհուրած նայեց ծերունու վերայ և այնքան մօտացաւ իւրեան, որ պատասխանեց նոյնպէս անդլիերէն. «Ես ոչինչ չը գիտեմ։ Ի՞նչ էք կամենում գուք»։

Դրամ եմ բերել, որդի, և եկել եմ ձեղ օգնելու», պատասխանեց անծանօթը։ «Ճանգստացէ՛ք, ես ծեր Ծովլմասն եմ, որի մասին ջօնը զանազան բաներ պատմած կը լինի ձեղը իսկ դուք ջօնի ազնիւ ու հաւատարիմ բարեկամ ջէկն էք։ Ահա ծեր նամակը դէպ ՚ի ջօնի հայրը» — նա հանեց գրպանից մի քսակ լի ուկով — «այս էլ իմ անցաթուլմէն։ Ոի՛րտ առէք, ջէկ, ինձանում դուք մի հաւատարիմ ընկեր կը գտնէք, և զարմանալի կը լինի, եթէ մենք երկուքս չը կարողանանք պատանուն բանդից ազատել»։

ջէկը կարծումէր, թէ երազումն էր. բայց երբ նա ճանաչեց իւր նամակը, երբ ծեր Ծովլմասը յանձնեց նորան մի քանի ջերմ տողեր կոմմոդորից ջօնի հօրից, որ տեղեկացնումէր նորան, թէ նա

կարող էր բոլորովին վստահ լինել ծեր թառվմասի վերայ, նորա շփոթութիւնը յանկարծ փոխուեցաւ բացարձակ ուրախութեան, և ճշալով փաթաթուեց նա ծեր թառվմասի պարանոցովը:

«Հիրաւի՝, դուք շատ լաւ ժամանակ եկաք», ասաց նա: «Պրապանս բոլորովին դատարկ էր, և ես այնպէս կարօտ էի դրամին, ինչպէս ձուկը՝ ջրին: Աեցցէ՛ ծեր ծովակատուն, այժմ ամէն բան յաջող է, և ջնուն համարեա՛ թէ փրկուած է արդէն: Խնչերջանիկ միտք էր, որ ես Պրանսուա Իօսուրին ասացի, թէ բարեկամի եմ սպասում: Ես աչքիս առաջն ունէի դրամը, և աչա՛, այժմ ոչ միայն այդ է եկել այլ և մի իսկական, կենդանի բարեկամ: Այժմ մեր խաղը տարած է, որովհետեւ ամէն բան միանումէ մեր վտանգաւոր ձեռնարկութեան յաջողութիւնը ապահովելու համար»:

Վեր թառվմասը հարցրեց, և ջէկը ճշգութեամբ պատմեց նորան, թէ ինչ դրութեան մէջ է իրերը:

«Լաւ», ասաց թառվմասը, «դուք աւելի էքյառաջնացել քան թէ ես յոյս ունէի, ուրեմն, հրացանը արդէն լցրած է, և միայն արձակելուն է մնում: Այժմ լսեցէ՛ք ինձ, պատանեակ: Ոստա՞հ էք դուք ձեզ վերայ, թէ կարող էք մի նետ անց կացնել ջնոնի պատուհանի միջով, եթէ մի երկայն թել կապած լինի նորանից»:

«Ի հա՛րկէ», պատասխանեց ջէկը: «Ես այդ փորձել եմ արդէն»:

«Այո՛, ցերեկով, բայց լուսնի լոյսը խաբումէ», նկատեց թառվմասը:

«Ոչինչ», ասաց ջէկը, «եթէ առաջին անգամ չել յաջողիւ, երկրորդ անգամ կը յաջողի»:

«Ուղիղ է», պատասխանեց թառվմասը: «Ուրեմն, մեզ մնումէ միայն մի երկայն պարան հիւսել և զինուրիներին տալ այն խնձոյքը, որ դուք նոցա խոստացել էք, պատմնիս: Եաւ լսեցէ՛ք, ինչ եմ ասում: Դուք վաղը կրկին կը հրաւիրէք ձեր բարեկամ Պրանսուային, և յետոյ, երբ շշշ ձեր առաջը դրած կը լինի, ես ներս կը մանեմ սենեակը — դուք ինձ կը բարեկամ, ինչպէս ձեր սպասած բարեկամին, և, որպէս թէ ձեր սրտի ուրախութիւնեց շարժուած, զինուրներին ձեզ մօտ կը հրաւիրէք իմ գալուստը շնորհաւորելու: Օ ինուրները, ՚ի հա՛րկէ, չեն կարող իւրեանց պահակները թողնել ուրեմն, և մեղանից կը պահանջնեն իւրեանց մօտ գնալ: Ես կը հրաժարուեմ, մերձակայ ուղևորութիւնս պատճառ բերելով: Դուք ինձ կը յորդորէք մնալ: Ես կը համաձայնեմ և կէս գեշերին կը հեռանամ: Դուք ինձ ուղեկից կը լինէք, որի համար իմ ուղևորութիւնը շատ բնական առիթ կը լինի, կը խոստանաք շուտով վերադառնալ, իսկ յետոյ մենք ձեռք կը տանք գործին: Արբեցութեան մէջ ոչ ոք չի մտածիլ գերեների մասին, բացի գի-

շերապահից, որ գիշերները հսկումէ պարսպի վերայ, դորա համար ևս մենք մի հնար կը դտնենք: Յաջողութիւնը ինձ հաստատ է երեռում, եթէ անակնկալ անյաջող գեպքեր լոյս չընկնեն մեր առաջը»:

Զ էկը համաձայնեց ծեր Ծաղկմասի հետ, և երկուքն ևս սկսան պատրաստութիւն տեսնել այդ գաղափարը գլուխ բերելու: Զ էկը գնաց պարանի համար ժապաւէն գնելու, իսկ Ծաղկմասը այդ միջոցին սենեակ վարձեց այն հիւրանոցում, ուր կամենումէր գիշերը անց կացնել: Զ էկը բերեց ժապաւէնը իւր սենեակը, և գիշերը, երբ ամենքը ընկըզմած էին քնի մէջ, ծածուկ եկաւ ծեր Ծաղկմասը, և երկուքը միասին եռանդով սկսեցին հիւրանի պարանը: Իրբե ծովագնացներ, նոքա վարժ էին այդ բանին, և արեւը գեռ չէր ընկել նոցա պատուհանի վերայ, երբ գործը արդէն բոլորովին աւարտած էր: Անհս առաւօտը Ծաղկմասը հեռացաւ, իսկ Զ էկը գնաց իւր բարեկամ Փրանսուա Շօժուրի յետեից, որ կէս օրից յետոյ ըստ սովորութեան հրաւիրէ նորան մի բաժակ գինու վերայ, և այդ հրաւէրը, ՚ի հարկէ, յօժարութեամբ ընդունուեցաւ: Յնետոյ նա գնաց աշտարակի յետել, սուլեց իւր եղանակը և նշան տուեց Զ օնին, որ զգաստ լինի: Զ օնը գլխով արեց, և դորանով նախապատրաստութիւնները վերջացան:

Ճ'աշից յետոյ Զ էկն ու Փրանսուան նստած է-

ին միասին, ինչպէս և երեկ, ու զրոյց էին անում: Դրուը բացուեցաւ, Ծաղկմասը ներս մտաւ իւր իսկական հագուստով — երեկ նա հանգերձը փոխած էր — և Զ էկը, խօսակցութիւնն ընդհատելով ու բարձրաձայն ճչալով, թուաւ նորա կրծքի վերայ: Փրանսուա Շօժուրը խելօք գլուխ էր: «Կա իսկոյն հասկացաւ, որ Ծաղկմասը պէտք է սպասած բարեկամը լինէր, և ուրախութիւնից տրորումէր ձեռքերը, մտածելով, «Ղհա՛, այժմ մի ինձոյք կը լինի, ինչպէս Զ էկը խոստացել է»:

Զ էկը ներկայացրեց իւր բարեկամին և սրտի ուրախութիւնից նորոգեց իւր խոստումը, ասելով: «Ղյժմ, ընկեր, ես ուրախ եմ: Բարեկամս ինձ լաւ լուրեր է բերել այս պատճառով ուրախ լինենք: Միայն պատիւ արէ՛ք ինձ, հրաւիրեցէ՛ք ձեր ընկերներին այստեղ: «Կոքա, երա՛ւ է, ինձ չեն ճանաչում, բայց . . .»

«Ղյդպէս չէ, բա՛րեկամ», ընդհատեց նորան Փրանսուան, «Նորքա ձեզ լաւ են ճանաչում այն գովասանութիւններից, որ ես պարտական էի տալ ձեր մասին, իբրև մի ազնիւ և ուրախ ընկերոջ մասին, ուրեմն, և ամենամեծ յօժարութեամբ կ'ընդունէին ձեր հրաւէրը, սակայն — գուք գիտէք — ծառայութիւնը իսկստ է, և նոքա չեն կարող թողնել իւրեանց պահակները»:

«Օ՛հ, ափսո՞ս», ասաց Զ էկը: «Ղնչ յօժարու-

թեամբ ես մի ուրախ օր կ'անցկացնէի նոցա հետ:  
Ա՞նթէ այդ բոլորովին անչնարին է»:

«Ե՛ս, եթէ գուք կարողանայիք մեզ մօտ գալ,  
յարգելի բարեկամ, այն ժամանակ, իմ կարծիքով,  
ոչնչ արգելք չեր կարող լինել», նկատեց Գրան-  
սուան, որ վախենումէր, թէ մի' գուցէ խնձոյքը  
ջուրն ընկնէր: «Երեկոյեան ինն ժամից յետոյ մենք  
ոչ մի խառնակութիւնից վախենալու տեղիք չու-  
նենք, և եթէ գուք կամենաք, այն ժամանակը — »

«Ի հարկէ, կամենումեմ», ասաց ֆէկը բոլո-  
րովին հաճութեամբ: «Արայն իմ բարեկամը չի  
կարող ձեր ընկերութիւնը այնքան երկար վայելել,  
որքան կը ցանկանար: Գիշերուայ տասներկու ժա-  
մին փոստը գնումէ Փարիզ, և այդ միջոցին նա  
պէտքէ ձեզ թողնէ: Բայց ողջ մին է — մի, եր-  
կու ժամը այնու ամենայնիւ աւելի լաւ է, քան թէ  
ոչնչ: Ուրեմն, քաջդ իմ, հարցրէք ձեր բարե-  
կամներին, արդեօք կամենումեն նոքա մեզ ընդու-  
նել, և յետոյ այնպէս ուրախանանք, ինչպէս կա-  
րող են մարդուս ուրախացնել լաւ գինին ու լաւ  
ընթրիքը: Ծ տապեցէք, բարեկամ, որովհետեւ ժա-  
մանակը կարձ է, և մեր տան տիկինը պէտք է  
շատ արագ շարժուի, որ կարողանայ մինչև երե-  
կոյեան ինն ժամը իւր խորտիկների պատրաստու-  
թիւնը աւարտելու:

Գրանսուա իօժուրը երկու անգամ ստիպել չը  
տուեց իւրեան: «Ա, հեռացաւ, և ձեր թողմասը

ասաց. «Վ, մէն բան յաջող է գնում: Ա, աւակը գնած  
է արդէն հանդերձ թիերով: Ա աղը կէս օրէն, ե-  
թէ ամէն բան լաւ գնայ, մենք կարող ենք Վնդ-  
լիայում լինել»:

Մէ քանի բոպէից յետոյ Գրանսուան վերադար-  
ձաւ և հետը բերեց իւր ընկերների համաձայնու-  
թիւնը, որոնք, նորա ասելով, մեծ պատիւ էին  
համարում իւրեանց համար ֆէկի պէս աղնիւ պա-  
տանու հերերը լինել: Ֆէկը կանչել տուեց տան  
տիկնօջը, հրամայեց նորան պատրաստել բոլորը.  
Ենչ որ նորա խոհանոցն ու մառանը կարող էին  
տալ, և յետոյ, Գրանսուայի ներկայութիւնից ա-  
զատուելու համար, յառաջ բերեց այն պարապմուն-  
քը, որ նա միայն իւր բարեկամի հետ պէտք է կա-  
տարէր: Գրանսիացին հասկացաւ նորա ակնարկու-  
թիւնը և միայն թողեց նոցա երկուսին, որոնք այժմ  
սկսեցին կշագագտել իւրեանց գաղափարի մանրա-  
մասնութիւնները, այն գաղափարի, որ այնպէս լաւ  
կազմած էր և, անտարակոյս, նոյնպէս լաւ պէտք  
է գլուխ գար: «Ա, աղէտք է յաջողէր, եթէ մի ան-  
սովոր բան արգելը չը լինէր:

Երեկոյեան ինն ժամին Գրանսուան եկաւ երկու  
բարեկամներին տանելու:

«Աներ գնդապետը», ասաց նա ուրախութեամբ,  
«մեզ այլ ևս չի խանգարիլ: Ա, այս բոպէիս ա-  
րեց իւր վերջին վերահայեցողութիւնը: Եկէք,  
բարեկամներ, ձեզ անհամերութեամբ են սպասում»:

՞ Էկն ու թառվմասը, որոնցից վերջինը արդէն քոլորովին պատրաստուած էր ճանապարհի համար և՝ կրկն պանդոկը չը վերաբառնալու համար, առել էր հետը մի կապոց, որ իբր թէ նորա ճանապարհի պարին էր, հետևեցան իւրեանց առաջնորդին և սիրով ընդունուեցան զինուրներից, որոնք չէին թագինում իւրեանց սերտ բարեկամութեան ցոյցերը: Պահապանի սենեակում սեղանը բացուեցաւ, կերակուրներն ու գինու շիշերը բերուեցան, և շուտով բոլոր ներկայ գտնուողները ընկղմեցան խնձոյքի ուրախութեան մէջ: Թառվմասը, որին ՞ Էկը իրեւ Վերմանացի էր ներկայացրել, սակաւ էր խօսում: բայց նորա փոխանակ ևս ՞ Էկն էր խօսում, որի բերանը, կարծես թէ, չէր կարողանում հանգիստ մալ: Այս և նոյն ժամանակ նա եռանդով արթեցնումէր զինուրներին, որոնք շատ ստիպել չէին տալիս իւրեանց, իսկ ինքը շատ զգուշանումէր խմել աւելի, քան թէ կարող էր տանել: Այնչ ուրախ զինուրները դատարկումէին իւրեանց բաժակները, նա միայն կաթիլ կաթիլ էր խմում և մի քանի բաժակ ևս ծածուկ թափեց սեղանի տակը: Քանի ժամերը սահումէին, այնքան աւելանումէր ՞ Էկի հիւրերի ուրախութիւնը: Վինին հոսումէր հեղեղի պէս, ուրախութիւնը, քանի գնումէր, աւելի անարգել ու համարձակ էր արտայայտվում: շուտով հնչուեցան երգեր ՚ի պատիւ հայրենեաց և ՚ի գովեստ Փրանսիայի քաջ որդւոց, որոնց

ոչ մի թշնամի չէր կարող ընդդիմանալ: ՞ Օերունի թառվմասը տհաճ կերպարանք ցոյց տուեց զինորների պարծենկութեան վերայ, բայց ՞ Էկը նոցա ձայնակից էր լինում և բոլոր կարողացածը անումէր, իւր հիւրերի զուարձութիւնը վերին աստիճանի հասցնելու համար: Բարեբաղդաբար շատ չէին հոգում ծեր թառվմասի մասին, որ իւր լուութիւնը այն հանգամանքով էր արդարացնում, թէ Փրանսերէն լեզուին այնքան հմուտ չէր, և այդ թոյլէր տալիս նորան միայն անց կացնել իւր ժամանակը այնպէս, ինչպէս որ կարող էր:

«Ղիսո՞ս», ասաց ՞ Էկը մօտ տասն և մի ժամի մօտերքում, «աղիսո՞ս, որ այն քաջ զինուրը, որ պահապան է կանգնած պարսպի վերայ, չէ կարող մասնակից լինել մեր ուրախութեանը: Գոնեա մի երկու շիշ գինի հարկաւոր է ուղարկել նորան»:

՞ Էկը լաւ էր ընտրել ժամանակը: Աթէ զինուրները գեռ անօթի լինէին, նոքա անշուշտ կը մերժէին ՞ Էկի առաջարկութիւնը, որովհետեւ գեշերապահի ծառայութիւնը այդ կերպով թեթևացնելը բոլորովին հակառակ էր խիստ զինուրական կարգին: Ակայն նոքա ամենքը այնպէս զուարթ, այնպէս ուրախ էին, միթէ այն խեղճ երիտասարդը, որին այս գիշեր էր հերթն ընկել պէտք է բոլորովին զուրկ մնար:

«Կարելի է ուղարկել նորան մի քանի շիշ», ասաց Փրանսուա Բօժուրը, որի աչքերը պայծառ 9\*

փայլումէին: «Կեցցէ՛ մեր բարեկամ ջէկը, որ բացակայ բարեկամներին անդամ չէ մոռանում»: Օինւրոները ձայնակից եղան «կեցցէ» - ին և 'ի պատիւ ջէկի դատարկեցին իւրեանց բաժակները մինչև յատակը: Մինչև սոցա կրկին լցուելը ջէկը առաւ երկու շիշկուն տակը և կամենումէր գուրս տանել: Իայց Փրանսուան այդ թոյլ չը տղւեց: «Լա մօտ կանչեց մի երիտասարդ զինւորի և սորա ձեռքով ուղարկեց: Ջէկը չ'ընդդիմացաւ գորան և հաճութեամբ ծիծաղեց յոջողուած խորամանկութեան վերայ, իսկ ծեր թառվասը ուրախութիւնից ձեռները տրորումէր սեղանի տակը: Դուրս ուղարկուած շիշերը պարունակումէին մի քնարեր ըմպելիք, որ խառնած էր գինու հետ: Երբ գիշերապահ զինւորը նոցա դատարկեց, մի արգելք ևս, և այն նշանաւորներից մինը, արդէն հեռացրած էր: Մինչայս, մինչ այն, ինձոյքը ևս ունեցել էր իւր աղղեցութիւնը: Դէմքերը կարմրել էին, խօսակցութիւնը քանի գնումէր, աւելի կենդանանումէր, երգը հնչվումէր աւելի բարձր և ուժեղ, և տեղ կային մի քանի քաջեր, որոնց ուշբը արդէն կիսով չափ ընկղմած էր քաղցր գինու մէջ:

«Եյժմ ժամանակն է», հծծաց թառվասը ջէկի ականջին: Դմ ժամացոյը ցոյց է տալիս տասներկուսի քառորդը»:

Ջէկը գլխով արեց, հրամայեց ոտի կանդնած

մառանապետին մի խումբ շիշեր ևս բերել և, բերսոքա բերուեցան, վեր կացաւ աթոռից:

«Դարեկամնե՛ր, մենք այժմ պէտք է բաժանուենք միմեանցից, թէև այդ շատ ցաւալի է ինձ համար», ասաց նա, «իսկոյն կը զարկէ տասներկուժամը, և դուք դիտէք, որ փոստը չէ սպասում»:

«Եոյն բոպէին վեր կացաւ և ծեր թառվասը, վեր առաւ իւր կապոցը և դատարկեց իւր հրաժարական բաժակը քաջ ֆրանսիացի զինւորների կենացը: Օինւրոները կամենումէին թառվասին ու ջէկին չը թողնել, իսկ երբ նոքա հաստատապէս մերժեցին մնալը՝ ուղեկից լինել նոցա: Ջէկը զարհուրեցաւ, որովհետեւ այդ կարող էր բոլոր նախագիծը ունայն անց կացնել: Իայց թառվասը արագ կշռադատելուց յետոյ իսկոյն պատասխանեց աղճատած ֆրանսերէն լեզուով: «Չուղեկցել պարոնները: Մինք շատ տիրել եթէ ինձոյքը խանգարել: Հարունակեցէ՛ք իսմել ու երգել իսկ իմ բարեկամ ջէկը յետ գալ ուրախութեանը մասնակից լինելու»:

«Եորա շարժուածքը այնպէս վճռական էր, որ նորա կամքին հնազանդեցան. Թառվասն ու ջէկը արագ գուրս թռան սենեակից: Օինւրոների որոտածայն «կեցցէ» - ն հնչուեցաւ նոցա յետեկից: Դուրսը թառվասը կանգնեց ու ականջ գրեց:

«Իանը լաւ է, պատանիս», ասաց նա յետոյ:

«**Ա.Յ.Մ.** սենեակում գտնուողները մեզ չեն խան-  
գարիլ: **Ա.Յ.Ժ.Մ.** յառաջ»:

«Եղա պատեցին աշտարակի շուրջը, մինչև որ  
հասան այստեղ, ուր ֆանը բարախող սրտով սպա-  
սումքը նոցա գալուն: **Լ.** ուսինը պայծառ փայլու-  
մէր, և սորա լուսով բարեկամները տեսան, որ գի-  
շերապահը, հրացանը կողքին դրած, հանդիստ  
պարկած էր գետնին:

«**Ա.Մ.Է.Ն.** բան լւա է, ֆէկ», հծծաց ծերունի թառվ-  
մասը: «**Ա.Յ.Ժ.Մ.** ձեռքդ ա՛ս աղեղը»:

ֆէկը արգէն երեկոյեան թագցը էր այն թփե-  
րի մէջ և իսկոյն դուրս հանեց:

«**Տու՛ր ինձ նետը», ասաց նա հանդարտ:  
«Թառվմասը բաց արեց իւր կապոցը և հանեց  
նետը, որ ֆէկը իսկոյն աղեղի վերայ դրեց և կարճ  
միջոցեց յետոյ արձակեց: **Լ.** ետը յաջողութեամբ  
հասաւ իւր նպատակին: ֆանը երևեցաւ պատու-  
հանի վերայ և նշան տուեց, որ արթուն է:**

«**Ա.Յ.Ժ.Մ.** տու՛ր ինձ պարանը», ասաց ֆէկը:

**ՈՒՒԻ.** վայրկեանում կապեցին սորան թելի ծայ-  
րից, և ֆանը քաշեց այն դէպ ՚ի ինքն: Նետե-  
ւեալ վայրկեանում նա խորտակեց իւր պատուհա-  
նի երկաթէ սիւները, զգուշութեամբ ամրացրեց  
պարանը պատուհանի շրջանակի վերայ և դուրս ե-  
կաւ բանդից: **Ակզբում** բարեկամները երկիւղով է-  
ին նայում նորա վերայ, որովհետև աշտարակը  
բարձր էր, և միակ սիսալմունքը կարող էր ֆանին

կեանքից զըկել: ֆայյց ֆանը ՚ի զուր չէր առել  
ծովագնացի ուսումը: **Ակիւռի** պէս արագ ու ճար-  
պիկ վայր մադլցեց նա պարանի վերայով և յաջո-  
ղութեամբ հասաւ գետնին: **Ա.Յ.Ժ.Մ.** միայն պարիսպն  
էր գտնիում նորա և ազատութեան մէջ տեղը: ֆէ-  
կը վեր առաւ մի քար, որից մի այլ թոկ էր կա-  
պած, և ձգեց այն պարսպի միւս կողմը: ֆանը  
բռնեց նորանից և յաջորդ վայրկեանում երևեցաւ  
պարսպի վերայ:

«**Իւնի՛ր**», ձայն տուեց ֆէկը հանդարտ և ձգեց  
նորան մի երկաթ, որ վերելը ունելիք, իսկ ներ-  
քելը պատուակ ուներ: ֆանը առաջին անգամ չը  
կարողացաւ բռնել, բայց երկրորդ անգամ այդյա-  
ջողեց նորան: «Ա, ցցեց երկաթը պարսպի մի ճեղ-  
քի մէջ, կապեց նորանից պարանը և արագ վայր-  
իջաւ իւր բարեկամների մօտ: ֆէկը արգէն ցնծու-  
թեամբ նորա առաջն էր վաղում, բայց յանկարծ  
երկաթը, որ ֆանը շտապելուցը լաւ չէր ամրաց-  
րել, դուրս ընկաւ և վայր ընկաւ քնած պահապա-  
նի քմի վերայ: **Օ** ինւորը ցաւեց զարթեցաւ և  
բնադրմամբ (ինստինկտով) արձակեց հրացանը:

«**Աստանի** ոտը կոսրուի, այդ մէզ հարկաւոր  
չէր», զարհուրած բացականչեց ծեր թառվմասը:  
**Ա.Յ.Ժ.Մ.** մենք պէտք է յանձնենք մեզ մեր ոտների  
արագութեանը: Յառաջ»:

ֆէկը բարձրացրեց ֆանին գետնից, որովհետև  
նա թռչելիս վայր էր ընկել, և երեքն ևս սկսան


վաղել, որքան ներումէր նոցա ոտների արագութիւնը: Բայց նոցա հետքը արդէն գտել էին: Օ, ին-  
ւորները գուրս թռան պահապանի սենեակից և ըն-  
կան փախստականների յետևից բարձրածայն աղա-  
ղակներով: Լուսինը, որ մինչև այժմ սոցա հաւա-  
տարիմ օգնականն էր, այժմ դարձաւ նոցա մատ-  
նիչը, և նոցա բաղդն էր, որ հալածողները փոքր  
ինչ հարբած էին: Հատերը սայթաքումէին և վայր  
էին ընկնում, և միայն երեքին կամ չորսին յաջո-  
ղեցաւ ոռքի վերայ մնալ:

«Երկու ըոպէ միայն գիմացէ՛ք», ձայն տուեց  
թուվմասը գէպ 'ի երկու պատանիքը: «Այնտեղ՝  
ծովի խորշում գտնվումէ մեր մակոյկը, և երբ մենք  
նորան հասնենք, կարող ենք արհամարհել հալա-  
ծանքը»:

«Քամու արագութեամբ յառաջ էին վազում փա-  
խստականները, բայց հալածողները ևս յետ չ'է-  
ին մնում նոցանից: Ծնչասպառ հասան, 'ի վերջոյ,  
առաջինները մակոյկին:

«Ե՞րս թռիր», ձեր թուվմաս, աղաղակեց ջէ-  
կը գէպ 'ի նա: «Խնձ համար հոգս մի՛ քաշէք, ես  
կը հասնեմ ձեր յետևից»:

Թուվմասն ու ջոնը հնազանդեցան, ջէկը բաց  
արեց այն շղթան, որով նաւակը կապած էր ա-  
փից, և կամենումէր իսկոյն թռչել: Կա զարկ տուեց  
մակոյկին, պատրաստուեց թռչելու, բայց յան-  
կարծ երկու ուժեղ ձեռք յետ պահեցին նորան:



Ա՞ի վայրկեան շշմեցրեց նորան երկիւղը, բայց յետոյ ուժեղ շարժուածքով նա դուրս պրծաւ իւրեան բռնող զինւորի ձեռքից, մի բռնցի հարուած տուեց սորա երեսին և առանց ուշացնելու ընկաւ ջուրը:

Լաւ ժամանակ աղատուեցաւ նա, որովհետեւ գեռ չէր դուրս եկել իւր վերայ գեղուող ալիքների միջից, երբ ծովեղը լցուեցաւ նոր հալածողներով, որոնց գէմ նա ոչինչ չէր կանող անել, եթէ միայն բռնուէր: Փրանսիացիք գոռումէին, աղաղակում ու հայհոյանք էին թափում նորա յետեից, բայց ոչ մինը նոցանից չէր կարողանում կամ չէր կամենում լողալ խոկ իւրեանց հետ զէնք առնելու մասին նոքա մտածել անգամ չէին, լսելով հրացանի թընդիւնը, որ այնպէս յանկարծ վրդովել էր նոցա խնձոյքի ուրախութիւնը: Այսպէս, Թէկը յաջողութեամբ հասաւ մակոյիին և ծեր Ծառվմասի օգնութեամբ հեշտութեամբ բարձրացաւ նորա վերայ:

«Այժմ յառա'ջ», ասաց նա և վեր առաւ մի թի: «Ո՞նչեւ նոքա մի մակոյի կը գտնեն, մենք պէտք է բաց ծովումը լինենք»:

Երեքն ևս՝ Ծառվմասը, Թէկը և Թօնը, այնպէս էին թիավարում, որ նոցա ձեռքերի կաշինքերթվումէր, և կայծակի արագութեամբ հեռանումէին ֆրանսիական ափից: Ծառեւ նոցա սրտերը լի էին, բայց ոչ ոք մի բառ չէր խօսում, մինչև որ ալեկոծուած ջրի մի մեծ տարածութիւն չէր գըտընվում նոցա ու հալածողների մէջ տեղը: Առա-

Հինը ցնծութեան ձայն արձակեց ջ օնը, կրկին յա-  
ջողութեամբ ազատուելու ուրախութիւնից գրգուած՝  
գրկախառնեց իւր բարեկամ ջ էկին և աղաղակեց.  
«ջ էկ, եթէ ես երբ և իցէ մուանամ քո այդ  
բարեկամական գործը, դու իրաւունք ունես ինձ  
խարեբայ անուանել: Իայց համբերի՛ր, դորա փո-  
խարէնը ես յետոյ կը հատուցանեմ քեզ. մինչև այ-  
ժը դու խեղճ միշման էիր, բայց ես, ես կամ-  
նումեմ քեզ հարուստ և երևելի պարոն դարձնել»:

ջ օնը մտածումէր այն միայնացած, խորհրդա-  
ւոր ծերունու մասին, որ կենումէր Բաննիկաստլէ  
ամրոցի մօտ գտնուած տնակում: Իսկ ջ էկը կար-  
ծումէր, թէ գերութիւնից ազատուելու ուրախու-  
թիւնը փոքր ինչ շփոթել էր ջ օնի միտքը, ուս-  
տի և առանձին ուշադրութիւն չը դարձրեց նորա  
խօսքերի վերայ:

«Ես ուրախ եմ, որ մեր գործը յաջողեց, ջ օն»,  
ասաց նա: «Ո՞նք այժմ ազատ ենք: Իմ պատճա-  
ռով դու գերի ընկար, և ես դարձեալ աղատեցի  
քեզ, կամ գոնեա իմ բաժինը արեցի դորա համար:  
Եթէ ծեր թուվմասը եկած չը լինէր, դու անշուշտ  
գեռ նստած կը լինէիր այն անիծեալ աշտարակում:  
Իայց այժմ, կեցցէ, մենք խաղը տարանք»:

ջ օնը ձայնակեց եղաւ այդ ուրախութեան ա-  
ղաղակին, անհամար անգամ ցնցեց շնորհակալու-  
թեամբ իւր բարեկամի և ծեր թուվմասի ծեռքը և  
յետոյ մանրամասնաբար պատմել տուեց, թէ ինչ-

պէս էր սկսուել ու գլուխ բերուել այդ վտանգա-  
ւոր գործը: Ծառվման ու ջ էկը պատմեցին նորան  
բոլորը, և ջ օնը սրտանց ծիծաղեց, լսելով թէ  
ինչ սրամութեամբ նոքա գերազանցել էին ուրիշ  
գէպերում այնպէս խորամանկ Գրանսիացիքին  
անգամ:

Ո՞ր և նոյն ժամանակ նոքա երեքն ևս թիավա-  
րումէին ամբողջ գիշերը: Առաւօտը նոքա նկատե-  
ցին մի, անգլիական նաւ, որ մի և նոյն ուղղու-  
թեամբ էր ընթանում, և շուտով հասաւ նոցա:  
Երբ նա բաւական մօտեցաւ, ջ օնն ու ջ էկը ճա-  
նաչեցին Արեթուզան՝ այն նաւը, որին նոքա պատ-  
կանումէին, և ուրախութեամբ ընդունուեցան սորա  
վերայ: Լէյտենանտ Հափերֆիլդը ամէնից աւելի  
էր ուրախ այդ յաջողուած քաջագործութեան վե-  
րայ. որ կատարել էին նորա մատաղահաս բարե-  
կամները, և երբ ջ օնը Անգլիա հանելիս թուլա-  
մութիւն խնդրեց իւր և ջ էկի համար, նա իս-  
կոյն տուեց այդ:

«Գնացէ՛ք», ասաց նա: «Քո հայրը, ջ օն,  
կ'ուրախանայ քեզ կրկին տեսնելով, ջ էկին ևս հա-  
ճութեամբ կ'ընդունէ նա, իբրև իւր որդու պա-  
տարարին: Երբ Արեթուզան հրաման կ'ստանայ նա-  
ւարկելու, ես այդ ձեզ կը գրեմ. իսկ մինչև այդ  
ժամանակը դուք կարող էք անվրդով վայելել ձեր  
աղատութիւնը»:

ջ էկն ու ջ օնը այդպէս արձակուրդ ստանա-

լով, նստեցան ծեր Յառվմասի հետ, որի քսակը դեռ ևս լի էր, չորս ձի լծած մի կառք, և արագ սլացան դէպ՚ի Բօննիկաստլէ ամրոցը: Այդ մի զուարձալի գնացք էր, և նորա յաջողութեամբ հասան իւրեանց ճանապարհորդութեան նպատակին: «Օեր կոմմոդորը արտասուքը աչքին դրկախառնեց իւր Յօնին և սեղմեց հաւատարիմ Յէկի ձեռքը, անկեղծօրէն ասելով նորան այս խօսքերը «Շնորհաւոր լինի քո իմ տուն գալը, Յէկ: Ես յըս ունեմ, որ գու ինձ իբրև հայր կ'ընդունես, որովհետեւ իմ կողմից ես երջանիկ եմ, որ այժմ մի որդու փոխանակ երկուսն ունեմ: Այո՛, Յէկ, գու որդուս հաւատարիմ ընկերդ, այնպէս սիրելի ես իմ սրտին, իբրև թէ նորա եղբայրը լինէիր»:

Այդպիսի հանգամանքներում, ընական բան է, Յէկը շատ շուտով այնպէս զգաց իւր անձը Բօննիկաստլէ ամրոցում, ինչպէս իւր տանը, և առանձին ասաց Յօնին. «Լսի՛ր, քո հայրը ինձ չափազանց դուք է գալիս: Երանի՛ թէ Արեթուզան կէս տարու չափ անգործ մնար: Ես առ այժմ ամենելն ցանկութիւն չ'ունեմ նորա վերայ վերադառնալ»: «Ես ևս նոյնպէս», պատասխանեց Յօնը ժպտալով, որովհետեւ ես այստեղ մի քանի բաներ ունեմ անելու, որոնք պտտումեն սրտումս»:

Յէկը այլ ևս չը մտածեց Յօնի խօսքերի վերայ, որոնք, նորա կարծիքով, աւելի ուրիշներին էին վերաբերում, քան թէ նորան, և երեկոյեան

ծեր Յառվմասի ու Յօնի օգնութեամբ պատմեց կոմմոդորին բարեբաղդաբար յաջողուած փախուստի պատմութիւնը, որին պ. Արելբուրնէն մեծ ուրախութեամբ ականջ դրեց: Յէկը մի ուրախ և վայելչակաղմ երիտասարդ էր. նա այնպէս գուր եկաւ կոմմոդորին, որ սա ասաց նորան ու Յօնին. «Որդեակներս, ես կը ցանկանայի, որ Արեթուզան շուտով դարձեալ չը նաւէ: Դուք, ուրախ պատանիք, իմ ծերացած սիրտը դարձեալ մատաղացնումեք. Դուք չը պէտք է ինձնից հեռանաք, մինչև գնալու վերջին րոպէն չը հասնի»:

Ծերունի կոմմոդորի այդ վճռի վերայ չափազանց ուրախացած, երկու միջմանները պարկեցին քնելու և այնպէս անյշշքնեցին, ինչպէս կարող են քնել այն մարդեկը, որոնք, զանազան ահաւոր վրտանգներից ազատուելով, ապահով նաւահանգիստն էին հասել:

Արեկի շողբը արդէն վաղուց ընկել էր սենեակը բարձր, կամարակապ պատուհանների միջով, երբ, ՚ի վերջոյ, ծերունի կոմմոդորը եկաւ երկու քնառէրներին անկողնից վեր կացնելու: Ուրախութեամբ վեր թռան նորա և հաստատ որոշեցին այն և հետեւեալ օրերը բոլորովին նուիրել զուարձութեան, որին Յօնը կարծումէր, թէ ինքը աւելի արժանացել էր իւր մի քանի շաբաթ շարունակուած, զրկանքներով լի գերութեամբ:

ԳԼՈՒԽ ԵՇԹԱՆԵՐՈՐԴ:

ԶՈՆԸ ԲԱՑՈՒՄԿ ԳԱՎԱՆԻՔԸ:

Այրենի օթևանը վերադառնալուց յետոյ առաջին օրերը կոմմոգորը մի վայրկեան ևս աչքից չէր հեռացնում իւր որդուն, այս պատճառով և ջննը ոչինչ միջոց չէր գտնում իւր՝ ջէկին վերաբերեալ գաղափարը գլուխ բերելու։ Ի վերջոյ, մի առաւտ նա կանուխ վեր կացաւ, գուրս եկաւ ամրոցից ոտների ծայրերով, որ ոչ ոքի չը զարթեցնէ, և ուշագրուեցաւ դէպ ՚ի խորհրդաւոր տունը։ Աէս ժամից յետոյ նա հասաւ այնտեղ, առաջուայ պէս մագլցեց պարսպի վերայ և ծածկուեցաւ թփերի մէջ, սպասելու պառաւ աղախնին, որ, նորա առաջուց լսած խօսակցութեանը նայելով, պէտք է ձիշդ տեղեակ լինէր իւր պարոնի հանգամանքներին։ Ջննը ամենեին մտադիր չէր այս անգամ ծած-

կուած մնալ, այլ կամենումէր, հենց որ պառաւը գուրս գար, խկոյն խօսել նորա հետ, բացայայտ ասել նորան, ինչ որ գիտէր, և, բոլոր գալոնիքը նորանից իմանալու համար, յայտնել թէ իւր կարծիքով պարոնի թոռը գտնուել էր։

«Եթէ լորդը յիրավի ցանկանումէ նորա մասին հոգ տանել», ասաց նա ինքն իւրեան, «այն ժամանակ նա ինձ բոնի չի հալածիլ իւր բակից, իբրև թշնամու, այլ իւրև բարեկամ կ'ընդունէ ինձ քաղաքավարութեամբ և սրտումը անշուշտ շնորհակալութիւն կ'անէ այն տեղեկութեան համար, որ կարող է յետ դարձնել նորա հոգւոյ խաղաղութիւնը»։

Պահանջնը երկար չ'սպասեց, և աղախնը գուրս եկաւ։ «Եա իսկոյն մօտեցաւ նորան և խօսեց նորա հետ, ուշագրութիւն չը գարձնելով այն զարմոնքի վերայ, որով նա ընդունեց իւր անակնկալ ու անկոչ հիւրին։

«Լացէ՛ք», ձայն տուեց Պահանջնը դէպ ՚ի նա, երբ նա կամենումէր արագ հեռանալ։ «Ես պէտք է ձեզ հետ խօսեմ և չեմ հեռանալ այստեղից, մինչև որ գուք ինձ ականջ չը դնէք»։

Եղախնը ձգեց նորա վերայ մի մոայլ սպանալից հայեացք։

«Կնացէ՛ք, հեռացէ՛ք խկոյն, երիտասարդ պարոն», ասաց նա խստութեամբ։ «Դուք իրաւունք

չունէք այստեղ ներս մտնել և եթէ իմ տէրը  
զարթնի» . . .

«Եա, շատ կարելի է, կը փորձէ ատրճանակով  
դուրս վանել ինձ այստեղից», լրացրեց ջանը, երբ  
աղախինը դադարեց խօսելուց: «Բայց այդ ոչինչ,  
հրաձգութիւնը ամէն անգամ չէ յաջողում, բացի  
դորանից, ես վէրքից չեմ վախենում իմ ամենալաւ  
բարեկամին մի ծառայութիւն անելու համար: Անե-  
ցէք ինձ հանգստութեամբ, բարի տիկին, և երբ  
դուք ամէն բան կ'իմանաք, շատ կարելի է, այդ-  
շափ խեթ չէք նայիլ իմ ներս գալու վերայ»:

Ջանի բոլոր շարժուածքի վերայ մի այնպիսի  
բան կար, որ կատարեալ վստահութիւն ներշնչեց  
աղախինուն: Այս դանդաղեցրեց իւր գնացքը, կանգ  
առաւ, ուշադրութեամբ նայեց ջանի վերայ և տե-  
սաւ, որ ինքը գործ ունէր ոչ թէ մի շրջմոլիկի  
կամ մի հետաքրքիր տղայի, այլ մի պատուաւոր ե-  
րիտասարդի հետ:

«Օ՛, պարոն», ասաց նա, «դուք մեծ անիրաւու-  
թիւն էք արել այստեղ ներս մտնելով: Աակայն՝  
ինչ և լինի ձեր դիտաւորութիւնը, ես պատրաստ  
եմ ձեզ լսել: Խօսեցէք, ուրեմն, — բայց շտա-  
պով — որովհետեւ երկար չի տեկիլ, և իմ թշուառ  
տէրը դուրս կը դայ»:

Ջանը գլխով արեց պառաւ աղախինուն, որ սա  
թփերի մէջ գայ, և յետոյ ասաց հանգստութեամբ.  
«Բարի տիկին, ձեր տէրը անկասկած հաճութեամբ

կ'ընդունէ ինձ, եթէ իմանայ, որ ես լուր եմ բե-  
րել նորա կորած թուան մասին»:

«Ես սէր Աստուծոյ ասացէք, ո՞րտեղից գիտէք  
դուք այդ», հարցրեց աղախինը վերին աստիճանի  
վրդովուած:

«Ես բոլոր գիտեմ», պատասխանեց ջանը, և  
որովհետեւ նա պատճառ չունէր որ և իցէ բան ծած-  
կելու, այս պատճառով և ծշգութեամբ պատմեց,  
թէ ինչպէս էր լսել այն տան ծեր պարոնի գաղտ-  
նիքի մի մասը: Վախինը ըստ երկութիւն հան-  
գլստութեամբ էր լսում նորան, թէ ևնորա փոփոխ-  
ուող երեսի գոյնը պարզ ցցց էր տալիս, թէ նա  
ջանի պատմութեան ժամանակ այնպէս անտարբեր  
չէր, ինչպէս ձևանումէր:

«Լ՛Հ, յետոյ», հարցրեց նա:

«Յետոյ», պատասխանեց ջանը: «Ես ճանա-  
չումեմ ձեր պարոնի թուանը, և եթէ նա կը ցան-  
կանայ իւր յանցանքի մի մասը քաւել, այն ժամա-  
նակը ես իմ բարեկամ ջէկ Ուօբինզնին կը բե-  
րեմ նորա մօտ»:

«Ջէկ Ուօբինզն», մրմնջաց պառաւ կինը: «Եա  
է: Ի՞նչպէս կարող էր այս պատանին այդ անունը  
իմանալ, եթէ նորան ծանօթ չը լինէր այն անձը,  
որին այդ անունը պատկանումէ: Եա մտածեց մի  
վայրկեան և յետոյ ասաց ջանին. «Ճէրէք նորան  
այստեղ և յետոյ մենք կը տեսնենք, թէ ինչ կա-  
րելի է անել»:

«Ո՛չ. այդ անկարելի է, մինչև որ ես բոլորովին հաւաստի չը լինեմ իմ գործին», պատասխանեց ջննը: «Բացե՞նք մեր սրտերը միմեանց առաջը: Ես կը հաղորդեմ ջէկի պատմութիւնից այն, ինչ որ ես նորա բերանիցն եմ լսել, և յետոյ գուք ինձ պատմեցէ՞ք, ինչ որ գիտէք նորա մօր ու հօր մասին, որին խեղճ տղան այլ ևս երբէք չի տեսել այն օրից սկսած, երբ նորա անգութ պապը նորան ու նորա խեղճ մօրը թշուառութեան մէջ է ձգել»:

Պառաւ աղախնի սիրտը խոր շարժուեցաւ: «Ես տեսնում եմ, որ դուք ինձ չէք խարում», ասաց նա: «Խօսեցէ՞ք, ուրեմն, ես ձեզ խօսք եմ տալիս, որ ձեր վստահութեան փոխարէնը ես կատարեալ և անկեղծ վստահութեամբ կը հատուցանեմ ձեզ»:

Ջննը պատմեց բոլորը, ինչ որ լսել էր ջէկից, և մանաւանդ աւելի մանրամասնաբար հաղորդեց սորա այն յիշողութիւնները, որոնք վերաբերումէին նորա մանկութեանը: Աղախնը լսումէր ջննին առանց ընդհատելու և երկար ժամանակ լացից մի խօսք չէր կարողանում ասել, երբ նա իւր պատմութիւնը աւարտել էր:

«Այդ բոլորը պատահած է», ասաց նա յետոյ: «Ես այլ ևս չեմ կարող կասկածել, որ մենք գտել ենք մեր վաղուց որոնած մանկանը, և Աստուած տայ, որ այս լուրը կարողանայ միիթարել ու քաջալերել ծերունու խոր խոցուած սիրտը: Այժմ

լսեցէ՞ք, ինչ որ ես գիտեմ, և յետոյ մենք կը մտածենք, թէ ինչ պէտք է անել»:

«Իմ տէրն է լորդ Լօննիմօրէն, մի անուն, որ ձեղ անկասկած ծանօթ է: Խեղճ տէրս, քանի տարի է, իւր անչափ հարստութեամբ չէ կարողանում մի ուրախ ժամ գնել: Պատանի լորդ Լյոնստը՝ նորա միակ որդին, մի բարի ու քաջ երիտասարդ էր, և միայն մի բանում անհնազանդ գտնուեց իւր հօրը: Լօննիմօրէ լորդը կամենումէր նորան պապէլ մի հարուստ օրիորդի հետ, բայց լորդ Լյոնստը հրաժարուեցաւ այնպիսի հաստատամտութեամբ ու յամառութեամբ, որ նորա հօր սիրտը կասկած ձգեց, որ և ձիշդ հետազօտութիւնից յետոյ հաստատուեցաւ: Լօրդ Լյոնստը արդէն մի քանի տարի առաջ գաղտնի ամուսնացել էր մի չքառոր, բայց առաքինի ու գեղեցիկ մատաղահաս տիկնօջ հետ, և սա այն կինն էր, որի պատճառով Լյոնստի հայրը թէ նորան և թէ բոլոր միւսներին թշուառութեան մէջ ձգեց: «Որա բարկութիւնը, նորա կատաղութիւնը գէպ ՚ի Լյոնստը անպատճէլի էր, բայց աւելի սաստիկ էր նորա ատելութիւնը գէպ ՚ի իւր օրդու անմեղ ամուսնուհին: Որան իսպառ կորցնելու համար, նա զսպեց իւր կատաղութիւնը և մի օրյանձնեց իւր օրդուն այնպիսի մի ծանր գործ, որ նորան ամբողջ շաբաթներով պէտք է հեռացնէր հայրենիքից: Լյոնստ լորդը յանկարծ պէտք է ձանապարհ ընկնէր, և հայրը աչքից չէր հեռացնում

Նորան մինչև նորա Անգլիայից դուրս գալը: Այն  
միջոցին, երբ լօրդ Լյոնստը նաւումէր գէպ 'ի հե-  
ռաւոր Արևելքան Հնդկաստանը, նորա հայրը ոս-  
տիկանութեան պաշտօնեաների հետ գնաց գէպ 'ի  
ինեղ կնօջ ընակարանը, սպառնացաւ նորան, թէ  
ինքը իւր որդուն կը զրկէ ժառանգութիւնից, եթէ  
նա յօժարակամ չէր բաժանուիլ իւր որդուց, և այն-  
պէս վախեցրեց տարաբաղդ կնօջը, որ սա յանձն  
առաւ երկրի մի հեռաւոր մասում ծածկուած ապ-  
րել: Կօննիմօրէ լօրդը նորանից երգումն առաւց որ նա  
երբէք տեղեկութիւն չի տալ իւր և իւր մանկան  
մասին, և յետոյ տուեց նորան մի գումար, որի տո-  
կոսիքով թշուատ կենը կարող էր աղքատութեամբ  
իւր կեանքը պահպանել: Կօննիմօրէ լօրդը յաղ-  
թեց. բայց ա՛խ, նորա անգետութեան պատիժը չ'ու-  
շացաւ: Ո՞ստ կէս տարուց յետոյ վերագարձաւ լօրդ  
Լյոնստը, շտափեց գէպ 'ի իւր կալուածքը, որտեղ  
թողել էր իւր կնօջն ու որդուն, և տեսաւ, որ եր-  
կուսն ևս չքացած էին առանց մի հետք թողելու:  
‘Աա իսկոյն զգաց, որ իւր հօր մատը իսառն էր  
այդ բանում, ուստի և նորանից բացատրութիւն  
պահպանեց այդ մասին: Ա'խ, մի զարհուրելի տե-  
սարան հետեւեց դորան: Կօննիմօրէ լօրդը, 'ի վեր-  
ջը, խստաբարութեամբ հալածեց որդուն իւր մօ-  
տից և հրամայեց այնուհետև իւր աչքին չերկել,  
մինչև որ չը դադարէր մտածել անգամ իւր ամուս-  
նու մասին: Լօրդ Լյոնստը գնաց: Ամբողջ տարի

նա հարց ու փորձ արեց իւր կնօջ ու մանկան մա-  
սին, բայց չը կարողացաւ նոցա բնակութեան տե-  
ղը գտնել, և, 'ի վերջոյ, լօրդ Կօննիմօրէն լուր  
ստացաւ, թէ նորա թշուառ որդին վշտից ու տըրտ-  
մութիւնից մեռել էր: Իւր խստասիրտ հօրը գրած  
նամակում նա թողութիւն էր խնդրում իւր յան-  
ցանքի համար և աղաչումէր հոգս քաշել իւր որ-  
բերի մասին, եթէ երբ և իցէ մի տեղեկութիւն  
ստացուէր նոցա վիճակի վերայ:

Երբ լօրդ Կօննիմօրէն այդ նամակը ստացաւ և  
լսեց, թէ իւր որդին յիրաւի մեռել էր, խստու-  
թիւնն ու յաղթանակի ուրախութիւնը չքացան, և  
դառն զզչումը մտաւ նորա սիրտը: Այժմ, երբ ար-  
դէն ուշ էր, նա ամէն բան յանձն կ'առնէր, եթէ  
կարողանար դորանով իւր որդու կեանքը յետ գարձ-  
նել: Բայց ինեղ լօրդ Լյոնստի աչքերը յաւիտեան  
փակուած էին, և նորա հօրը ուրիշ ոչինչ չէր  
մտաւ, եթէ ոչ գոնեա իւր որդու ընտանիքի մա-  
սին անել այն, ինչ որ գեռ կարելի էր անել: ‘Աա  
համարեա’ թէ լօրդ Լյոնստից աւելի եռանգով հարց  
ու փորձ արեց անհետ չքացածների մասին, բայց  
բոլորը 'ի զուր անցաւ, որովհետև ինեղ կինը, ինչ-  
պէս ես այժմ ձեղանից տեղեկացայ, պարոն, մի  
բոլորովին անձանօթ անուն էր առել իւր վերայ: Ո՞ի  
մույլ մելամաղձութիւնն տիրեց Կօննիմօրէ լօրդին:  
‘Աա փախչումէր այն բոլոր տեղերից, որոնք կա-  
րող էին նորա միտը ձգել նորա մեռած որդուն, և

առանձնացաւ այստեղ, որ բոլորովին անվրդովանց կացնէ իւր կեանըը տրտմութեան ու զղջման մէջ։ Խեղճ մարդ։ «Եա էլ երկար չէ կարող դիմանալ, որովհետև վիշտը ճիճուկի պէս կրծումէ նորա կեանքի արմատը։ Մի քանի շաբաթից յետոյ, կարելի է, հողը կը ծածկէ այն սիրտը, որին տրտմութիւնը արգէն վաղուց կոտրել է»։

Աղախինը լուեց, և ջնի սիրտը նորանից պակաս չէր շարժուած։

«Եյժմ ի՞նչ պէտք է անել», հարցրեց նա։

«Ես կը պատրաստեմ միլօրդին իւր թոռան տեսութեան համար», ասաց աղախինը, «և յետոյ — այսպէս, կէս օրից յետոյ — դուք եկէք նորա հետ այստեղ։ Եթէ միլօրդը կը ցանկանայ իւր թոռանը տեսնել, որի մասին ես չեմ կասկածում, որովհետև նա վաղուց արգէն փափագումէ նորա տեսութեանը, այն ժամանակ ես ձեզ նորա մօտ կը տանեմ, իսկ յետոյ մենք կ'ստուգենք, թէ սիստուած չենք արդեօք, և թէ ձեր բարեկամը իսկապէս լորդ Երնստի որդին է, թէ ոչ։

Ջնը բոլորովին հաւան կացաւ այդ նախագծին և հեռացաւ իւր բարեկամ ջէկին կարենը տեղեկութիւնները տալու։ Ջէկի սիրտը սաստիկ շարժուեցաւ ջնի բոլոր ասածներից, և նա ամենին չը հրաժարուեցաւ գնալ ջնի հետ այն տնակը։

«Ես չեմ կասկածում», ասաց նա, «որ միլօրդը

իմ պապն է, և թէպետ նա խեղճ մօրս շատ վիշտ է պատճառել, այնու ամենայնիւ ես հաւատարմութեամբ կ'սպասաւորեմ նորան, եթէ տեսնեմ, որ նորա զղջումը կատարեալ և անկեղծ է։ Իայց թէ նա ինձ իբրև իւր թոռն կ'ընդունէ, թէ ոչ, այդ այլ ինդիր է»։

«Եա այդ կանէ, որովհետև դու իրօք նորա թոռն ես», պատասխանեց ջնը։ «Եւ կասկածը, եթէ միայն այստեղ կարող է կասկած ծագել, հեշտ կը փարատուի, եթէ մենք քո ննամակալին այստեղ կանչենք և հրամայենք քո թշուառ մօրից մնացած բոլոր թղթերը հետը բերել։ Հասկանում ես, ջէկ»։

«Ես հա՛րկէ», պատասխանեց ջէկը մտածմունքի մէջ։ «Եւ ես՝ խեղճ միշտանս, առանց գրամի ու անուան, այսպէս յանկած հարուստ և երկելի ազնուական կը դառնամ»։

«Ենտարակո՛յս», ասաց ջնը ժպտալով, «և ես շնորհաւորումեմ քեզ այդ, սիրելի բարեկամ»։

«Իսկ ես, ես համբուրումեմ քո ձեռքը, ջն», ասաց ջէկը, որովհետև միայն քո շնորհիւն է, որ ես այսպէս անակնկալ կերպով արծաթ ու պատիւեմ ստանում։ Արդա՛րե, ջն, ես չը գիտեմ, ինչպէս հատուցանեմ քեզ դորա փոխարէնը»։

«Ո՛իտդ բե՛ր իմ գերութիւնը», պատասխանեց ջնը ժպտալով։ «Իսու ինձ աղատեցիր այնտեղից,

քո անձգ գերութեան վտանգին ենթարկելով։ Կարծեմայդ մի լաւ բարեկամական ծառայութիւն էր»։

«Այս՝, բայց ո՞վ գերի ընկաւ ինձ ազատելու համար», հարցրեց ջէկը։ «Դու, ջօն»։

«Լաւ։ Բայց ո՞վ էր հոգ տանում իմ մասին, երբ ես տկար ու վիրաւորուած էի։ — Դու, ջէկ»։

«Եշ ո՞վ էր ինձ մասնակից անում իւր քսակին, երբ ես ոչինչ չ'ունէի։ — Դու, ջօն»։

«Եշ ո՞վ էր բարեկամական մտերմութեամբ հոգ տանում իմ մասին, երբ ես Արեթուղան եկայ։ — Դու, ջէկ»։

Երկու պատանիքը ժպտեցան, նայեցին միմեանց վերայ լի անկեղծ սիրով և գրկեցին միմեանց։

«Տեսնում են, ջէկ», ասաց ջօնը, մենք չը պէտք է միմեանց հետ կշռուենք ու վիճենք։ Ամենալաւ բանը, որ դու ինձ երբ և իցէ արել ես, հենց այն է, որ դու ինձ քո բարեկամութիւնն ընծայեցիր»։

«Ես ևս նոյնն եմ կարծում, ինչ որ դու, ջօն», բացականչեց ջէկը և պինդ սեղմեց բարեկամին իւր կրծքին։

«Հաւատարիմ բարեկամութիւն մինչև վերջը — թող այդ լինի այսուհետեւ մեր նշանաբանը (գեվիեցը)։ Ամօթ կը լինի մեզ, եթէ մենք այդ մուանք, որովհետեւ առանց դորան — ինչ կը լինէր իմ վիճակը»։

«Այս՝, իսկ ի՞մը», աղաղակեց ջօնը։ «Առանց

քո բարեկամութեան ես, կարելի է, վաղ թէ ուշ մեռած ու թաղուած կը լինէի, որովհետեւ չէի կարող երկար գիմանալ այն անիծեալ աշտարակում։ Ուրեմն, բարեկամութիւն մինչև յաւիտեան»։

«Բարեկամութիւն մինչև յաւիտեան», կրկնեց ջէկը, և ձեռքի մի ուժեղ սեղմումն կնքեց պյտխոսումը։

Կէս օրն անցաւ, և ջօնը ճանապարհ ընկաւ ջէկի հետ։ Վղախինը արդէն սպասումէր նոցա և հսկոյն տարաւ նոցա լորդի մօտ, որ նուազ և թոյլ պարկած էր մահճակալի վերայ և հաղիւ այնքան ոյժ ունեցաւ, որ փոքր ինչ բարձրացաւ։

«Ո՞ս եկ, Եշնստիս որդի»։ ասաց նա նուազ ձայնով։ «Լաւ մօտեցիր ինձ. աչքս թոյլ է, բայց ես պէտք է լաւ տեսնեմ ու լաւ շօշափեմ քեզ, որ համոզուեմ, թէ Աստուած կամենումէ մահիցս առաջ այդպիսի մեծ ողորմութիւն ցոյց տալ ինձ»։

Ջէկը հնազանդեց ծերունու հրամանին, ծունկ չոգեց նորա առաջը և պատկառանքով համբուրեց նորա ձեռքը։

Կօննիմօրէ լորդը սուր նայեց նորա վերայ, յետոյ յանկարծ սաստիկ գունաթափուեցաւ և, թութովիլով՝ «Լաւ է։ Այս իմ որդու գծագրութիւնն է», ուշաթափուած յետ ընկաւ մահճակալի բարձերի վերայ։ Պառաւ աղախինը բարձրաձայն աղաղակեց սաստիկ երկիւղից, երկու պատանիքն ևս վրդովուած էին, որովհետեւ ամենքն

էլ կարծումէին, թէ լօրդ կօննիմօրէն զոհ էր եղել իւր զգացմունքի յուղմանը: Իսյց այդ երկար չը տեսեց, և ծերունին կրկին ուշի եկաւ, և այնքան ոյժ ստացաւ, որ ՞Էկին բազմաթիւ հարցեր առաջարկեց, որոնց սա ամենաճիշդ կերպով պատասխանեց:

«Փա՛ռք քեզ, Աստուած», ասաց, 'ի վերջոյ, ծերունին և տարածած բազուկներով ու շնորհակալ գէմքով նայեց դէպ 'ի երկինք — «Փա՛ռք քեզ, բարերար Աստուած, դու մահիցս առաջ բաց ես անում ինձ համար քո ողորմութեան դուռը և թոյլ ես տալիս քո ծառային խաղաղութեամբ գերեզման մտնել: Կայտ քո գթութեան նշանն է, որ մահիցս առաջ ուղարկումես ինձ նորան, որի թողութեանը ես ամենից աւելի կարօտ էի աշխարհիս երեսին: ՞Էկ, թոռու», ասաց նա, դառնալով դէպ 'ի խոր չարժուած պատանին: «Կերի՛ր ինձ քո զզջացող պապին, բոլորը, ինչ որ ես արել եմ քո ծնողաց դէմ: ՞Օանր, ծանր էր իմ խստարտութեան պատիժը, և դառն էին այն արտասուքները, որ ես թափումէի, որովհետև Տիրօջ ձեռքը ծանրացել էր իմ գլխին: ՞Երի՛ր ինձ որդեակ, ների՛ր զզջացող ծերունուս»:

«Ծերունին իւր դողդոջուն ձեռքերը պարզեց դէպ 'ի ՞Էկ, պատանին չը դիմացաւ իւր զգացմունքին, արտասուալից աչքերով ընկաւ իւր պապի կրծքի վերայ: ՞Ոքա երկար մնացին գրկա-

խառնուած, և երկնքի խաղաղութիւնը վերագարձաւ ծերունու սիրուը, իսկ ՞Էկը բոլոր սրտից ներեց նորան այն անգթութիւնն ու չարիքը, որ նա պատճառել էր նորան և նորա ծնողացը:

(Օրը անցաւ պատմութիւնների ու բացատրութիւնների մէջ անցեալի մասին, և ՞օնը ստիպ ուած էր, 'ի վերջոյ, միայն վերադառնալ իւր հօր ամրոցը, որովհետև լորդ կօննիմօրէն չէր կարողանում կրկին բաժանուել իւր հաղիւ գտնուած թռուանից:

«Դու ինձնից էլ չես հեռանալ, ՞Էկ, քանի որ ես կենդանի եմ», ասաց ծերունին խնդրելով, և ՞Էկը չը կարողացաւ ընդդիմանալ այդպիսի սրտաշարժ խնդրին: Ա, ա մնաց և միայն խոստումն առաւ ՞օնից, որ սա միւս օրը կանուխ կը դայ նորան կրկին տեսնելու:


՞օնը եկաւ, նորա հետ և հայրը, որ կօննիմօրէ լորդին անկեղծօրէն առաջարկեց՝ իւր թռուան հետ թողնել տնակը և բնակուել իօննիկաստլէ ամսէն չունէր առանձնութեան մէջ իւր ցաւին անձնատուր լինելու, յօժարութեամբ ընդունեց հրաւէրը և գնաց ՞Էկի ու հաւատարիմ պառաւ աղախնի հետ պ. Անբուրնէր ամրոցը: Այստեղից մի կառք ուղարկեցին ՞Էկի խնամակալի յետեից, հրաւէրելով նորան գալ և հետը բերել ՞Էկի մօր թռողած թղթերը, և հրաւէրուածը անյապաղ կա-

տարեց այդ ցանկութիւնը: «Եորա գալուց յետոյ անհերքելի ստուգութեամբ երևեցաւ, որ ջէկի մայրը, յիրաւի, լօրդ Լյոնստի ամուսինն էր եղել, ուրեմն, և ջէկը, յիրաւի, կօննիմօրէ լօրդի թոռն էր, թէ և այդ բանում այլ ևս ոչ ոք չէր կասկածում: Ոչ ոք այնպէս ուրախ չէր ջէկի բաղդաւորութեան վերայ, ինչպէս նորա բարեկամ ջօնը, որ օգնել էր նորան այդ բազդին հասնելում. երկու պատանիքը կրկին անգամ նորոգեցին իւրեանց բարեկամութեան կապը, որ երբէք կտրուելու չէր, քանի որ նոքա կենդանի էին:

Կօննիմօրէ լօրդը այլ ևս երկար չը վայելեց իւր թոռան ազնիւ ու սիրալիր հոգատարութիւնը: Տրտութիւնը աւերել էր նորա առողջութիւնը, և երբ աշունը եկաւ, նա զգաց իւր երագահաս մահուան մօտենալը: «Ա, կազմեց իւր կտակը, անուանեց ջէկին իւր ահագին հարստութեան ժառանգ, կտակեց պառաւ աղախնին, որ նորա թշուառութեան մէջ այնպէս հաւատարմութեամբ ծառայել էր նորան, մի գումար, որով նա մինչև իւր մահը կարող էր անհոգ ապրել և, ՚ի վերջոյ, ջօնի հօրը՝ պ. Մելուրնէին, կարգեց ինամակալ իւր թոռան: Չորս շաբաթից յետոյ նա հանգիստ մեռաւ խաղաղութեան մէջ, և ջէկը լալով փակեց նորա աչերը:

ջօնն ու ջէկը երբէք չը բաժանուեցան մի-մեանցից: Կօննիմօրէ լօրդի մահից յետոյ շուտով նոքա վերագարձան իւրեանց նաւը՝ Արթուրազան, շատ տարի գերազանց ծառայութիւն արին իւրեանց հայրենիքին և, ՚ի վերջոյ, երբ պատերազմը արդէն վերջացած էր, և երկուսն ևս նաւապետութեան աստիճանին էին հասել խնդիր տուեցին իւրեանցը պաշտօնից արձակալու: Վմենամեծ գոյասանութեամբ նոցա քաջագործութիւնների մասին, տուեցին նոցա արձակման թուղթը, որը իւրեանց գրպանում դրած, նստեցան նոքա չորս ձի Ծածմի կառք և շտապեցին գէպ ՚ի Բօննիկաստլէ ամրոցը, որ այստեղ իւրեանց ներկայութեամբ ուրախացնեն յարգելի կոմմոնդորի՝ պ. Մելուրնէի, և ծերունի ղեկալարի՝ մօովմասի, կեանքի վերջին տարիքը: Վայնտեղ ամէնքը ապրումէին ուրախութեան ու խաղաղութեան մէջ, և չէր կարելի գըտնել աշխարհիս երեսին մի աւելի երջանիկ մարդ, քան թէ ջօնի հայրն ու ծեր ֆոովմասը, և մանաւանդ մէր երկու բարեկամները՝ ջէկն ու ջօնը, որոնց հաւատարիմ ու քնքոյշ բարեկամութիւնը խօսք ու զրոյց էր գարձել Բօննիկաստլէի բոլոր շրջակայքում:





ՀՀ Ազգային գրադարան



NL0177595

